Գրքի հրատարակությունը հովանավորել են
Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը
և «Մոնթե Մելքոնյան» հիմնադրամը

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРХЕОЛОГИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ АРМЕНИИ

16

УРАРТСКИЕ ПАМЯТНИКИ

ВЫПУСК
III

МОНТЕ МЕЛКОНЯН

УРАРТСКИЕ ПОГРЕБЕНИЯ В СКАЛАХ. ОПИСАНИЕ И АНАЛИЗ

❖

С. А. ЕСАЯН, Л. Н. БИЯГОВ, С. Г. АМАЯКЯН, А. Г. КАНЕЦЯН

БИАЙНСКАЯ ГРОБНИЦА В ЕРЕВАНЕ (2)

❖

А. С. ПИЛИПОСЯН, Л. Е. ХАЧАТРЯН

ВАНТОСПСКОЕ ПЕЩЕРНОЕ ЗАХОРОНЕНИЕ ГЕХОВИТА

❖

Р. А. МКРТЧЯН, П. С. АВЕТИСЯН

ПАЛЕОАНТРОПОЛОГИЧЕСКИЕ МАТЕРИАЛЫ ИЗ УРАРТСКИХ ПОГРЕБЕНИЙ В ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКОМ КОНТЕКСТЕ 8—6 ВВ. ДО Н. Э.

ИЗДАТЕЛЬ: ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ "АЙКАКАН БАНАК"
ЕРЕВАН 1995

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

16

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ԳՐԱԿ
III

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՅՌԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

❖

Ս. Ա. ԵՍԱՅԱՆ, Լ. Ն. ԲԻՑԱԳՈՎ, Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ, Ա. Գ. ԿԱՆԵՅՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԲԻԱՅՆԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԸ (2)

❖

Ա. Ս. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, Լ. Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԵՂՀՈՎՏԻ ՎԱՆՏՈՍՊՅԱՆ ՎԻՄԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԸ

❖

Ռ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Պ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ Մ. Թ. Ա. 8—6-ՐԴ ԴԴ. ՊԱՏՄԱՀՆԱԴԻՏԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ

A III
66'38

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
ԵՐԵՎԱՆ 1995

3

ԳՄԴ 63.4 (2Հ)
Մ 537

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա՝

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Ա. Ա. ԲԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Գ. Հ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ,
Է. Վ. ԽԱՆԶԱԴՅԱՆ, Ս. Ա. ԵՍԱՅԱՆ

Պրակի պատասխանատու խմբագիր՝
ՍԻՄՈՆ ԳԵՎՈՐԳԻ ՀՄԱՅԱԿՅԱՆ

THE ARCHAEOLOGICAL MONUMENTS AND SPECIMENS OF ARMENIA
16

MONTE MELKONIAN

URARTIAN ROCK-CUT TOMBS: A DESCRIPTION AND ANALYSIS

S. A. YESAYAN, L. N. BIYAGOV, S. G. HMAYAKIAN, A. G. KANETSIAN

A BIAYNIAN GRAVEYARD IN YEREVAN (2)

A. S. PHILIPOSIAN, L. E. KHATCHATRIAN

VANTOSPIAN ROCK-CUT TOMB AT GEKHOVIT

R. A. MKRTCHIAN, P. S. AVETISIAN

PALAEOANTHROPOLOGICAL MATERIALS FROM URARTIAN BURIALS IN THE HISTORICAL AND ARCHAEOLOGICAL CONTEXT OF THE 8TH—6TH CENTURIES B. C.

Մ 537 ՈՒրարտական ժայռափոր դամբարանները. նկարագրություն և վերլուծություն (Մոնթե Մելքոնյան (անգլերենից թարգմանեց Ա. Ս. Ժամկոչյանը)): Երևանի բիայնական դամբարանը (Ս. Ա. Եսայան, Լ. Ն. Բիյագով, Ս. Գ. Հմայակյան, Ա. Գ. Կանեցյան): Գեղհովտի վանտոսպյան վիմափոր դամբարանը (Ա. Ս. Փիլիպոսյան, Լ. Ե. Խաչատրյան): ՈՒրարտական դամբարանների հնամարդաբանական նյութերը մ. թ. ա. 8–6-րդ դդ. պատմահնագիտական կոնտեքստում (Ռ. Ա. Սկրտչյան, Պ. Ս. Ավետիսյան): —Եր.: Հրատարակիչ՝ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 1995, 107 էջ, 42 նկար: (Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 16, ՈՒրարտական հուշարձաններ, պրակ III):

Սույն պրակում քննության են առնվում ուրարտական վիմափոր դամբարանները, որոնք հայտնի են Արևմտյան Հայաստանի տարածքից, ինչպես և մեր հանրապետության տարբեր շրջաններից: Այստեղ հրապարակվում է նաև Երևանի բիայնական դամբարանի նյութը: Պրակում քննարկված են այդ դամբարանների հատակագծերի և հորինվածքների, ինչպես և հնամարդաբանական և հնագիտական նյութերի համատեղ վերլուծության հետ առնչվող բազմաբնույթ հարցեր:

Գիրքը հասցեագրված է հայ ժողովրդի, Հին Արևելքի մշակույթների, կրոնի և պատմության մասնագետներին:

Գրքի վերահրատարակության իրավունքը պատկանում է «Մոնթե Մելքոնյան» հիմնադրամին:

Պրակի վերջնապարդերի համար օգտագործված գրչանկարները վերցված են Բ. Բ. Պիոտրովսկու «Վանի թագավորություն» և «ՈՒրարտուի արվեստը» գրքերից:

ԳՄԴ 63.4 (2Հ)

© «Մոնթե Մելքոնյան» հիմնադրամ
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՅՌԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ
(1957—1993)

Ծնվել է 1957 թվականի նոյեմբերի 25-ին, Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքից 40 մղոն հեռու գտնվող Վայսելիա ավանում: Հաճախել է տեղի միջնակարգ դպրոցը: 1969—1970 թվականներին ընտանիքով ճամփորդել է Եվրոպայի և Միջին Արևելքի 41 երկրներում, այցելել է Արևմտյան Հայաստան՝ իր պապերի տունը: Այդ տարիքում Մոնթե Մելքոնյանը առաջին անգամ գիտակցել է իր հայ լինելը:

Վայսելիա վերադառնալուց հետո որպես առաջնակարգ աշակերտ 1973 թ. ուղարկվել է Ճապոնիա, որտեղ սովորել է 18 ամիս, Օսակա քաղաքում: Վայսելիայի երկրորդական վարժարանն ավարտելուց անմիջապես հետո ընդունվել է Բերկլիի (Կալիֆոռնիա) համալսարանի հին ասիական ժողովուրդների պատմության ու հնագիտության բաժինը: Բացառիկ ընդունակությունների շնորհիվ ուսուցման 4 տարվա ծրագիրն ավարտել է 2,5 տարում:

Սովորելու տարիներին մի քանի ընկերների հետ հիմնադրել է Բերկլիի համալսարանի «Հայ ուսանողական միությունը»: Ապրիլի 24-ի առթիվ «Հայ ուսանողական միության» նախաձեռնած հայ ժողովրդի պատմությանը նվիրված ցուցահանդեսի հիմնական կազմակերպիչներից մեկն է եղել:

Հետաքրքրված լինելով հայ ժողովրդի պատմությամբ և ուսումնասիրելով նրա ծագումը՝ իր ավարտաճառը գրում է Ուրարտուի ժայռափոր դամբարանների մասին, որը պաշտպանում է 1978 թվականին: Այնուհետև դիմում է Օքսֆորդի համալսարան ուսումը շարունակելու, իսկ 1978 թ. մարտին մեկնում է Լիբանան՝ հայրենիքին ավելի մոտ լինելու և մայրենի լեզուն սովորելու համար: Նույն տարում Լիբանանից մեկնում է Իրան և Հավթվանում մասնակցում «Հող և մշակույթի» կազմակերպած պեղումներին: Դժբախտաբար հետագայում այլևս ժամանակ չի ունենում զբաղվելու իր մասնագիտությամբ:

Լիբանանում նվիրվելով նորագույն հայ ազատագրական պայքարին՝ հրաժարվում է Օքսֆորդում ուսումը շարունակելուց, ուր արդեն ընդունվել էր:

1980 թվականին միանում է Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակին, 1981-ին կեղծ անձնագիր կրելու մեղադրանքով և Հռոմում թուրք դեսպանի դեմ մահափորձ կատարելու կասկածով ձերբակալվում է և մեկ ամիս հետո ազատ արձակվում: Այդ թվականից սկսում է ընդհատակում ապրել: 1983 թվականին մի խումբ ընկերների հետ հեռանում է ՀԱՀԳԲ-ից և ապրում է լիակատար մեկուսացման մեջ: 1985 թվականի նոյեմբերին երկրորդ անգամ ձերբակալվում է Փարիզում, դարձյալ կեղծ անձնագիր կրելու մեղադրանքով: Մինչև 1989 թ. հունվար ամիսը մնում է ազատազրկման մեջ: Մեկուսացման և բանտարկության տարիներին հայ ժողովրդի նորագույն ազատագրական պայքարի մասին հոդվածներ է գրում, որոնք տպագրվում են Փարիզի «Հայ պայքար», Լոնդոնի «Կայծեր» թերթերում և Սան Ֆրանցիսկոյի «Սարդարապատ» ամսագրում: Այս հոդվածների մի մասը և կազմակերպական բնույթի նամակները «Պայքարելու իրավունքը» խորագրով հրապարակվել են առանձին գրքով 1990 թվականին: Հեղինակի վերանայումից հետո 1993 թ. այն վերա-

հրատարակվել է: Գիրքը գրվել է անգլերենով: Մեկուսացման տարիներին Մոնթե Մելքոնյանն իր ընկերների հետ միասին աշխատել է ՀԱՀԳԲ-ի և նորագույն հայ ազատագրական պայքարի պատմության մասին գրքերի վրա: 1984, 1986 և 1988 թվականներին այս աշխատությունները լույս են տեսել Լոնդոնում, անգլերեն լեզվով:

1989 թվականին, ապատ արձակվելուց հետո, Մոնթե Մելքոնյանը ուղարկվել է Հարավային Եմեն: Այստեղ նրան է միացել կինը՝ Սեղան, և միասին անցել են Արևելյան Եվրոպա, որտեղ թափառել են շուրջ երկու տարի: Այդ ժամանակահատվածում հայերեն են թարգմանել վերոհիշյալ երեք աշխատությունները, որոնք այնուհետև լույս են տեսել 1994 թ. մեկ գրքով, «Իրականություն» ընդհանուր խորագրով:

1990 թ. հոկտեմբերին Մ. Մելքոնյանը անցել է Հայաստան: Մինչև 1991 թ. սեպտեմբեր ամիսը կուգահեռաբար կատարել է գիտական ու փինվորական աշխատանքներ:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի մասնագետների հետ շուրջ 8 ամիս աշխատել է «Հայաստանը և իր հարևանները» ծավալուն գիրքը կազմելու վրա: Դժբախտաբար դարձյալ ժամանակ չի ունեցել ամբողջովին նվիրվելու իր սիրած գործին՝ գիտությանը, և, առաջնահերթ համարելով հայրենի երկրի պաշտպանության հրամայականը, մեկնել է ռազմաճակատ:

Մոնթե Մելքոնյանը զարաբաղյան ռազմաճակատ գնաց իր ներքին ձայնի, իր խղճի ու աշխարհայացքի թելադրանքով, իր կյանքի տրամաբանության բերումով: Եվ այնտեղ էլ գտավ իր իմացյալ մահը (1993 թ.)՝ մեծ հնարավորություններով, երազանքներով ու ծրագրերով լեցուն կյանքը նվիրաբերելով իր ժողովրդի գոյատևման մեծ գործին...

Մոնթե Մելքոնյանը տիրապետում էր անգլերեն, հայերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ճապոներեն, թուրքերեն և իտալերեն լեզուներին, որոշ չափով գիտեր նաև պարսկերեն և քրդերեն: Ընկերների ու դասախոսների վկայությամբ նա հմուտ պատմաբան և հնագետ էր:

ՄԵԴԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ



ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Գիտական հասարակայնությանն է ներկայացվում հայ ժողովրդի արժանավոր զավակ Մոնթե Մելքոնյանի «Ուրարտական ժայռափոր դամբարանները» աշխատությունը, մի մարդու, որն իր երիտասարդ կյանքը նվիրաբերեց Հայաստանի անկախությանը, ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության մեծ գործին: Մոնթեի կարճատև, բայց հարուստ ու բովանդակալից կյանքի մեջ իրենց որոշակի տեղն ունեին նրա գիտական հետաքրքրությունները:

Իր համալսարանական կրթությամբ Մոնթեն հնագետ էր և ուներ մասնագիտական լավ պատրաստականություն, գիտեր լեզուներ: Նրա տրամաբանական կուռ մտածողության, պատմաքաղաքական և հասարակական-տնտեսական հարցերի վերլուծությամբ պատմահնագիտական և ճարտարապետական հուշարձանների բազմակողմանի քննության մասին է խոսում «Ուրարտական ժայռափոր դամբարանները. նկարագրություն և վերլուծություն» աշխատությունը, որը Բերկլիի համալսարանում հեղինակի երկարատև պրպտումների արդյունք է: Աշխատանքը թեև գրված է 1978 թ., բայց չի կորցրել թարմությունը և այժմեականությունը:

Ուրարտական վիմափոր կառույցները, մասնավորապես դամբարանները, ուրարտական կոթողային ճարտարապետության յուրօրինակ ստեղծագործություններ են, որոնք բավական հարուստ նյութ են տալիս պաշտամունքի, թաղման ծեսի, շինարվեստի, հասարակական բնույթի այլևայլ հարցերի վերաբերյալ և Հայկական բարձրավանդակի ու Առաջավոր Ասիայի մշակույթների փոխադարձությունների վառ արտահայտություն են:

Մոնթեի աշխատանքի արժանիքներից մեկն էլ այն է, որ նա փորձում է պատասխան տալ այդ կնճռոտ խնդիրներին և յուրովի է մոտենում խնդրո առարկայի վերլուծությանը: Փաստորեն սույն աշխատանքը ուրարտական դամբարանային հուշարձանների համապարփակ ուսումնասիրության առաջին փորձերից մեկն է:

Ուսումնասիրվող դամբարանների նյութերը գիտական շրջանառության մեջ են դրվել տարբեր հեղինակների կողմից: Սակայն Մոնթե Մելքոնյանի աշխատության մեջ դրանք միավորված են մեկ մտահղացմամբ, որոշակի և լուրջ գիտական նկատառումներով:

Շատ հետաքրքիր են նրա դիտողությունները դամբարանների մանրամասների նշանակության և ծագման մասին, մասնավորապես, ուրարտական կամարաձև վերնամասով որմնախորշերին ու ժայռափոր դամբարանների կամարաձև առաստաղներին տեղական ծագում վերագրելը, որոնք ուղղակիորեն կապվում են աշխարհիկ և վիրերկրյա շինությունների հետ: Մեծ աշխատանք է կատարված որոշելու համար այն աշխատուժը, որը ծախսվել է ուսումնասիրվող յուրաքանչյուր դամբարանի կառուցման ժամանակ, մի հանգամանք, որն օգնում է հեղինակին ճշգրտելու այդ դամբարանների ժամանակագրությունը և հետաքրքիր եզրահանգումներ կատարելու՝ կապված ուրարտական հասարակության սոցիալական կառուցվածքի հետ:

Իհարկե, ընթերցողը պետք է հաշվի առնի, որ այս աշխատությունը քսանամյա երիտա-

սարդի մտքի արդյունք է, նրա դիպլոմային աշխատանքն է: Ընդ որում հեղինակն այդպես էլ ժամանակ չունեցավ վերանայելու, հղկելու, տպագրության պատրաստելու իր աշխատությունը, և բնական է, որ նրանում կլինեն որոշ անմշակ տեղեր, մերժելի ձևակերպումներ ու եզրահանգումներ: Եւ այնուամենայնիվ պետք է ընդունել, որ ամբողջության մեջ աշխատությունը ներկայանում է որպես թեև երիտասարդական, բայց հասուն գիտական մտքի արգասիք. այստեղ երևում է ոչ միայն ապագա մեծ գիտնականը, այլև արդեն կայացած գիտնականը: Այնպես որ, ինչպես վերը ասվածներից էլ բխում է, Մոնթեի աշխատության հրատարակումը սույն մատենաշարով լիովին արդարացված է նյութի ընդգրկման և թեմայի առումով, հարցադրումների և հարցերի լուծումների առումով:

Միաժամանակ, որպեսզի Ուրարտուի դամբարանային հնագիտության հարցերը առավել ընդգրկուն ներկայացվեն, նպատակահարմար գտանք պրակում հրապարակել նաև հնագիտական այլ նյութեր, որոնք հայտնի են մեր հանրապետության տարածքից: Դրանք համեմատաբար նոր հայտնաբերումներ են և իրենց նշանակությամբ խիստ կարևոր են և անհրաժեշտ՝ Հայաստանի նյութական մշակույթի ուսումնասիրության համար:

Այս աշխատությունը նվիրում եմ
իմ նախահայրերի՝
Նաիրյան լեռնականների, հիշատակին:

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՅՌԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Օգտվելով առիթից՝ կցանկանայի իմ խորին երախտագիտությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր աջակցեցին ինձ սույն աշխատանքը կատարելիս, և առաջին հերթին, անշուշտ, պրոֆ. Գ. Ազարփային, որը ոչ միայն հուշեց ինձ ընտրել ուսումնասիրության հենց այս թեման, այլև աշխատանքի ընթացքում գիտահետազոտական մշտական կապի մեջ էր ինձ հետ:

Շնորհակալ եմ նաև Ջորջ Դալլիս իր տված խորհուրդների, ինչպես նաև իմ ղեկավարից՝ Մարտին Շվարցից, համագործակցության ու աջակցության համար:

Երախտապարտ եմ նաև օրիորդ Լանա Քրուպյանին՝ անգլերեն, և հարգարժան պարոն Ստեֆան Ռիքսին՝ ռուսերեն ու գերմաներեն բնագրերից ինձ անհրաժեշտ թարգմանություններ կատարելու համար: Չեմ կարող երախտագիտություն չհայտնել և դոկտոր Վենսեն Փիգոտին, դոկտոր Պոլ Զիմանսկուն, դոկտոր Քոլին Բաքրին, պրոֆ. Բեռնարդ Կնապին, պրոֆ. Վոլֆգանգ Հայմպելին, պարոն Մարգար Մելքոնյանին, պարոն Քլարենս Մակ Զիլարդին և պարոն Տիգրան Կիրակոսյանին, որոնք ամեն կերպ օժանդակեցին ինձ աշխատանքը կատարելիս:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուրարտագիտությունն ունի շուրջ 150-ամյա պատմություն*:

Անդրկովկասում տասնիններորդ դարում ուրարտական հուշարձանների ուսումնասիրության բնագավառում գիտական լուրջ աշխատանքներ սակավ են կատարվել: Ուրարտական նյութերը հաճախ շփոթվել և մեկնաբանվել են որպես ասորեստանյան, սասանյան, անգամ բյուզանդական ծագմամբ արժեքներ: Չնայած այս հանգամանքին՝ 1870-ական թվականներից սկսած՝ գերմանացիները, ռուսները, անգլիացիները տարբեր արշավախմբեր էին կազմակերպում ուրարտական հուշարձանները հետազոտելու նպատակով**:

Ուրարտական հնավայրերի ուսումնասիրումը անհատներ աշխուժություն ապրեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ սկսվեցին նախ Խորհրդային Հայաստանում, ապա և Արևմտյան Հայաստանում և Իրանում գտնվող մի շարք ուրարտական հուշարձանների պեղումները, որոնց արդյունքների հրապարակումները հետազոտողների ուշադրությունը բևեռեցին այս յուրօրինակ մշակույթի ուսումնասիրման վրա:

Այս տարիներին շարունակվում էին ուրարտական նոր արձանագրությունների հայտնաբերումը և դրանց մեկնաբանման ու հրապարակման գործը[1]:

Ասուրական բազմաքանակ տեքստերի հետ մեկտեղ այս արձանագրությունները օգնում են ոչ միայն Վանի թագավորության, այլև ուրարտացիներին դաշնակից ու հակամարտ հիմքերների պատմության ընկալմանը:

Թեև մեր գիտելիքները Ուրարտուի պատմության ու մշակույթի վերաբերյալ անընդհատ աճում են, այնու-

---

* Վանի ուրարտական հուշարձանների առաջին և ամենատպավորիչ նկարագրությունը (կարելի է ասել նաև ճիշտ թվագրությունը) տվել է դեռևս Մովսես Խորենացին (տես Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Ե., 1981, գիրք առաջին, ԺԶ): 1827 թ. ֆրանսիացի արևելագետ Ֆ. Է. Շուլցը Մովսես Խորենացու նկարագրած հուշարձաններն ուսումնասիրելու նպատակով գործուղվում է Վանի շրջան: Նա այստեղ արտանկարում է եղած ուրարտական արձանագրությունները, որոնք, սակայն, հրապարակվել են միայն 1840 թ.: Հենց այս թվականն էլ, պայմանականորեն, համարվում է ուրարտագիտության սկիզբը (տես *Fr. Éd. Shulz*, Memoires sur le lac de Van et ses environs, «Jurnal Asiatique», troisieme serie, IX, Paris, 1840).

Այստեղ և այլուր աստղանիշով նշանագրված ծանոթագրությունները պրակի պատասխանատու խմբագրինն են:

** 1879 թ. Թոփրակ-կալեում (Ռուսահինիլի) պեղումներ սկսեցին կատարել Անգլիայի հյուպատոս Բլեյսոնը և ամերիկացի քարոզիչ Ռեյնոլդսը: Թոփրաք-կալեի պեղումներն այնուհետև շարունակեց գերմանական արշավախումբը Կ. Ֆ. Լիման-Հաուպտի և Վ. Բիլքի գլխավորությամբ: Հուշարձանի պեղումները 1911—1912 թթ. շարունակեց Հովսեփ Օրբելին (այս մասին հանգամանորեն տես *Б. Б. Пиотровский*. Ванское царство, М., 1959, с. 18).

Գիտական բարձր մակարդակով ուսումնասիրված հաջորդ ուրարտական հուշարձանը Կարմիր բլուրն է, որի պարբերական պեղումներն սկսվեցին 1939 թվականին Կ. Գ. Ղաֆադարյանի, Բ. Բ. Պիոտրովսկու և Ս. Տեր-Ավետիսյանի ընդհանուր ղեկավարությամբ (հետախուզական պեղումներն սկսվել էին 1936 թ. Կ. Գ. Ղաֆադարյանի գլխավորությամբ) և ավարտվեցին 1971 թ. (տես *Ս. Ա. Եսայան*. Կարմիր բլուր, Ե., 1982, էջ 12–13):

ամենայնիվ, առայժմ հնագետների կողմից ուսումնասիրված է միայն մի մասն այն տարածքի, որին տիրել են Ուրարտուի արքաները, այսինքն՝ այս բնագավառում անելիքը տակավին սպառված չէ:

Ուրարտուի պատմության և մշակույթի առանձնահատկությունները թերևս պայմանավորված էին երկրի աշխարհագրական դիրքով և երկրաբանական ուրույն կառուցվածքով: Ձմռան դաժան ցուրտն ու դժվարամատչելի բազում լեռնային բնակավայրերի առկայությունը դեպի Հայկական բարձրավանդակ արշավող հակառակորդների բանակների համար դժվարություններ էին հարուցում: Հայկական լեռնաշխարհի ձորերով, գետերով ու լեռնաշղթաներով կտրտված տեղանքը միևնույն ժամանակ նպաստում էր այստեղ բնակվող ցեղերի մեկուսացմանը իրարից: Մեկ պետության կազմում Նաիրյան երկրների* ուշ միավորվելու պատճառը թերևս հենց այդ բնական արգելքներն էին: Սակայն ասորեստանյան բանակների մ. թ. ա. 13-րդ դարում սկսված ու ասընդմեջ շարունակվող արշավանքներն այս ուղղությամբ նպաստեցին լեռնաշխարհում ձևավորված իշխանությունների մերձեցմանը՝ սկիզբ դնելով դրանց միավորմանը, քանի որ գիտակցվում էր նման հզոր ախոյանին միացյալ ուժերով դիմագրավելու անհրաժեշտությունը: Այդ իսկ պատճառով, նույնիսկ հաջողված ասորեստանյան արշավանքներից կարճ ժամանակ հետո, շատ հաճախ լեռնաշխարհի «հպատակեցված» իշխանությունները ապստամբում էին, հրաժարվում տուրք վճարելուց, ինչը և պատճառ էր դառնում դեպի լեռնաշխարհ նոր ասուրական արշավանքների համար:

Ուրարտական պետության ձևավորումից հետո էլ, սակայն, ինչպես վկայում են ասուրական և ուրարտական որոշ տեքստեր, լեռնաշխարհում չվերացան կենտրոնախույս նկրտումները. հաճախակի էին բռնկվող ապստամբությունները: Չնայած այս հանգամանքին՝ ուրարտական մշակույթը անընդմեջ ծաղկում էր ապրում, իսկ պետության քաղաքական ազդեցությունն աճում էր: Սակայն միևնույն ժամանակ անդրկովկասյան և այլ շատ ցեղեր մնացին մեկուսացած[2] և պահպանեցին տեղական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: Այս երևույթն իր ազդեցությունն ունեցավ համաուրարտական մշակույթի ձևավորման վրա, մշակույթ, որում ակնհայտ են տարբեր տեղական մշակույթների տարրերը, մանավանդ արվեստի և ճարտարապետության բնագավառներում:

Մ. թ. ա. 9-րդ դարում ուրարտական պետությունը իր Տուշպա (այժմ՝ Վան) կենտրոնով հաստատված էր Վանա լճի ավազանում[3]: Ասուրական արձանագրություններում հիշատակված Ուրարտուի առաջին թագավորը Արամեն է («Արամու Ուրարտացի»), որի հակառակորդն էր Ասորեստանի արքա Սալմանասար 3-րդը (մ. թ. ա. 860—825 թթ.)[4]:

Ուրարտուի երկրորդ արքա Սարդուրի 1-ինից է սկսվում Ուրարտուի արքաների ծագումնաբանական հաջորդականությունը մինչև Էրիմենա՝ մ. թ. ա. 634 թ.[5] (տես աղ. 1): Ուրարտուի արքաները տասնամյակ առ տասնամյակ շարունակական պայքարի էին առաջնորդում երկիրը ընդդեմ Ասորեստանի. ընդ որում, ախոյաններից մեկի հզորացման համեմատ տկարանում էր մյուսը և հակառակը:

Աղյուսակ 1

Ասորեստանի արքաները	Թվականները	Ուրարտուի արքաները
Սալմանասար 3-րդ (860–825 թթ.)	860	Արամե
	858	
	846	
	834	Սարդուրի 1-ին
Շամշի-Ադադ (825–812 թթ.)	824	Իշպուինի Սարդուրորդի
Շամիրամ թագուհի (812–803 թթ.)		
Ադադ նիրարի 3-րդ (812–783 թթ.)		Մինուա Իշպուինորդի
Սալմանասար 4-րդ (783–773 թթ)		
Աշուրդան 3-րդ (773–754 թթ.)		Արգիշթի Մինուայորդի
Աշուրնիրարի 4-րդ (754–745 թթ.)		Սարդուրի Արգիշթորդի
Թիգլաթպալասար 3-րդ (745–727 թթ.)	743	
	735	
Սալմանասար 5-րդ (727–722 թթ.)		
Սարգոն 2-րդ (722–705 թթ.)	714	Ռուսա Սարդուրորդի (714 †)
Սինահերիբ (705–681 թթ.)		
Ասարհադոն (681–668 թթ.)		
Աշուրբանապալ (668–624 թթ.)	654	Սարդուրի Ռուսայորդի
	639	
Նինվեի անկումը (612 թ.)		(Սարդուրի Սարդուրորդի (՞))
		Էրիմենա
		Ռուսա Էրիմենայորդի
		(Ռուսա Ռուսայորդի) (՞)
		Ուրարտուի անկումը (585 թ.)

Կենտրոնական այունակում ասուրական աղբյուրներում ուրարտական արքաների անունների հիշատակման թվականներն են (տես *Б. Б. Пиотровский*. Ванское царство, с. 41–42).

Արգիշթի 1-ին (մ. թ. ա. շուրջ 785—760 թթ.) և Սարդուրի 2-րդ (մ. թ. ա. շուրջ 760—735 թթ.) արքաների թագավորության տարիներին Ուրարտուն հասավ իր հզորության գագաթնակետին. մի կողմից երկրի սահ-

* «Նաիրին» լեռնաշխարհին տրված ասուրական անունն է, որը կարող է ունենալ և տեղական արմատներ: Միևնույն ժամանակ ասորեստանցիները «Նաիրի» ասելով տարբեր ժամանակներում և տարբեր հանգամանքներում նկատի են ունեցել տարբեր տարածքներ: Մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջերին ու 1-ին հազարամյակի սկզբին Նաիրի անվան ներքո ասորեստանցիները միավորում էին իրենց երկրից հյուսիս ընկած տարբեր «թագավորությունները» (նկատի էր առնվում Կաշիարի (Տուր-Աբդինի) լեռներից հարավ-արևմուտք, մինչև Ուրմիա (Կապուտան) լճի հարավային շրջանները՝ հարավ-արևելքում և մինչև Արևմտյան Եփրատի վերին հոսանքները (երբեմն նաև Սև ծովը)՝ հյուսիսում ընկած տարածքը): Մ. թ. ա. 9-րդ դարում Ասորեստանից հյուսիս կազմավորվում են առանձին մեծ տերություններ, և հին Նաիրի հասկացության կողքին ի հայտ են գալիս Նաիրի անվան այլ նշանակություններ. Նաիրի էր անվանվում Խուբուշկիա երկիրը (տեղադրվում է Վանա լճից հարավ, Արևելյան Տիգրիս (Բյուլտան) գետի ավազանում), որին զուգահեռ հիշատակվում է նաև ասուրական Նաիրի փոխարքայությունը Ամեդու (այժմ՝ Դիարբեքիր) կենտրոնով: Ուրարտուի (Վանի) արքաները Նաիրի անունը հիշատակում են միայն աքադերեն լեզվով գրված իրենց արձանագրություններում՝ այս անվան տակ նկատի ունենալով Ուրարտուն: Սակայն ասորեստանցիները Ուրարտուն համարում էին Նաիրիի միայն մի մասը, եթե նկատի չէր առնվում, իհարկե, Խուբուշկիան կամ Նաիրի փոխարքայությունը (տես *Г. А. Меликишвили*. Древневосточные материалы по истории народов Закавказья, т. 1, Наири–Урарту, Тбилиси, 1954, с. 13–20).

մանները ընդարձակվեցին հյուսիսում՝ Անդրկովկասում, մյուս կողմից, պարտության մատնելով Ասորեստանին, Վանի արքաները կարողացան իրենց վերահսկողությունը հաստատել Ուրարտուից հարավ և արևմուտք ընկած կարևորագույն առևտրական ուղիների վրա (տես քարտեզը)[6]:

Թիգլաթպալասար 3-րդ արքայի օրոք (մ. թ. ա. 744—727թթ.) Ուրարտուն և նրա դաշնակիցները մի շարք պարտություններ կրեցին Ասորեստանից: Ասուրական բանակը մտավ Ուրարտու, ասպատակեց երկրի կենտրոնական շրջանները, պաշարեց Տուշպան, սակայն, քաղաքը գրավել չկարողանալով, հեռացավ: Ուրարտուն կազմալուծման շեմին էր: Սակայն Սարդուրիի որդուն՝ Ռուսա 1-ինին (մ. թ. ա. շուրջ 735—714 թթ.), հաջողվեց կանխել կազմալուծումը և քայլ առ քայլ վերականգնել պետության իզորությունը: Դարի վերջին քսանամյակում արդեն անխուսափելի էր ուրարտա-ասուրական նոր ընդհարումը: Պատերազմն սկսվեց ու ավարտվեց 714 թ.: Ուրարտացիները կրկին պարտվեցին: Ասորեստանի արքա Սարգոն 2-րդի (մ. թ. ա. 722—705 թթ.) բանակը ասպատակեց երկիրը:

Չնայած այս պարտություններին՝ այնուամենայնիվ, Վանի թագավորությունը գոյատևեց վոքր-ինչ ավելի երկար, քան իր ահարկու ախոյանը՝ Ասորեստանը (Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն ընկավ մ. թ. ա. 612 թ.): Ուրարտական թագավորությանը վերջին հարվածը հասցրին մարերը և երկրի կենտրոնախույս ուժերը մ. թ. ա. 590 թ.[7]: Ուրարտուի անկումից հետո լեռնաշխարհի իշխանությունները միավորվեցին այստեղ ձևավորված հայկական թագավորության շուրջ:

Ուրարտացիներն ստեղծեցին զարգացած մի մշակույթ, որի առանձին դրսևորումներում երբեմն բավականին հստակ է ուրվագծվում հարևան երկրների մշակութային ազդեցությունը: Օրինակ՝ 9-րդ դարի առաջին կեսի ասուրական այն բարձրաքանդակներին, որոնց վրա պատկերված են Ուրարտուում տեղի ունեցած իրադարձությունները, ուրարտացի զինվորները, ինչպես մատնանշված է բազմիցս, հանդերձավորված են խեթերի նման, այն դեպքում, երբ դարավերջին ուրարտական զինվորական հանդերձանքը փոխվում է՝ նմանվելով ասուրականին, որ քիչ է տարբերվում Պերսեպոլսի հայտնի բարձրաքանդակին պատկերված հայերի կրած զգեստից (նկ. 2)[8]: Ուրարտական առաջին արձանագրությունները գրված են աքադերեն[9]: Ասորեստանի մշակույթի ազդեցությունն ուրարտականի վրա այնքան մեծ է եղել, որ 19-րդ դարի գիտնականները Վանի հուշարձանները երբեմն նույնացնում էին ասորեստանյան հնությունների հետ[10]:

Չնայած արտաքին մշակութային ազդեցության և ուղղակի փոխառությունների առկայությանը՝ Հայկական լեռնաշխարհի մշակույթն ուներ զարգացման իր ուրույն ուղին, մանավանդ ճարտարապետության բնագավառում: Կիկլոպյան որմնադրության սկզբունքները, որ կիրառվել են լեռնային ամրոցների կառուցման ժամանակ, հիմք հանդիսացան բուն ուրարտական շինարվեստի համար: Խոշոր քարերով պարիսպներ շարելը, ինչպես նաև այդ քարերի տեղադրելու համար ժայռափոր սանդղաձև կտրուքներ անելը որմնադրության սկզբունք են, որի զուգահեռը և նախորդը դժվար է գտնել Մերձավոր Արևելքում[11]:

Ուրարտական տաճարների ճարտարապետության ոճական առանձնահատկությանը ակունքները հնարավոր չէ գտնել նույնիսկ նախաուրարտական շինարվեստում, որը, սակայն, իր որոշակի ազդեցությունն է ունեցել ուշ աքեմենյան տաճարային ճարտարապետության վրա[12]:

Ասվածը միայն մի չնչին մասն է տարբեր հետազոտողների կողմից մատնանշված այն առանձնահատկությունների, որոնք հնարավորություն են տալիս ճանաչելու ուրարտական մշակույթի արգասիքները և կամ առանձնացնելու այն արժեքները, որոնք կրում են ուրարտական ազդեցություն:

Սույն աշխատանքում քննարկվում են հայտնաբերված ուրարտական ժայռափոր դամբարանները և փորձ է արվում ստացված արդյունքների հիման վրա ստեղծելու յուրատեսակ հիմք, որը կօժանդակի Ուրարտուի պատմության, մշակույթի և տնտեսական կյանքի ուսումնասիրմանը:

Լիովին գիտակցում եմ, որ այս աշխատանքը, գումարվելով նախորդ հետազոտությունների արդյունքներին, չի սպառում առկա ամբողջ նյութը, և ուսումնասիրողները միշտ էլ առիթ կունենան լրացնելու հիմնահարցի ուսումնասիրությունը նոր հետազոտություններով:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՅՌԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուրարտական դամբարանները տփռված են Ուրարտուի վրաղեկրած տարածքով մեկ (տես քարտեզը): Բազմաթիվ նմանություններով հանդերձ՝ այդ դամբարանները իրենց ձևերով, չափերով ու հարդարանքով հաճախ տարբերվում են միմյանցից:

Մեծ թվով վիթխարակերտ դամբարաններ են հայտնաբերված Վանում: Այդ դամբարանները փորված են Վանի վիթխարի ժայռի մեջ, մի ժայռ, որի վրա էլ հենց գտնվում է մ. թ. ա. 9-րդ դարում հիմնադրված հզոր միջնաբերդը:

Ըստ երևույթին Վանի ժայռի անմատչելի դիրքն էր պատճառը, որ հենց այստեղ հիմնվեց երկրի մայրաքաղաքը՝ Տուշպան: Ամրոցն այնքան լավ էր պաշտպանված, որ ասուրական ոչ մի բանակ այն գրավել չկարողացավ:

Վանի ժայռի մեջ պատրաստված են ութ տարբեր ժայռափոր կառույցներ:

Ժայռի հարավ-արևմտյան կողմում են, գտնվում հայտնի Խորխորյան քարայրերը («Արգիշթի առաջինի սենյակները»), որոնք բաղկացած են ժայռափոր, միմյանց հետ չհաղորդակցվող երկու ընդարձակ համալիրներից և ավելի փոքր մի քարայրից, որի եզրից երևում է անհանգիստ Վանա լճի ափեզերքը: Այս քարայրի մոտ գտնվում են մի դատարկ որմնախորշ և Խորխորյան տարեգրության սեպագիր այուանակներից ութը*: Հաջորդը Խորխորյան առավել խոշոր քարայրն է, որի մուտքը եզերված է հիշյալ արձանագրությունով: Այս քարայրը բաղկացած է չորս փոքր սենյակներով շրջապատված մի մեծ՝ հիմնական սրահից, որի երեք պատերը հարդարված են պատուհան հիշեցնող երկուական որմնախորշերով, իսկ չորրորդը՝ մուտքն ամփոփող պատը՝ չորս խորշերով: Այսպիսով, որմնախորշերի ընդհանուր թիվը տասն է: Բոլոր որմնախորշերն էլ ուղղանկյունաձև են: Դիմահայաց պատի երկու որմնախորշերի հատակին արված են 2—3 սմ խորությամբ երկու փոքրիկ խոռոչներ: Երկու որմնախորշերն էլ շրջանակված են սակավախոր փոսիկներով: Սրահի պատերը հարդարված են քառակուսի, կենտրոնում խորացող քանդակներով (լայնքը՝ 31 սմ), որոնք, Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով, կամ լցված են եղել գունավոր քարերով, կամ ծածկվել են թիթեղով: Կարծիք է հայտնվել նաև, թե այդ փորվածքների մեջ մետաղե ճրագներ են դրվել[13]:

* Այս արձանագրությունը պատմում է Արգիշթի I-ին արքայի թագավորության առաջին տասնհինգամյակում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Դիմահայաց ձախ անկյունում աստիճաններ են փորված[14]: Քարայրի փոքր սենյակները նման են իրար. հյուսիս-արևմտյան սենյակում կան երեք որմնախորշեր և մեկ հոր: Ենթադրվում է, որ վերջինս դեպի ջուրը և կամ դեպի մեծ սենյակի տակ գտնվող երրորդ Խորխորյան քարայրը տանող անցուղի է եղել[15]: Դեպի այս սենյակ տանող մուտքը գտնվում է հիմնական սրահի արևմտյան անկյունում: Այստեղ գտնվող որմնախորշերից երկուսը փորված են մուտքին դիմահայաց, մյուսը՝ հարավ-արևմտյան պատին: Մեծ սենյակի հետևի պատին կից երկու սենյակներն ունեն չորսական որմնախորշեր՝ երկուական հետևի պատերին և մեկական՝ կողմնային պատերին: Այս սենյակների հիմնական մուտքերը գտնվում են որմնախորշերից զուրկ պատերի ձախ կողմում: Այստեղ ևս առկա են քառակուսի քանդակներ: Այս երկու սենյակների միջև տարբերությունը միայն կողմնային պատերի որմնախորշերի տեղադրման մեջ է: Այսպես՝ ձախակողմյան սենյակի առաջին որմնախորշը գտնվում է ձախակողմյան պատին և ավելի մոտ է դիմահայաց պատին, իսկ աջակողմյան որմնախորշը փորված է պատի մեջտեղում: Աջ կողմի սենյակում ձախակողմյան պատի որմնախորշը գտնվում է պատի միջնամասում, իսկ աջակողմյան պատինը ավելի մոտ է առջևի պատին:

Հարավ-արևելյան սենյակը նույնպես չորս որմնախորշ ունի: Այստեղ էլ կարելի է մտնել որմնախորշերից զուրկ պատի ձախ կողմում բացված անցումով: Քարայրի առաստաղը հարթ է: Մուտքից սկսվող ժայռափոր աստիճանները տանում են ներքև (նկ.5)[16]:

Դեպի Փոքր Խորխորյան քարայր է տանում այժմ գրեթե ամբողջությամբ ավերված մի քարայրի մոտից սկսվող աստիճանաշարը: Քարայրը բաղկացած է մի երկարավուն դահլիճից (երկար.՝ 12,68 մ, լայն.՝ 2,90 մ, բարձր.՝ 2,10 մ), որի հյուսիսային պատն ունի չորս որմնախորշ: Սրանց հատակներն ընդամենը քսան սանտիմետրով են բարձր դահլիճի հատակից: Որմնախորշերից երեքը գրեթե նույն չափերն ունեն: Ծայր արևելյան որմնախորշը մյուս երեքի նման չէ և ունի մի հարթակ: Դահլիճի մուտքը հարավային պատի արևմտյան կողմից է: Առաստաղը հարթ է (նկ. 6)[17]:

Մեծ Խորխորյան քարայրին բնորոշ ուղիղ և հարթ պատերը «խորթ» են այս քարայրի համար: Վերջինս չունի նաև հատակագծի և շինարվեստի այն բարձր որակը, որ բնորոշ է Մեծ քարայրին:

Նավթ-քույու կոչվող ձեռակերտ քարայրերի խումբը (նկ. 7) տեղադրված է Վանի ժայռի միջին՝ ամենաբարձր մասում, Քսերքսեսի արձանագրությունից ոչ հեռու: Այստեղ ժայռի մեջ փորված է մի մեծ հրապարակ, որին արված է «Սարդուրի 2-րդի շիրիմ» պայմանական անունը[18] և որը բաց է հարավային և արևելյան կողմերից, սակայն արևմուտքում և հյուսիսում սահմանափակված է ժայռի ուղղաբերձ կտրվածքներով: Հենց հյուսիսային պատի վրա է գտնվում դեպի անձավախումբ տանող մուտքը:

Քարանձավի ճակատն ունի մեծ որմնախորշի ձև (լայն.՝ 24,90 մ և բարձր.՝ 8,60 մ), իսկ դռան վրա մի պատուհան է բացված: Մուտքի մոտ ժայռը խիստ քայքայված է: Դամբարանի առաջին սրահը զուրկ է որմնախորշերից, ուղղանկյունաձև է (երկար.՝ 12,40—12,42 մ, լայն.՝ 7,27—7,28 մ, բարձր.՝ 7,90 մ), ունի կամարաձև առաստաղ: Պատերի վերին մասում, որտեղից սկսվում է կամարը, կարելի է տեսնել բարձրաքանդակ կիսաշրջաններից կազմված մի ժապավեն: Հատկանշական է այս սենյակի պատերի կատարյալ մշակումը և սրահի անկյունների ճշգրտությունը: Սրահի հյուսիս-արևելյան երկար պատի վրա բացվում է երկու դուռ, որոնցից մեկը տանում է դեպի ձախակողմյան՝ երկու որմնախորշեր ունեցող սենյակը, մյուսը՝ աջակողմյան, որի լավ հղկված պատերն ունեն բարձրաքանդակներ, որոնք նման են մեծ սրահի քանդակներին: Այս սենյակի հյուսիս-արևմտյան պատի մեջ փորված է սանդղավանդ ունեցող մի որմնախորշ:

Մեծ դահլիճի կարճ պատերից յուրաքանչյուրն ունի մեկ դուռ: Առաջինը, որ գտնվում է քարանձավի մուտքից ձախ, տանում է դեպի ուղղանկյունաձև մի փոքր սենյակ, իսկ աջակողմյան դուռը՝ դեպի մեկ այլ, կիսակառույց սենյակ[19]: Վերջին հանգամանքը Չառլզ Բառնեյն ու Դեվիդ Լանգը բացատրում են Սարդուրի 2-րդ և Ռուսա 1-ին արքաների հանկարծամահությամբ՝ դամբարանն էլ թվագրելով այդ ինքնակալների գահակալության տարիներով[20]:

Հիշատակված արհեստական հարթակի հյուսիս-արևմտյան պատի մեջ փորված է սենյակների մեկ այլ համալիր, որն անվանված է Իշկալա (նկ. 10): Վերջինիս հատակագիծը տարբերվում է Նավթ-քույու և Խորխորյան անձավների հատակագծերից, քանի որ փոքր սենյակները խմբված են ոչ թե առաջին մեծ դահլիճի, այլ երկու դահլիճների շուրջ:

Առաջին դահլիճը փոքր-ինչ անկանոն ձև ունի (երկար.՝ 9,28—9,38 մ, լայն.՝ 5,49—5,97 մ), առաստաղը կամարաձև է, իսկ երկրորդ՝ ավելի փոքր (6,30 մ x 4,33 մ) ու ցածր սենյակի առաստաղը հարթ է: Առաջին դահլիճին հարում են երկու կողմնային սենյակներ, իսկ երկրորդին՝ երեք սենյակներ, որոնցից երկու կողմնայիններն ունեն հատակից 19 սմ բարձր հարթակներ:

Առանձնապես ուշագրավ է երկրորդ դահլիճին առընթեր երրորդ սենյակը: Այն ուղղանկյունաձև է (երկար.՝ 4,80—4,82 մ, լայն.՝ 2,60—2,71 մ) և հյուսիս-արևմտյան պատի մոտ ունի 0,87 մ բարձրությամբ մի հարթակ, դեպի ուր տանում է երեք աստիճաններ ունեցող սանդուղքը: Հարթակի վրա 1,67 մ երկարությամբ ու 0,88 մ լայնքով կանոնավոր մի փորվածք կա: Ավելի ներքև, արդեն պատի մեջ փորված են 2 սմ տրամագիծ ունեցող անցքեր, որոնց մեջ, ինչպես ենթադրում է Բ. Բ. Պիոտրովսկին, ամրացվել են պատի հարդարանքներ: Նման անցքեր կան նաև երկրորդ մեծ դահլիճում: Իշկալա քարանձավը մյուս քարանձավներից շատ ավելի վատ է պահպանվել. ամենուրեք կան ճեղքվածքներ, և, ինչպես նշում է Բ. Բ. Պիոտրովսկին, քարայրի պատերը ուշադիր զննելուց հետո միայն կարելի է նկատել, որ դրանք ժամանակին խնամքով տաշվել ու հղկվել են[21]:

Դեպի Նավթ-քույու և Իշկալա տանող հարթակից ներքև գտնվում է մեկ այլ արհեստական քարայր, որը ընդամենը մեկ ոչ ճշգրիտ ուղղանկյունաձև սրահ է (երկար.՝ 3,44—3,71 մ, լայն.՝ 1,92—2,02 մ, բարձր.՝ շուրջ 2 մ): Սրահն ունի երեք խոշոր ու խոր որմնախորշեր: Առաստաղը հարթ է՝ արևելքից արևմուտք անցնող թեքությամբ (նկ. 8)[22]:

Նկարագրված այս անձավներից արևելք, դեպի միջնաբերդ տանող Թավրիզյան դարպասների մոտ գտնվում է ժայռափոր սրահների մեկ այլ խումբ, որն ստացել է Մեծ քարայր անունը (նկ. 9): Քարայրի առջև փորված է ընդարձակ հարթակ, դեպի որն իջնում է մի վեհաշուք սանդուղք (աստիճաններից պահպանվել են 25-ը): Քարանձավի ճակատը խնամքով հարթեցված է և ունի խորշաձև քիվ: Ներքևից դեպի քարայրի մուտքն է տանում նաև յոթնաստիճան սանդուղքը[23]: Մուտքով կարելի է մտնել մեծ սրահը (երկար.՝ 9,34—9,42 մ, լայն.՝ 6,17—6,18 մ, բարձր.՝ 5,95—5,99 մ), վերջինս հաղորդակցվում է երեք այլ սենյակների հետ, որոնցից երկուսը կողմնային են, իսկ երրորդը գտնվում է գլխավոր մուտքի դիմաց: Արևմտյան կողմնային սենյակի մուտքը տեղադրված է արևելյան պատի հյուսիսային կողմում: Սենյակը երկարավուն է և ձգվում է հյուսիսից դեպի հարավ: Սենյակի հարավային մասում կա մի հարթակ:

Արևելյան սենյակի մուտքը տեղադրված է արևմտյան պատի հարավային կողմում: Սենյակը զուրկ է խորշերից ու հարթակներից: Սենյակներից ամենաուշագրավը հյուսիսայինն է, որի մուտքը գտնվում է հիմնական դռան դիմաց, երկայնական պատի վրա: Սա ուրույն կառույցածք ունի, ժամանակին վերակառուցվել է և հիմնական սրահի նկատմամբ տեղադրված է թեքությամբ: Սենյակի հարավ-արևմտյան անկյունը հպված է հիմնական սրահի հյուսիսային պատին, իսկ հարավ-արևելյանը տեղադրված է սույն պատից որոշակի հեռավորության վրա: Այս սենյակն իր արևմտյան պատի մոտ ունի բավականին լայն մի հարթակ, դեպի ուր բարձրանում է հարթակին կից փորված եռաստիճան սանդուղքը:

Վանի ժայռի հյուսիսային լանջին եղած միակ՝ արհեստական անձավը (նկ. 11)[24] մեկ ընդարձակ սրահ է (երկար.՝ 20,46 մ, լայն.՝ 7,81—7,95 մ, բարձր.՝ 2,53 մ):

Մուտքը տեղադրված է սրահի արևմտյան կողմում և շատ լայն է՝ 8,48 մ: Առաստաղը հարթ է: Հենց այս մուտքը կապվող ժայռի կտրվածքներից արևմտյանի վրա է փորագրված Սինուա Իշպուինորդու արձանագրությունը*:

Վանի ժայռավոր համալիրներից վերջինը գտնվում է ամրոցի մեջ, «պինապահեստի» մոտ (նկ. 12): Հայտնաբերել է Ա. Ն. Կապնակովը 1916 թ.: Դամբարանի մուտքը, որը տանում է 20 քմ տարածքով և 2,55 մ բարձրությամբ քառակուսի մի սրահ, իր աջ անկյունում ներսի կողմից ունի մի փոսիկ, որը թերևս որպես դռան կրընկաքար է ծառայել:

Սրահի ձախակողմյան պատի վրա հատակից բարձր դիրք ունեցող մի մուտք է բացվում դեպի կից, ոչ մեծ երկու սենյակները, որոնցից առաջինը հատակագծում ուղղանկյունաձև է (երկար.՝ 4,76 մ, լայն.՝ 1,42 մ և բարձր.՝ 0,95 մ): Այս սենյակը, որտեղ կարելի է տեղաշարժվել միայն սողալով, ունի հարթ առաստաղ, մինչդեռ հաջորդ սենյակի առաստաղը գմբեթաձև է:

Այս սենյակը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն առաստաղի ունեցած ձևի առումով, այլև նրանով, որ հարևան սենյակի հատակի հարթության մակարդակին համապատասխան բարձրության վրա ունի կտրուք սալաքարի համար: Այդ սալաքարը ծառայել է որպես հատակ սենյակի համար, միևնույն ժամանակ ծածկել է այս սենյակի տակ գտնվող դեպի մեկ այլ, ավելի փոքր խուց (լայն.՝ 1,07 մ, բարձր.՝ 0,85 մ) տանող մուտքը: Ա. Ն. Կապնակովի կարծիքով այս անձավը դամբարան է եղել: Քարատապանը դրվել է, թերևս, ներքևի խցում, մինչդեռ Մեծ քարայրում և Նավթքույուում քարատապանները կարող էին դրվել միայն բարձր հարթակների վրա[25]:

Վանի ժայռավոր կառույցների ամենաակնառու առանձնահատկությունն այն է, որ այստեղ կիրառվել է ուղղանկյունաձև հորինվածք: Հատակագծում սուր անկյուններ ունեցող քառանկյուն սենյակներ կան միայն Իշկալա, Նավթ-քույու, Մեծ Խորխորյան, Փոքր Խորխորյան ու Հյուսիսային քարայրերում:

Մյուս ուշագրավ երևույթը որմնախորշերի առկայությունն է: Գրեթե բոլոր բազմասրահ համալիրներում արտաքին մուտքը տանում է դեպի ավելի փոքր սենյակներով շրջապատված սրահ. միայն Իշկալայում է, որ գոյություն ունի երկրորդ սրահը, որին են միանում երեք փոքր սենյակներ: Ամեն դեպքում այս սրահի ու սրան կից սենյակների հատակագծերում կրկնվում է Վանի ժայռափոր համալիրների հորինվածքների գլխավոր մտահղացումը: Հատկանշական է, որ այս դամբարանի առաստաղները կա՛մ հարթ են, կա՛մ կամարաձև, ընդ որում կամարաձև առաստաղներով են օժտված գլխավորապես հիմնական սրահները:

Հաջորդ հուշարձանախումբը, որին կցանկանայի անդրադառնալ, Ալթին-թեփեի դամբարանախումբն է: Այն գտնվում է Վանի թագավորության արևմտյան սահմանների մոտ, ներկայիս Երվնկայից ոչ շատ հեռու (տես քարտեզը): Հուշարձանը պեղող հնագետ Թահսին Օզգյուչի կարծիքով, այստեղ հայտնաբերված երեք դամբարանները թվագրվում են Սարդուրի 2-րդի, Ռուսա 1-ինի և Արգիշթի 2-րդի թագավորության տարիներով: Իր շարադրանքում նա պահպանում է 1-ին, 2-րդ և 3-րդ դամբարաններ հաջորդականությունը[26]:

Թեև Ալթին-թեփեի դամբարանները ժայռափոր չեն, սակայն, քանի որ կառուցված են լայն քարե բեկորներից և օժտված են Վանի ժայռափոր դամբարաններին բնորոշ մանրամասներով (ինչպիսին են, օրինակ, կանոնավոր տեղադրված խորշերով ուղղանկյուն սենյակները), դառնում են Վանի ժայռափոր դամբարանների ամենամոտ նմանակները, և դրանց համեմատությունը, բնականաբար, անհրաժեշտություն է դառնում:

Ամենավաղ թվագրություն ունեցող դամբարանը առաջինն է (նկ. 13): Այն կազմված է ներքին երեք հավասարաչափ սենյակներից: Դամբարանի մուտքով կարելի է մտնել կենտրոնական սրահը, որի երկու կողմերում տեղադրված են սրահից հավասար հեռավորության վրա գտնվող մեկական սենյակներ:

Կենտրոնական սրահն ունի հյուսիս-արևելք—հարավ-արևմուտք կողմնորոշում: Մտնելով կենտրոնական սրահ՝ դիտողը անմիջապես կտեսնի նրա երկու կողմերում տեղադրված որմնախորշերը, որոնցից ձախակողմյանը ավելի մակերեսային ու լայն է աջակողմյանից, այսինքն՝ համաչափությունն այստեղ թեթևակիորեն խախտված է: Մուտքից աջ ձգվող պատի վրա կա աջակողմյան սենյակ տանող մի դուռ: Այս սենյակը մյուսներից առանձնանում է վերին մասում կլորացող վեց որմնախորշերով: Որմնախորշերից երկուսը տեղադրված են հյուսիս-արևելյան, երկուսը՝ հարավ-արևմտյան, մեկը՝ մուտքի դիմացի պատին (փոքր-ինչ շեղված է դեպի աջ), իսկ վեցերորդը՝ մուտքից աջ (մուտքից դեպի դիմացի պատը նայելու դեպքում):

Որմնախորշերից յուրաքանչյուրը փորված է դամբարանի պատերի եռաշարք շարվածքի միջնամասում (երկրորդ շարք), հենց սալաքարի մեջ:

Ձախակողմյան սենյակի կանոնավոր մուտքը գտնվում է ուղիղ աջակողմյան դռան դիմաց: Այս սենյակն ունի վերևում կլորացող երեք որմնախորշ, որոնցից երկուսը փորված են հարավ-արևմտյան պատին, մինչդեռ երրորդը տեղադրված է հյուսիս-արևելյան պատի հյուսիսային անկյան մոտ:

Կողմնային սենյակի առաստաղները կառուցված են երկշարք քարերով: Քարերն այնպես են մշակված, որ կենտրոնում՝ երկշարք քարերի կցման բարձրակետում, առաստաղը կոնաձև է ստացվել: Սրահի ծածկը այլ կառուցվածք ունի. սենյակի գագաթն ավարտվում է մեկ քարի երկայնքով ձևավորված առաստաղով: Այդ քարը մշակված է այնպես, որ այն լայն կամարի տեսք է ստացել:

Դամբարանի մուտքը փակվել է նախ մի քարասալով, որ տեղադրված է կողմնային պատերի մեջ արված փոսորակներում, և ապա՝ ավելի հոծ մի սալով, որը հենված է եղել մուտքի երկու կողմերում դրված ավելի

* Տես ՍԿՀ, N 63.

A III 669

փոքր քարերի վրա: Հատակն ունի քարե հիմք, որի վրա ժամանակի ընթացքում գոյացել է հողի բարակ շերտ:

Դամբարանն արտաքուստ հատակագծում ուղղանկյունաձև է[27] և վատ է հարդարված. մասնավորապես, սենյակների առաստաղները կազմող քարերի միջև կան բացվածքներ, որոնք փակված են տարբեր ձևի ու չափերի անմշակ քարերով: Այս դամբարանի վրա եղել է բացօթյա մի կառույց, որը, Ռ. Օլգայուչի կարծիքով, հանգուցյալի պաշտամունքի հետ առնչվող տաճարի դեր է կատարել[28]:

Երկրորդ դամբարանը (նկ.14) ավելի պարզ կառուցվածք ունի. կազմված է հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ձգվող գրեթե ուղղանկյունաձև հատակագծով սրահից, որի հետևի պատը փոքր-ինչ ավելի երկար է առջևինից, որում բացված է դամբարանի մուտքը: Ունի նախամուտք:

Սրահի կողմնային պատերին կան երեք միանման հավասարատաբած որմնախորշեր: Մյուս երկու որմնախորշերը գտնվում են մուտքի դիմացի պատին: Դամբարահի որմնախորշերը առանձնահատուկ կառուցվածք ունեն, քանի որ՝ 1. Որմնախորշերն ունեն սալաքարե դարակներ, որոնք որմնախորշերը բաժանում են երկու մասի, ընդ որում առաջացած խորշերից ներքևինը միշտ էլ փոքր է վերևինից: 2. Ոչ թե որմնախորշերը փորված են պատի առանձին քարերի մեջ, այլ պատը շարելիս թողնվել են դատարկ տարածքներ որմնախորշերի համար (նման կառուցվածք ունեն և հաջորդ՝ Ալթին-թեփեի 3-րդ դամբարանի որմնախորշերը):

Քարե «դարակներն» ունեն կլոր փորվածքներ, որոնք համապատասխանում են դամբարանում հայտնաբերված բրոնզե անոթների հատակների չափերին: Դեպի դամբարան տանող նախասրահի կողմնային երկու պատերում կան մեկական այլ որմնախորշեր, որոնք, սակայն, չունեն դարակներ: Դեպի նախասրահ տանող մուտքը փակված է եղել երկու սալաքարերով, որոնցից առաջինը՝ արտաքինը և ավելի հաստաբեստը, հենված է եղել մուտքի եզրերի մոտ շարված քարերի վրա:

Դեպի նախասրահ տանող հաջորդ արգելքը կենտրոնում կամարաձև բացվածքով ավելի բարակ, լավ մշակված սալն է, որը ուղղահայաց դիրքով ագուցվել է նախասրահի պատի երկու կողմերում թողնված և սալաքարի հաստությանը համապատասխանող բացվածքների մեջ: Ընդ որում հենց այս նախամուտքի դռան դիմաց, ընդամենը 1,7 մ հեռավորության վրա է գտնվել առաջին դամբարանի փակ դուռը:

Դամբարանի հատակը քարից է, որի վրա ժամանակի ընթացքում գոյացել է հողի բարակ շերտ: Դամբարանը ծածկված է եղել սալաքարերով: Դամբարանի պատերի քարերը ներսից նրբորեն մշակված են, իսկ արտաքին երեսները փաստորեն անմշակ են թողնված[29]:

Ալթին-թեփեի երրորդ և ամենաուշ թվագրությունն ունեցող դամբարանը գտնվում է մյուս երկու դամբարաններից դեպի արևմուտք՝ տասնվեց մետր հեռավորության վրա: Այն փորված է բլրի լանջի մեջ և ծածկված է եղել քարերով ու կավի հոծ շերտով (նկ.15):

Այս դամբարանն առաջինի նման ունի երեք սենյակ, որոնցից առաջինը ուղղանկյունաձև է և զուրկ է որմնախորշերից: Դեպի այս սենյակն է տանում դամբարանի նախամուտքով օժտված և ժամանակին սալաքարով փակված մուտքը: Դեպի երկրորդ սենյակ կարելի է մտնել այդ սրահի պատի մեջ եղած անցումով: Երկրորդ սենյակը օժտված է ութ որմնախորշերով որոնցից հինգը գտնվում են հյուսիսային, իսկ երեքը արևելյան պատերին: Երկրորդ սրահի արևմտյան պատի մեջ բացվող մուտքով կարելի է անցնել հաջորդ՝ ամենավերջ ուղղանկյունաձև սենյակը: Սենյակի երեք՝ դիմացի և կողմնային պատերի վրա կան մեկական որմնախորշեր: Կողմնային երկու որմնախորշերը տեղադրված են պատերի կենտրոնական մասում, իսկ դիմահայացը փոքր-ինչ շեղված է դեպի հյուսիս:

Այս դամբարանի մուտքը կառուցվածքով նման է առաջին դամբարանի մուտքին, այսինքն՝ նախամուտքի խորքում, պատերի միջև դրված է մի սալաքար, իսկ դրսից դամբարանի մուտքը փակվել է մեկ այլ, կոպիտ մշակված սալաքարով: Ընդ որում, ի տարբերություն առաջին դամբարանի, այստեղ մուտքը փակող առաջին քարը նրբորեն մշակված է:

Դամբարանը քարե ծածկ է ունեցել: Հատակը նույնպես քարից է: Դամբարանի շինաքարերը արտաքին կողմից գրեթե անմշակ են:

Այս դամբարանի հատակագծային հորինվածքը տարբերվում է մյուսներից. առաջին և երկրորդ սենյակները տեղադրված են միմյանց զուգահեռ առանցքների վրա, մինչդեռ երրորդ սենյակի երկայնական ուղղվածությունը հեռանկարում ուղղահայաց է առաջին և երկրորդ սենյակների երկայնական պատերի նկատմամբ: Այս սենյակի նման դիրքը հորինվածքային նոր լուծում է և կարող է դիտվել որպես հավելում հիմնական լուծմանը (խոսքը առաջին և երկրորդ սենյակների հատակագծի մասին է)[30]: Ալթին-թեփեի այս դամբարանը միակն է, որը կողոպտված չի եղել և պեղվել է հնագետի կողմից: Ընդ որում առաջին սենյակի ամբողջ հատակը ծածկված է եղել կարասիով, այնպես որ ոտք դնելու տեղ իսկ չի եղել[31]: Երկրորդ սենյակում հայտնաբերվել է դուռը ծածկող սալաքար: Այս սենյակում են հայտնաբերվել և դամբարանում դրված երկու քարատապանները, որոնցից մեկի մեջ տղամարդու, իսկ երկրորդի մեջ կնոջ կմախքներ են հայտնաբերվել: Քարատապանները թե ներսից և թե դրսից խնամքով տաշված ու հղկված են եղել[32]: Ալթին-թեփեի դամբարաններն ունեն շատ ընդհանրություններ, որոնցից են որմնախորշերի հետևողական առկայությունը բոլոր դամբարաններում, քարի մշակման սկզբունքը. անմշակ՝ դրսից և տաշված ու հղկված՝ ներսից: Ընդհանուր է նաև դամբարանների քողարկման սկզբունքը և ձգտումը: Բոլոր դամբարանների սենյակներն էլ ուղղանկյունաձև են՝ կառուցված գլաքարե հիմքի վրա: Դամբարանների պատերը զուրկ են արձանագրություններից և հարդարանքից:

1859 թ. Աբաքս գետի ափին, այն ժամանակվա Երևանի նահանգի Շարուրի գավառում ռուս սահմանապահների Ալիշարի պահակետի դիմաց, այժմյան Իրանի

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

տարածքում, այստեղ ճամբարած քրդերը հայտնաբերել ու կողոպտել են մեկ ուրարտական դամբարան, որում պահվող առանձին նյութեր այնուհետև հայտնվել են Երևանում և ավելի ուշ տրամադրվել են Էրմիտաժին*:

Պահպանվել է Ալիշարի դամբարանը նկարագրող ֆրանսերեն լեզվով գրված և անստորագիր մի նամակ, որում դամբարանը ներկայացվում է որպես մոտ 75 մ բարձրությամբ մի ժայռի մեջ շինված կառույց: Այն կազմված է եղել միմյանց հետ հարդրակցվող երկու սենյակներից, կամարաձև առաստաղ ունեցող նախասրահից և հարթ, մշակված երեք սալաքարերով ծածկված ու յոթ ուղղանկյունաձև որմնախորշերով օժտված թաղման սրահից: Համաձայն անստորագիր նամակի տվյալների՝ որմնախորշերից յուրաքանչյուրում դրված է եղել մեկ կավանոթ: Դամբարանի նախամուտքը փակված է եղել մեծ քարաբեկորով, հատակը՝ ծածկված հողի բարակ շերտով (նկ. 16)[33]: Կարելի է ենթադրել, որ դամբարանի սենյակներն ուղղանկյունաձև են եղել: Սակայն նախասրահը ունեցել է անկանոն կառուցվածք ու գտնվելիս է եղել դամբանասրահից ավելի ցածր մակարդակի վրա[34]:

Վանա լճից արևմուտք՝ Մանազկերտի մոտ, Պատնոսից մոտ 40 կմ դեպի արևմուտք, Լեման-Հաուպտը ժամանակին հայտնաբերել է ուրարտական մեկ այլ դամբարան[35], որի մուտքն սկսվում է ժայռին փորված կամարաձև դրոմոսով: Նույն ժայռի հրեսին՝ ուղղանկյունաձև մի որմնախորշի մեջ փորագրված է Ռուսա 2-րդ արքայի արձանագրությունը[36]**: Այս դամբարանի ամենախոշոր սրահն առաջինն է, որի պատերից աջակողմյանում հղած մուտքով կարելի է անցնել դեպի երկրորդ՝ ավելի փոքր սենյակը: Այս մուտքը երիզված մի դեկորատիվ քիվով, որը, վան Լունի խոսքերով ասած, հիշեցնում է «հեծանների ծայրերով կազմված մի շարք»[37]: Ենթադրվում է, որ այս սենյակում դրվել է հանգուցյալը: Ենթադրվում է նաև, որ դամբարանը կառուցվել է Մինուա արքայի թագավորության տարիներին[38]:

Մանազկերտից ոչ հեռու, Արածանի գետի մոտ, Մշո դաշտից հյուսիս, Կայալի-դերե կոչվող վայրում, 1965 թ. Զառլյ Բառոնեյը հայտնաբերել ու պեղել է մեկ այլ ուրարտական ժայռափոր դամբարան[39]:Նա հակված է այս դամբարանը թվագրելու Սարյուրի 2-րդի կամ Ռուսա 1-ինի թագավորության տարիներով[40]: Դամբարանն ունի նախամուտք և վեց սենյակներ (նկ. 17), որոնցից երկուսի պատերի վրա կամարաձև որմնախորշեր կան: Այս որմնախորշերը (Ալթին-թեփեի 2-րդ դամբարանի որմնախորշերի նման) ունեն կճուճաձև փորվածքներ: Որմնախորշերն ունեն տարբեր բարձրություններ:

Երրորդ սրահի հետեի պատին կիսի մի հարթակ է բարձրանում, որի մեջ փորված է սարկոֆագ հիշեցնող մի խորշ, որտեղ ըստ Զառլյ Բառոնեյի կարող էր դրվել կարճահասակ մարդու դիակ:

Դամբարանի սրահներից երեքի տակ փորված են շշաձև հորեր, որոնցից յուրաքանչյուրն ունի շուրջ վեց մետր խորություն: Այս երեք հորերից երկուսը պեղելուց հետո Զառլյ Բառոնեյը հանգել է այն եզրակացության, որ դրանք ծառայել են որպես դամբանափոսեր: Այս հորերի հատակին գտնվել են լավ մշակված քարաբեկորներ, որոնք նրա կարծիքով ծառայել են որպես զոհասեղաններ:

Այս դամբարանի որոշ պատեր այնպես են փորվել, որ առաջացել են աստիճաններ՝ նման նրանց, որոնք առկա էին Խորխորյան քարայրում: 6-րդ սենյակի հատակի քարերի վրա շրջանաձև (գոգավոր) խոռոչներ են արված: Ընդ որում դամբարանը ժամանակին կողոպտվել է, և այդ պատճառով սալահատակի շատ քարեր շուռ եկած վիճակում են հայտնաբերվել: Վերջին թաղումից հետո դամբարանի մուտքը փակվել է բազալտի քարաբեկորներով, քարերով է լցվել ու հետո հողով ծածկվել նաև նախասրահի միջանցքը: Դամբարանը կառուցված է մեծ տուֆաբեկորի մեջ, և ամենայն հավանականությամբ այս տուֆի ցածրորակությունն է պատճառը, որ շինարարներին չի հաջողվել այստեղ ստեղծել նույնքան տպավորիչ մի կառույց, որպիսիք Վանի ժայռի ու Ալթին-թեփեի դամբարաններն են[41]: Կայալի-դերեի բոլոր սենյակներն էլ ուղղանկյունաձև են. սակայն չորրորդ և վեցերորդ սենյակները փոքր-ինչ շեղված են ու կատարյալ ուղղանկյունիներ չեն կազմում: Սենյակների առանցքները միմյանց նկատմամբ նույնպես կատարյալ զուգահեռ-ուղղահայաց չեն:

Արծկեում (Ադլջևաց) Սխիան սարի ուղղությամբ, Վանա լճի հյուսիսային ափերից մոտ 300 մ հեռու գտնվում է մի ուրարտական դամբարանադաշտ, որտեղ պեղումներ են կատարել Բաքի Օգյունն ու Էմին Բիլգիքը: Այստեղ պեղվել են նաև ժայռերի մեջ փորված գերեզմաններ: Այս դամբարանները սովորաբար ունենում են մեկ սրահ ու թաղակապ դրոմոս: Դամբարանների հատակը սովորաբար տեղադրված է լինում մուտքից երկու աստիճան ցածր: Այդ իսկ պատճառով դրոմոսի հատակը 80—90 սմ-ով բարձր է սենյակի հատակից: Դամբարանները կամարաձև, ավելի հազվադեպ՝ հարթ առաստաղ ունեն: Որմնախորշերի մեծագույն մասը նույնպես կամարաձև է: Զկողոպտված դամբարաններից մեկում հայտնաբերվել են աճյունասափորներ, որոնք իրենց չափերով համապատասխանում են որմնախորշերին: Այս դամբարաններում հաստատագրված են ինչպես

* Դամբարանում գտնված իրերի միայն մի աննշան մասն է հասել Էրմիտաժ. այն է՝ պղնձե կաթսայի երկու հարդարանք, որոնցից մեկը ցլի գլխի արձանիկ է, մյուսը՝ մարդու իրանով թռչունի քանդակ: Էրմիտաժում այժմ պահվում է նաև կաթսայի՝ ցլի ոտքի ձև ունեցող բրոնզե մի հենակ, ապարանջանի մի բեկոր և մարտական ձիու բրոնզե հարդարանքի տարբեր մանրամասներ, որոնց թվում՝ մի վանգակ՝ Արգիշթի 1-ին արքայի արձանագրությամբ (տես *Б. Б. Пиотровский.* Ванское царство, с. 25, 35-36. *Б. Б. Пиотровский.* Искусство Урарту, Л. 1962, с. 3-6): Արձանագրությունը բաղկացած է երկու բառից՝ «Արգիշթիի պահեստ»: Այս արձանագրությունը, ցավոք, չի նպաստում դամբարանի առավել ճգրիտ թվագրմանը (այն կարելի է թվագրել մ. թ. ա. մոտավորապես 8—7-րդ դարերով), քանի որ հայտնի են տարբեր ժամանակ Ուրարտուի գահին տիրած Արգիշթի անունով երկու արքաներ:

** Դժվար է ասել. կա՞ արդյոք առնչություն արձանագրության և դամբարանի միջև, քանի որ այս արձանագրությունն էլ թերի է ու առայժմ չունի հստակ թարգմանություն (տես УКН, N 279, с. 342–343):

դիաթաղման, այնպես էլ դիակիզման ծեսերով կատարված թաղումներ: Ընդ որում կան դեպքեր, երբ միևնույն դամբարանում հանգուցյալները թաղված են հիշատակված երկու տարբեր ծեսերով: Թեև այս դամբարանների պատերը այնպիսի նուրբ մշակում չունեն, ինչպես Ալթին-թեփեի դեպքում էր, սակայն Արծկեի ժայռափոր դամբարանների հատակագծերը համընկնում են Ալթին-թեփեի 2-րդ (միասբահ) դամբարանի հատակագծի հետ[42]:

Արծկեի այսպիսի հորինվածքն ունեցող դամբարանները հիշեցնող դամբարաններ են պեղվել և Սարիսու հարթավայրում՝ Պատնոսի մոտ, Ադլջեվազից Յուքարի Գոշմեկ տանող ճանապարհի մոտ: Այստեղ հայտնաբերված դամբարանները ծածկված են եղել լայն քարասալերով և հիշեցնում են նույն Ալթին-թեփեի 2-րդ դամբարանը[43]: Այստեղ հայտնաբերվել են նաև ժայռերի բնական ճեղքվածքներում շինված դամբարաններ, որոնք հիշեցնում են Իգդիրի ուրարտական դամբարանադաշտի թաղումները[44]:

Երեք սրահներից կազմված ժայռափոր դամբարան է հայտնաբերված Մակուից ոչ հեռու՝ Սանգարում (նկ. 4): Դեպի այս դամբարանի մուտքը տանում է ժայռի հյուսիսային կողմում փորված աստիճանաշարը:

Լայն, դամբարանի մուտքի մոտ նեղացող անցումով կարելի է մտնել առաջին՝ ամենամեծ սրահը, որի արևմտյան պատին փորված են երեք հավասարաչափ կամարաձև վերնամասով որմնախորշեր: Հարավային պատի մոտ կա բավականին երկար մի հարթակ, որի վրա կարելի է հանգուցյալին հասակով մեկ պառկեցնել: Նույն պատին կա ոչ խոր մի խորշ:

Արևելյան պատի վրա աջ և ձախ կողմերից բացվում են երկու մուտքեր դեպի երկու տարբեր սենյակներ՝ հարավայինն ու հյուսիսայինը: Հարավային սենյակն ունի քառակուսաձև հատակագիծ: Երեք սրահներից ամենափոքրը հյուսիսայինն է: Վերջինիս արևելյան պատին կա մի որմնախորշ, որը գտնվում է մուտքի և գլխավոր սրահի ծայր հյուսիսային որմնախորշի ուղիղ դիմաց: Եթե չլիներ այս մանրամասը, սենյակը բոլորովին զուրկ կլիներ որևէ հարդարանքից[45]:

* * *

Ուրարտական ժայռափոր դամբարանների այս քննությունը ակնհայտ է դարձնում այն, որ դրանց միջև գոյություն ունեն էական ընդհանրություններ. չնայած, որ դրանք զուրկ չեն նաև առանձնահատկություններից:

Ընդհանրությունները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. Դամբանասրահի հատակագծային լուծման հիմքում դրված է ուղղանկյուն զուգահեռանիստը: Հիմնականում ուղղանկյունաձև են և դամբանասրահները, որոնք միմյանց նկատմամբ մեծ մասամբ ունեն ճիշտ զուգահեռ կամ հեռանկարում ուղղահայաց դիրք:

2. Գրեթե բոլոր ժայռափոր դամբարանների համար սովորական է որմնախորշերի առկայությունը:

3. Շատ դամբարաններին բնորոշ է գլխավոր սրահի առկայությունը, որի շուրջն են խմբվում մյուս սենյակները և որի միջով պետք է անցնել փոքր սենյակներ մտնելու և կամ դամբարանից դուրս գալու համար*:

4. Ակնհայտ է նաև կողմնային սենյակների սիմետրիկ դասավորման և որմնախորշերը՝ միմյանցից հավասար հեռավորությամբ դասավորման միտումը:

5. Եվ վերջապես, բոլոր ուրարտական դամբարաններին բնորոշ առանձնահատկությունը այն է, որ դրանք կա՛մ գտնվում են դժվարամատչելի վայրերում, կա՛մ էլ խնամքով քողարկված են:

---

* Այս առումով ուշագրավ է, որ դեռևս Կ. Ֆ. Լեման-Հաուպտը հնարավոր էր համարում ուրարտական ժայռափոր դամբարանները թվագրել՝ ելնելով դրանց հատակագծային առանձնահատկություններից: Այսպես, Պաղեստինում հայտնաբերված՝ ավելի վաղ թվագրություն ունեցող ժայռափոր շատ կառույցների փոքր սենյակները խմբված են երկրորդ մեծ դահլիճի շուրջը և ոչ թե առաջինի, ինչպես բնորոշ է ուրարտական նման կառույցների մեծ մասին: Սակայն Ինչալան ունի երկու դահլիճ, մի հանգամանք, որը հիմք է տվել Կ. Ֆ. Լեման-Հաուպտին Ինչալան թվագրելու ավելի վաղ, մինչուրարտական ժամանակաշրջանով: Այլ խնդիր է, որ այս տեսակետն անընդունելի է համարում Բ. Բ. Պիոտրովսկին (տես *Б. Б. Пиотровский.* Ванское царство, с. 218–219).

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՅՌԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Թեև սովորաբար համարվում է, որ հին հասարակություններում կան մշակութային տարրեր, որոնք ալդում են հասարակության բոլոր նյութական արտադրանքների վրա, այնուամենայնիվ, դա ընդունելի չէ, հատկապես ճարտարապետության պարագայում: Շինության չափերը, հորինվածքը և հարդարանքը մեծապես պայմանավորված են նրա գործառույթով, առկա շինանյութով, տեխնոլոգիայով, շրջակա միջավայրով և կլիմայով: Դա վկայում է, որ մարդու պատճառաբանված վերահսկողությունից վեր գոյություն ունեն գործոններ, որոնք ազդում են նրա ստեղծագործման ընթացքի, այսինքն՝ ճարտարապետական նախագծման վրա:

Ուրարտական գրեթե բոլոր դղյակներն ու ամրոցները կառուցված են հեշտ պաշտպանելի վայրերում, սովորաբար բարձունքների վրա, որոնք ինքնին, իրենց ունեցած աշխարհագրական առանձնահատկության շնորհիվ կարևոր էին ռազմավարական առումով: Սակայն ոչ միայն ամրոցներն ու դղյակներն էին կառուցվում անառիկ վայրերում. հաճախ դժվարամատչելի դիրքեր էին ընտրվում և դամբարանների կառուցման համար: Ինչպես վերեից իջնող աստիճանաշարի առկայությանը՝ դժվարամատչելի էին և Վանի ժայռի վրա եղած դամբարանները, եթե փորձ կատարվեր նրանց մոտենալու ժայռի ստորոտից[46]: Կայալի-դերեի մուտքն էլ անհասանելի բարձրության վրա է գտնվել: Դամբարանների մուտքերը, ինչպես տեսանք, ամուր փակված էին լինում: Դամբարաններն իրենք հաճախ խնամքով քողարկվել են, մասնավորապես, Ալթին-թեփեում, թերևս նաև այդ նպատակով, դամբարանների վրա կերտվել են վերնակառույցներ[47]:

Ինչպես արդեն ասվել է, դամբարանների ամենաակնառու առանձնահատկությունը ուղղանկյունաձև հորինվածքն է: Սա բնորոշ մի երևույթ է ընդհանրապես ուրարտական ճարտարապետության համար: Այս առումով բացառություն չէ և ամրոցաշինությունը: Կարմիր բլուրի (Թեյշեբաինի) ամրոցը բաղկացած է ուղղանկյուն կտրվածքներ ունեցող պարսպի մեջ առնված քառակուսի և ուղղանկյունաձև սենյակներից, դահլիճներից ու միջանցքներից: Ուղիղ անկյուններ չեն կալմում միայն պարսպի արևմտյան ու հարավ-արևելյան հատվածները:

Ժայռափոր դամբարաններում խոտորված ուղղանկյունաձև դահլիճների առկայությունը պայմանավորված է ապառաժի բնական անհարթություններով, իսկ Կարմիր բլուրում՝ բլրի լանջի թեքությամբ: Ուղիղ անկյուններով օժտված պարիսպ կառուցելն անհարթ մակերևույթի վրա ավելի դժվար է, իսկ պաշտպանունակությունը՝ ավելի փոքր (նկ. 20)[48]: Կարմիր բլուրի և այլ ուրարտական ամրոցների հատակագծերին[49] ուղղված հպանցիկ հայացքն իսկ ակնհայտ է դարձնում այն հանգամանքը, որ եթե տեղանքը թույլ տար, նախընտրելի կլինեին բացառապես ուղղանկյունաձև հորինվածքները: Ամրոցների պարիսպների շատ մանրամասեր, ինչպես օրինակ, ոբմնահեցերն ու շարվածքի քարերը, ուղղանկյունաձև են, այդպիսին են և դամբարաններում պեղված որմնախորշերից շատերը: Ուրարտական տաճարների հատակագծերն էլ ունեն քառակուսու կամ ուղղանկյան ձև[50], իսկ ամրոցների պալատական շինությունները, պահեստասենյակները, բնակելի ու վարչական նշանակության կառույցները հաճախ իրար հետ կապված են ուղղանկյունաձև սրահի միջոցով[51]:

Ուղղանկյունաձև հորինվածքի հետ առնչվող մյուս առանձնահատկությունը սենյակների առանցքների միմյանց նկատմամբ լուգահեռ-ուղղահայաց կողմնորոշումն է: Պալատական և վարչական շինությունների պարագայում նման կողմնորոշումը ձեռք է բերվում շնորհիվ այն բանի, որ ուղղանկյունաձև սենյակներն ունենում են ընդհանուր պատ:

Կարմիր բլուրի քաղաքատեղիի առաջին բնակելի տները փաստորեն չեն համապատասխանում այս սկզբունքին: Մ. վան Լունի կարծիքով այս տները կառուցվել են անկաշկանդ, քանի որ փողոցների ցանցը դեռևս հաստատված չէր և չկային ուղեգծեր, որոնց համապատասխան դասավորվեին տները:

Հետագայում կառուցված շատ բնակարանների հատակագծեր նույնպես անկանոն են, քանի որ դրանք հիմնվում էին արդեն անկանոն հատակագիծ ունեցող տների մոտ և այդ տներով ստիմանատիակված տարածության մեջ[52]:

Դամբարանների ներքին հարդարմանն ու ապահովությանը ուրարտացիներն անհամեմատ ավելի մեծ ուշադրություն էին դարձնում, քան արտաքինին: Օրինակ՝ Իշկալայի ներքին՝ նրբորեն մշակված ու հղկված պատերը շինության զուսպ հարդարված ճակատամասի հակադրությունն են:

Բազմաթիվ որմնախորշերի նախապես որոշված դիրքը և դամբարաններն ապահով փակելու հոգածությունը ևս ընդգծում են այս հանգամանքը: Թերևս առարկության տեղիք կարող են տալ միայն Վանի դամբարանների արտաքին շքեղ հարդարանքը, չափա-

կանց տպավորիչ աստիճանները, արձանագրությունները, որմնախորշերը և սանդղավանդակները:

Քիչ ուշադրություն էր դարձվում նաև դամբարանային կառույցների չիրեպյող մասերի հարդարմանը: Օրինակ՝ Ալթին-թեփեում դամբարանների պատերի և առաստաղի քարերը արտաքին կողմից անմշակ են թողնվել՝ այն նկատառումով, որ, դամբարանի կառուցումից հետո հողով ծածկվելով, անտեսանելի պիտի դառնային: Մինչդեռ նույն քարերը նիրսի կողմից խնամքով տաշվել են: Նույնը դիտվում է և Թոփրաք-կալեի տաճարում, որտեղ նույնպես շինաքարերի ներքին երեսները լավ մշակված են, իսկ արտաքինները միայն եզրատաշ ունեն[53]*:

Սակայն այս երևույթը բնորոշ չէ ուրարտական այլ տաճարների համար, որոնց պատերը թե՛ նիրսի և թե՛ դրսի կողմից սովորաբար լավ մշակված էին լինում և ուրիշ չէին հարդարանքներից[54]:

Ուրարտական ամրոցների պարիսպները արտաքին կողմից օժտված են ոմնահեցերով, իսկ ներսից հարթ են: Այդ պարիսպների վերին քարերի արտաքին շարը սովորաբար ատամնավոր ավարտ էր ունենում:

Բ. Բ. Պիոտրովսկին գտնում է, որ դամբարանային կառույցների շատ մանրամասներ կուգադրելի են վերիրկրյա շինությունների հետ: Մասնավորապես, ելնելով դամբարաններին բնորոշ երկու տեսակի ծածկերի առկայությունից, նա ենթադրում է, որ վերիրկրյա շինություններն էլ կարող էին ունենալ ինչպես հարթ, այնպես էլ թաղակապ առաստաղներ: Ընդ որում, հարթ ծածկերը կապվում էին գերաններով, որոնց վրա դրվում էին ավելի բարակ ձողեր, այս ամենը ծածկվում էր ճյուղերով, որոնց վրա էլ լցվում էր կավահողը: Նրա կարծիքով թաղակապ առաստաղները կառուցվում էին աղյուսից[55]:



* Սա քարի մշակման յուրատեսակ, Հայկական լեռնաշխարհում միայն ուրարտական շինարվեստին բնորոշ գեղեցիկ ձև է, որը Հայաստանում երբեմն կիրառվում է և այժմ: Նման (եզրատաշ) քարեր դրված են նաև Արգիշթիխինիլի ու Դովրիի ուրարտական ամրոցների պատերի շարվածքներում:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Եթե ստույգ է այն կարծիքը, թե որպես տվյալ տիրակալի հզորության ու հարստության ցուցանիշ կարող է ծառայել իր համար կառուցված դամբարանը, ապա մենք, թերևս, կարող ենք, հիմք ունենալով ուրարտական համապատասխան նյութը, հետազոտել Ուրարտուի սոցիալ-տնտեսական կառուցվածքին առնչվող որոշ հարցեր: Սկսենք Վանի ժայռի դամբարաններից: Ժայռը, որի մեջ փորված են այս դամբարանները, բյուրեղային ամուր կրաքարից է[56]: Ամենայն հավանականությամբ, այդ դամբարանները փորվել են պողպատե մուրճ-հատիչներով, որոնց օրինակները հայտնաբերված են Բաստամում (նկ. 3)[57]:

Ժայռը փորելու ժամանակ բանվորներից երկուսը, թերևս, աշխատել են մուրճ-հատիչով, իսկ երկու այլ մարդ դուրս են տարել կոտրտված քարերը*:

Յուրաքանչյուր խորանարդ մետր ժայռ փորելու համար կատարված ծախսի նախահաշիվը վերարտադրելու համար օգտագործել ենք Ջոն Քոլզի[58], Հիյերդալի[59], Հիստերի ու Հիյզիրի[60], ինչպես և Ինգերսոլի[61] կատարած փորձերի արդյունքները, որոնք, սակայն, տվյալ դեպքում բավարար չեն: Այդ իսկ պատճառով օգտվել ենք փորձառու գերեզմանափորի[62] և քանդակագործի[63] այս կապակցությամբ կատարած դիտողություններից: Կատարված աշխատանքը չափելու համար օգտագործել ենք «մարդ-ժամ» և «մարդ-օր» միավորները, որտեղ (պայմանական) աշխատանքային մեկ «մարդ-օրը» հավասար է ութ «մարդ-ժամի»: Ասեմ նաև, որ հաշվարկումների ժամանակ նկատի են առնված տարբեր տեսակի քարերի հետ կատարված փորձերի արդյունքները: Յուրաքանչյուր դամբարանից հանված ժայռաբեկորի ծավալը որոշելիս եղել ենք դամբարանի բոլոր սենյակների, որմնախորշերի, մուտքերի և այլ փորվածքների գումարային ծավալից:

Աղյուսակ 2-ում բերված տվյալները ավելի ընկալելի դարձնելու համար ասեմ, որ բոլորիս քաջ հայտնի Զատկի կղզու հինգ մետր բարձրությամբ քարե գլուխը քանդակելու համար վեց քարտաշներ մուրճ-հատիչներով պետք է աշխատեին շուրջ մեկ տարի[64]: Թեոթիհուականի Արևի տաճարի (բուրգի) կառուցումը կարող էր տևել մոտ քսանմեկ տարի, եթե վեց հազար մարդ տարին հարյուր օր, օրական հինգ ժամ աշխատեր այնտեղ[65]: Վանի միջնաբերդի պատի հիմքի «աստիճանները» հիսուն մետր երկարությամբ փորելու համար, ըստ իմ հաշվարկների, հարյուր մարդ պետք է աշխատեին քսաներկու օր** (2200 «մարդ-օր»):

Աղյուսակ 2

Հուշարձանի վայրը	Անունը	Ծավալը ($մ^3$)	«Մարդ-ժամ» փորելիս	«Մարդ-ժամ» պեղվածքը տանելիս[66]	Ընդամենը «մարդ-օրով»
Վան	Մեծ Խորխոր	405	71280	7290	9821,25
	Փոքր Խորխոր	113	19888	2034	2740,25
	Նալթ-քուլու	978	172128	17604	25672,50
	Սարդուրիի ջիրիմի տակի դամբարանը	37	6512	666	897,25
	Իշկալա	529	93104	9542	12829,25
	Մեծ քարայր	531	93456	9578	12876,75
	Հյուսիսաեայայ քարայր	451	79376	8118	10937,75
	Զինապահեստի մոտի քարայրը	62	10912	1116	1503,50
Սակու	Սանգար	126	22176	2268	3055,50
Կայալի-դերե	Կայալի-դերե	382	36672	6876	5444,75
Աղթին-թեփե	Աղթին-թեփե 1-ին	384	5476	1680	854,50
	Աղթին-թեփե 2-րդ	58	3712	1160	619
	Աղթին-թեփե 3-րդ	65	4160	1300	682,50

Աղթին-թեփեի դամբարանների դեպքում տրված է շարվածքի քարերի միագումար ծավալը:

Իմ հաշվարկներով, Նալթ-քուլու քարայրը կառուցելու համար այնտեղ մոտավորապես երեք տարի աշխատել են շուրջ քսանհինգ բանվոր (տարածքի սահմանափակության պատճառով ավելին քարայրը չէր տեղավորի): Պետք է նշել, որ Աղթին-թեփեի 1-ին դամբարանը կառուցելու համար ծախսվել է 894, երկրորդ դամբարանի կառուցման համար՝ 619, իսկ երրորդի համար՝ 682 «մարդ-օր»[67]:

Բնական է, որ դամբարանի կառուցման համար նման ծախսեր կարող էին թույլ տալ միայն արքայական

* Չնայած այն հանգամանքին, որ մ. թ. ա. 9-րդ դարի վերջից Ուրարտուում սկսվում է երկաթի լայն տարածման դարաշրջանը, այնուամենայնիվ, պողպատե գործիքները դեռևս շատ թանկ արժեին, և կարելի է ենթադրել, որ մեկ մուրճ-հատիչով աշխատում էր երկու բանվոր (երբ մեկն աշխատում էր, մյուսը հանգստանում էր) և գործիքի պարապուրդ չէր առաջանում:

** Վանի միջնաբերդը կառուցել է Սարդուրի 1-ին արքան, թերևս, մ. թ. ա. 9-րդ դարի հիսունական թվականներին: Ընդ որում, ամրոցի շինարարության համար նախատեսված քարերը (եթե ոչ բոլորը, ապա դրանց մի մասը) նա բերել է տվել Վանա լճի հյուսիսային ափից՝ Մանազկերտի մոտ գտնվող քարհանքերից, ըստ իր ասուրերեն գրված արձանագրության տվյալների՝ Ալնիուլու քաղաքից (УКН, N 1-2). Վանի ամրոցի պարսպի շատ հատվածներ բարձրացված են ժայռի լանջին արված աստիճանաձև լայն կտրվածքների վրա (տես *Б. Б. Пиотровский*. Ванское царство, с. 39), մի երևույթ, որը բնորոշ էր ուրարտական ամրոցաշինությանը և հաջորդ դարերում: Մասնավորապես, նման հիմքեր ունեն և Արմավիրի ուրարտական ամրոցի պարսպի որոշ հատվածներ:

ընտանիքի ներկայացուցիչները կամ իրենց դիրքով նրանց մոտ մարդիկ:

Արծկեի դամբարանների սոցիալական պատկանելության մասին խոսելիս Էմին Բիլջիքն ու Բաքի Օգյունը պնդում են, թե դրանք «հասարակ» մարդկանց դամբարաններ են[68]:

Ցավոք, Արծկեի պեղումների ամենամյա հաշվետվություններում այդ դամբարանների չափագրությունները բացակայում են, և ես հնարավորություն չունեցա կազմելու այդ աշխատանքների աշխատուժի ծախսի նախահաշիվը: Արծկեի դամբարանների նմանակները տարածվում են մինչև Պատնոս, և, թերևս, ճիշտ չէ այդ դամբարանները միայն ստորին խավի ներկայացուցիչներին վերագրելը, քանի որ դրանք կարող էին պատկանել և Ուրարտուի միջին խավերի ներկայացուցիչներին: Ամեն դեպքում այս հարցը, որ անչափ կարևոր եմ համարում ՈՒրարտուի սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության առումով, առայժմ, ըստ իս, մնում է բաց:

ՈՒրարտական ժայռափոր դամբարանները աշխարհի համանման այլ կառույցների համեմատությամբ դիտվում են որպես խոշոր ձեռնարկումներ: Մյուս կողմից, ակնհայտ է, որ դրանք անհամեմատ ավելի քիչ նյութական ու մարդկային ռեսուրսներ պահանջող նախագծերի իրագործումներ էին: Բայց այս համեմատությանը անհրաժեշտ է մոտենալ որոշակի վերապահումով և խուսափել հապճեպ եզրակացություններից՝ նկատի ունենալով ՈՒրարտուՀ և Մերձավոր Արևելքի այլ երկրների կացության տարբերությունները: Հայկական լեռնաշխարհից տարբեր են, օրինակ, Եգիպտոսը և Միջագետքը իրենց աշխարհագրական դիրքով, ուստի և այլ է նման կառույցների նկատմամբ եղած պահանջը: Կամ՝ Հայաստանի լեռնագագաթներին բուրգի կառուցումը բոլոր առումներով անիմաստ կլիներ, իսկ եթե նման փորձ արվեր էլ, ապա այդ կառույցը Նեղոսի հովտում կառուցված նման շինությունից անհամեմատ ավելի թանկ կնստեր:

ՈՒրարտուում չեն եղել նաև գիկուրատներ. լայն հիմքեր ունեցող նման կառույցները հարմար չէին լեռնային երկրի համար, որտեղ միշտ էլ զգացվել է երկրագործին այնքան անհրաժեշտ հողի սակավությունը :

ՈՒրարտական դամբարանները չէին կառուցվում ո՛չ մշակովի հողատարածություններում և ո՛չ էլ բլուրների գագաթներին, այսինքն՝ խնայվում էին ինչպես դաշտերը, այնպես էլ ռազմավարական առումով կարևոր դիրքերը:

Միապետի հզորության ու հարստության մասին պատկերացում կազմելու համար, բացի այլ սկզբնաղբյուրների ընձեռած տվյալներից, ինչպես ասվեց, կարելի է նկատի ունենալ նաև արքայի կամ նրա մերձավորների դամբարանների վրա կատարված ծախսի չափը. կարելի է ենթադրել, որ որքան թանկ է նստել դամբարանը, այնքան հզոր է եղել տվյալ տիրակալը: Դժբախտաբար, տակավին ոչ բոլոր դամբարաններն են ճշգրիտ թվագրված: Այնուհանդերձ թվագրության ենթակա ոչ մեծ թվով դամբարանների համեմատությունից իսկ հետաքրքիր պատկեր է ստացվում: Այսպես, Մեծ քարայրը և Վանի ժայռի հյուսիսային երեսին փորված քարայրը (որը կարող է և դամբարան չլինել) և Մանապկերտի դամբարանը թվագրվում են Մինուայի թագավորության տարիներով: Արգիշթի 1-ին արքայի տիրակալության տարիներով են թվագրվում Խորխորյան երկու քարայրերը (որոնք երբեմն դիտվում են իբրև մեկ հավաքական նախագծի արդյունք[69]): Ենթադրվում է նաև, որ Նավթ-քուլուն, Ալթին-թեփեի 1-ին դամբարանը և Կայալի-դերեն կառուցվել են Սարդուրի 2-րդի օրոք: Այսինքն՝ ամենաշատ ծախս պահանջող այս դամբարանները կառուցվել են այն ժամանակ, երբ ուրարտական պետությունը հասել էր իր հզորության գագաթնակետին[70]:

Կատարված ծախսի առումով նվազ արժեքավոր Ալթին-թեփեի 1-ին և 2-րդ դամբարանները կառուցվել են Արգիշթի 2-րդ և Ռուսա 2-բդ՝ համեմատաբար թույլ արքաների տիրակալության տարիներին:

Այժմ կցանկանայի խոսել այն եզրակացությունների շուրջ, որոնց կարելի է հանգել գլխավոր հատակագծերի և սենյակների դասավորության խնդրի քննարկումից:

Իմ եզրակացությունները կբխեն այն հիմնադրույթից, որ յուրաքանչյուր հասարակության ստեղծած արտադրանքն այս կամ այն կերպ արտացոլում է տվյալ հասարակության բնույթը: Բնականաբար, եթե վիճելի համարվի այս դրույթը, ապա ստույգ չեն կարող լինել նաև սրանից բխող եզրակացությունները, որոնք ինքս էլ առաջադրում եմ միայն որպես հիպոթեզ ու վարկած:

Երկրորդ գլխում արդեն առիթ ունեցանք խոսելու ուրարտական ճարտարապետական արվեստում ընդունված ուղղանկյուն ձևերի և կենտրոնական սրահի կարևորության ու հաճախակի օգտագործման մասին: Բնականաբար, եթե փորձենք այս հորինվածքային առանձնահատկության հիման վրա կատարել սոցիալ-տնտեսական ընդհանրացումներ, ապա կլինեն առարկություններ այն առումով, թե ուղղանկյուն հատակագծով շինությունները ամենապարզ ու դյուրին իրագործվող նախագծերն են, և չարժե դրանց առանձնակի կարևորություն տալ: Սակայն, մյուս կողմից, դամբարանային ճարտարապետության ու շինարվեստի բնագավառում այդ հորինվածքն ունեցող շինությունների կատարելությունը և դրանց անհերքելի կապը վերգետնյա պաշտամունքային ու աշխարհիկ շինությունների հետ առիթ են տալիս մտածելու, որ, պարզությունից զատ, դրանք ունեին նաև ավելի խորունկ ու խոհական արմատներ:

ՈՒղղանկյունաձև հատակագծեր ու մանրամասներ ունեցող հորինվածքներով շինություններն ու համալիրները տարածված են աշխարհով մեկ. դրանք սովորական էին նաև ՈՒրարտուի հարևան երկրների, մասնավորապես ռազմատենչ Ասորեստանի (նկ. 19) և խեթական աշխարհի համար (նկ. 20, համեմատիր նաև նկ. 19, 21): Այս երկրների թվում, սակայն, ուրարտացիներն առավել համառություն ցուցաբերեցին ճարտարապետական այդ ոճը պահպանելու և կատարելագործելու հարցում:

Ի՞նչ կարող է խորհրդանշել կենտրոնական սրահի

շուրջ կողմնային սենյակների տեղադրության շեշտվածությունը: Եղած սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ ակնհայտ է դառնում, որ ուրարտական թագավորների մշտական հոգսն է եղել պետության պաշտպանությունը ինչպես իրենց դարավոր թշնամի Ասորեստանից, այնպես էլ տեղական կառավարիչների ու ցեղերի կենտրոնախույս նկրտումներից: Այս իրադրության մեջ պետությունը չէր կարող գոյատևել, եթե չունենար խիստ ռազմականացված կուռ կառուցվածք, որն իր արտահայտությունն է գտել ժայռափոր դամբարանների հորինվածքում: Ենթադրում եմ նաև, որ ուրարտական ժայռափոր դամբարանների հիմնական ձևերի տարբերությունների ու առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարող է օգտակար տեղեկություններ տալ Նաիրի «երկրների» ունեցած քաղաքական և մշակութային ընդհանրությունների մասին: Կամարակապ խորշերի աշխարհագրական տարածման վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք նախընտրելի են եղել երկրի արևմտյան շրջաններում, և ըստ երևույթին Վանա լճից արևմուտք ընկած տարածքում մեծ էր որմնախորշերի կառուցման այս՝ արևմտյան ոճի, ազդեցությունը[71]:

Որոշակի և ակնառու առանձնահատկություններով է օժտված և Կայալի-դերեի դամբարանը: Այստեղ, եթե սենյակների ու սրահների դասավորությունը հիշեցնում է մյուս բազմասրահ դամբարանների հատակագիծը, ապա կենտրոնական սրահի չափերն ու դերը վոքր-ինչ այլ են, քանի որ կենտրոնական սրահը եղած սենյակներից ամենամեծը չէ և, բացի այդ, մուտքը դրսից անմիջականորեն այս սրահը չի բերում, այլ կա սրան նախորդող մեկ այլ սրահ, ուր և սկզբնապես կարելի է մտնել՝ դուրս գալով դրոմոսից, այսինքն՝ հիմնականը ոչ թե առաջին, այլ երկրորդ սրահն է: Հատկանշական է, որ այս դամբարանում չի պահպանված նաև ո՛չ սենյակների վուգահեռ-ուղղահայաց առանցքային կողմնորոշումը և ո՛չ էլ առաստաղների հարդարման միօրինակությունը: Այս առանձնահատկությունները թերևս կարելի է բացատրել ժայռի ցածրորակությամբ[72]: Սակայն գոյություն ունեցող հաջորդ առանձնահատկությունը չի կարող բացատրվել այս հանգամանքով: Խոսքը երրորդ և հինգերորդ սենյակների տակ եղած ստորգետնյա կոնաձև փորվածքների մասին է (նկ. 17), որոնք վուգահեռներ չունեն ուրարտական համանման այլ հուշարձաններում[73]: Եթե դրանք ծառայել են որպես դամբանասրահներ, ինչպես համարում է Չառլզ Բառնեյը[74], ապա հարկ կլինի ենթադրել, որ Կայալի-դերեում թաղում է կատարվել դամբարանի երկու տարբեր մասերում՝ որմնախորշերում և կոնաձև փորվածքներում: Ամեն դեպքում, դիտարկված բոլոր դամբարաններն էլ ունեցել են հատուկ տեղ, որտեղ դրվել է դիակը (դիաթաղման ծեսով թաղման ժամանակ՝ հարթակ, քարատապան, ստորգետնյա տապան, մեծ որմնախորշ, դիակիզման ծեսով թաղման ժամանակ՝ աճյունասափոր): Այս երևույթը բնորոշ էր գրեթե բոլոր ուրարտական դամբարանների համար, մանավանդ եթե դրանք պատկանում էին ազնվական խավի ներկայացուցիչներին:

Ինչպես ասվել է, մեծ ծախս պահանջող ուրարտական դամբարաններ հայտնի են երկրի տարբեր, երբեմն միմյանցից շատ հեռու գտնվող շրջաններից: Վերոհիշյալ ու տարածքային այլ տարբերությունները, կրոնական հավատալիքների տարբերությունների արտացոլումը լինելու փոխարեն, կարող են պայմանավորված լինել կառավարիչների ցանկությամբ և մայրաքաղաքից նրանց մեկուսացածությամբ[75] կամ էլ կարող են բացատրվել երկրի շրջաններում էթնիկապես տարբեր բնակչության առկայությամբ: Մատչելի փաստական տվյալները մեզ չեն տրամադրում այս խնդրի լուծման համար անհրաժեշտ տարբերիչ մանրամասեր: Կարելի է ենթադրել միայն, որ այս երևույթը պայմանավորված էր հիշատակված գործոնների ամբողջությամբ և տվյալ յուրաքանչյուր վայրի առանձնահատկություններով:



ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԸ, ԴՐԱՆՑ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մահը չի ճանաչում ո՛չ աշխարհագրական ու ժամանակագրական և ո՛չ էլ էթնիկական ու սոցիալական սահմաններ: Այդ խորհրդավոր երևույթը միշտ էլ եղել է փիլիսոփաների ու կրոնագետների խորհրդածության առարկան: Կան բազում տվյալներ այն մասին, որ նախապատմական հասարակություններում ևս գոյություն են ունեցել մահվան մասին որոշակի և երբեմն միմյանցից տարբեր պատկերացումներ, որոնք որոշակի ազդեցություն են թողել տվյալ հասարակության մշակութային կյանքի վրա: Գրեթե բոլոր կրոնական տեսություններում մահը չի դիտվում որպես գոյության լիակատար ավարտ. ենթադրվում է, որ գոյություն ունի հետմահու կյանք. մարդու հոգու կամ էության շարունակական գոյություն: Ըստ էության կա ձգտում՝ մերժելու մահվան գոյությունն ամբողջապես: Թերևս՝ հենց դա է պատճառներից մեկը, որ մարդ ձգտում է իր մասին հիշողությունը հավերժացնելու և կամ երկարաձգելու որոշակի գործունեությամբ՝ մասնավորապես, կառուցելով հսկայական ու վեհաշուք հուշակոթողներ:

Սույն հետազոտության նպատակը, սակայն, մահվան ու հավերժության գաղափարների վերլուծությունը չէ: Այստեղ դամբարանները դիտվելու են որպես մարդու գործունեության արդյունք, որոնց մանրամասն ուսումնասիրությունը կարող է լույս սփռել Ուրարտուի բնակիչների մտածելակերպի ու երևակայության հարցի վրա:

Քանի որ այս դամբարանները եղել են բավականին թանկ նստող և աշխատատար կառույցներ, և տարբեր արքաների անունից գրված շատ արձանագրություններ փորագրված են դրանց հարևանությամբ, ապա կասկած չի կարող լինել, որ դրանք կառուցվել են վարնախավի համար: Հետևաբար և ծագող ոչ բոլոր հարցերին պատասխան տվող մեր այս աշխատությունը կարող է տվյալներ հաղորդել հիմնականում ուրարտական հասարակության վերնախավի ունեցած պատկերացումների մասին: Ամեն դեպքում չենք կարող պնդել, թե ուրարտական հասարակության մյուս խավերին պատկանող մարդիկ այս ժայռափոր հուշարձաններն իսկապես ընկալել են որպես անմահության ու հետմահու ծաղկող կյանքի հավերժության արտացոլանք:

Պաշտամունքի խնդրին անդրադառնալուց առաջ, բնականաբար, անհրաժեշտ է պարզաբանել այդ դամբարանների մանրամասների գործառական նշանակությունը:

Գրեթե բոլոր ուրարտական դամբարաններն օժտված են որմնախորշերով: Բնական է ենթադրել, որ դրանք էական դեր են խաղացել ուրարտական թաղման ծեսում: Դրանց նշանակությունը պարզող առաջին տվյալները հայտնի դարձան Ալթին-թեփեի 2-րդ դամբարանի պեղումների ընթացքում, որտեղ հայտնաբերվեցին որմնախորշերում դրված իրեր: Այս դամբարանում, բացի ընդարձակ նախամուտքում եղածներից, բոլոր մյուս որմնախորշերում, ինչպես ասվել է, կային շրջանաձև փոսիկներ ունեցող դարակներ, որոնք իրենց չափերով ճշգրտորեն համապատասխանում էին դամբարանում գտնված բրոնզե անոթների հատակներին: Կայալի-դերեից գտնված անոթները ևս համապատասխանում էին որմնախորշերի չափերին: Որմնախորշերի ներսում եղած քարե «կճուճները», որոնց մեջ Չառլզ Բառնեյի կարծիքով հեղուկ զոհաբերություններ են լցվել, տաշված են նույն այն ծակոտկեն քարից, ինչ և կոնաձև հորերը: Բառնեյը մերժում է այն միտքը, թե այս կոնաձև հորերի ստորին մասերը ծառայել են որպես ջրի պահեստարաններ՝ նկատի ունենալով հենց քարի որակը: Սակայն, քանի որ «կճուճները» փորված են նույն կառուցվածքն ունեցող ժայռի մեջ, ապա բացառված չէ, որ ունենային կիրառական այլ նշանակություն և, Ալթին-թեփեի 2-րդ դամբարանի դարակավոր որմնախորշերի նման, նախատեսված լինեին աճյունասափորների համար: Չնայած այս դամբարանը լրջորեն վնասված է, մասնավորապես ավերված է հարավային պատի որմնախորշերի մի զգալի մասը, այնուամենայնիվ բացառված չէ, որ այն սավոններում, որոնք հարմարվում էին որմնախորշերի կլոր ներծկվածք ունեցող փոսիկներին, զոհաբերություններ պահվեին, հնարավոր է և հեղուկ վիճակում: Դարակավոր որմնախորշերի վերևի բաժանմունքները ավելի լայն են, քան ստորինները: Թահսին Օզգյուչը ենթադրում է, թե ներքևի խորշերում այլ կարգի իրեր են դրվել[76]: Սույն կարծիքները կփորձենք մեկնաբանել եղած բոլոր փաստերը ի մի բերելուց հետո:

Ալթին-թեփեի 3-րդ դամբարանի որմնախորշերը չունեն դարակներ: Գանձախույզները այն չեն ավերել, ուստի այնտեղ հայտնաբերվել են շատ առարկաներ, որոնց մեծ մասը դրված է եղել հատակին, մի մասն էլ՝ քարատապանում: Տարօրինակ է, որ, չնայած դամբարանայրի հարստությանը, որևէ հիշատակություն չկա որմնախորշերում գտնված գեթ մեկ իրի մասին:

Ալթին-թեփեի 1-ին դամբարանի որմնախորշերն էլ են դատարկ եղել, ըստ երևույթին, այն պատճառով, որ ժամանակին դամբարանը կողոպտվել է[77]: Վանի ժայռի ութ քարայրերի բազմաթիվ որմնախորշերից ոչ մեկում

դամբարանություն չի հայտնաբերվել, թերևս նույն պատճառով:

Չնայած բոլոր քարայրերում հղած որմնախորշերն էլ նույն ձևն ունեն, բայց տարբերվում են չափերով. չկա գեթ երկու քարայր, որոնցում եղած որմնախորշերն ունենային նույն չափերը: Իսկ քարայրերից չորսը բոլորովին զուրկ են որմնախորշերից[78]: Սակայն բոլոր քարայրերն էլ, բացի հյուսիսահայացից, ունեն կա՛մ որմնախորշեր, կա՛մ հարթակ: Դժվար է ասել. արդյո՞ք որպես դամբարան է ծառայել ժայռի հյուսիսահայաց քարայրը: Ի տարբերություն մյուսներից այն ունի շատ լայն մուտք (8,48 մ), որն արտաքին կողմից չէր կարող հուսալիորեն փակված լինել, ուրեմն հարց է ծագում. եթե այն դամբարան լիներ, ապա ինչպե՞ս պիտի պաշտպանվեր կողոպտիչներից: Այս սրահը, ինչպես ասվեց, զուրկ է նաև ուրարտական ժայռափոր դամբարաններին բնորոշ երկու կարևոր առանձնահատկություններից. ո՛չ հարթակ ունի դիակը տեղադրելու համար և ո՛չ էլ որմնախորշ, ուր կարելի էր դնել ճաշունասափորը:

Մովսես Խորենացին Վանի ժայռափոր կառույցները նկարագրելիս ասում է հետևյալը. Շամիրամը «քարաժայռի դեպի արեգակը դարձած կողմը, որտեղ այժմ և ոչ մի գիծ կարող է մարդ գծել երկաթով, այսպիսի կարծր քարի մեջ զանազան սենյակներ, ննջարաններ, գանձարաններ և երկար վիհեր՝ հայտնի չէ ինչ բանի համար, հրաշակերտեց: Իսկ քարաժայռի բոլոր երեսը հարթելով, ինչպես գրչով հարթում են մեղրամոմը, վրան շատ գրեր գրել տվեց, որոնց տեսքը միայն բոլորին զարմացնում է»[79]*:

Այսպիսով, հնարավոր է, որ հյուսիսահայաց քարայրը չի եղել դամբարան, այլ ունեցել է մեկ այլ, մեզ համար անհայտ նշանակություն:

Ալիշարի դամբարանը հայտնաբերվել է 19-րդ դարի կեսին, և հայտնի չէ, թե որտեղ են դրված եղել այնտեղ հայտնաբերված իրերը[80]:

Սիսիան սարում հայտնաբերված դամբարանները, որոնք նման են Ալթին-թեփեի 2-րդի դամբարանին, ունեն կամարաձև որմնախորշեր: Այս դամբարանադաշտի դամբանասրահներից մեկը պեղելիս պարզ դարձավ, որ այդ որմնախորշերը նախատեսված են եղել ճաշունասափորների համար: Միաժամանակ պարզ դարձավ, որ այդ դամբարանում թաղումներ են կատարվել երկու՝ դիաթաղման ու դիակիզման ծիսերով**: Դիակիզված ծնների ճաշունները դրված են եղել դիանոթների մեջ[81]: Դիանոթների մեջ դրված հանգույցյալի այրված ճաշունի մնացորդներ են հայտնաբերվել նաև Ալթին-թեփեի 3-րդ դամբարանում[82]: Սա շատ կարևոր հանգամանք է, քանի որ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ ուրարտական այն ժայռափոր դամբարաններում, որոնք ունեցել են որմնախորշեր, թաղումներ են կատարվել նաև դիակիզմամբ:

Այս դամբարանների ուսումնասիրությունը անչափ տուժում է հին ու նոր գանձագողերի գործունեության պատճառով, որոնք դամբարաններից տարել են այն ամենը, ինչը քիչ թե շատ արժեք է ունեցել: Սակայն մնացել են դամբարաններն իրենք իրենց բազում ճարտարապետական մանրամասներով, որոնց թվում և՝ որմնախորշերը, որոնք, ինչպես տեսանք, ծառայել են իբրև հանգստարաններ Ուրարտուի ազնվականների դիակիզված ճաշունների համար:

Բացառված չէ, որ Ալթին-թեփեի 3-րդ դամբարանում թաղում է կատարվել ինչպես այնտեղ հայտնաբերված քարատապաններում՝ դիաթաղման ծեսով, այնպես էլ որմնախորշերում, որտեղ, թերևս, դրվել են դիակիզված ճաշունով անոթները:

Ինչպես Կայալի-դերեի, այնպես էլ Արծկեի որոշ դամբարաններում կրկնակի թաղումներ են կատարվել[83]: Արծկեի դամբարանները սովորաբար բնութագրվում են որպես ընտանեկան դամբարաններ[84]: Չնայած դրանք ընտանեկան համարելու համար ստույգ փաստեր չկան, այնուամենայնիվ սա մնում է որպես շատ հետաքրքիր մի վարկած: Ավելի բարդ է Ալթին-թեփեի 1-ին և 2-րդ դամբարանների պատկանելության խնդիրը: Այս դամբարանների թվագրության համար հիմք է ծառայել այն ենթադրությունը, թե դրանք կառուցվել են հաջորդաբար, կարճ ընդմիջումով: Այնուհետև, երկրորդ դամբարանում հայտնաբերվել է բրոնզե մի սափոր, որի վրա գրված է Կիլիկիայի Ուրիկկի արքայի (մ. թ. ա. 740–732 թթ.) անունը: Առաջին դամբարանը, ինչպես վկայում են շերտագրական դիտարկումները, երկրորդ դամբարանից ավելի վաղ է կառուցվել: Ավելացնեմ, որ 3-րդ դամբարանի երկու սեպագիր արձանագրությունները թվագրվում են Արգիշթի 2-րդի թագավորության տարիներով: Ելնելով այն հանգամանքից, որ Ալթին-թեփեի դամբարանները կառուցվել են հաջորդաբար, ժամանակագրական կարճ ընդմիջումներով (մեկ սերնդի սահմաններում), Թահսին Օզգյուչը ենթադրում է, որ այդ դամբարաններում թաղվել են նույն ընտանիքի անդամները[85]: Եթե այս տեսակետը ընդունելի է, ապա, այն առաջարկով Արծկեի դամբարանադաշտի ուսումնասիրությամբ ստացված տվյալների հետ, կարելի է ենթադրել, որ դամբարաններից յուրաքանչյուրը պատկանել է մի առանձին ընտանիքի: Ելնելով այս դրույթներից և նկատի ունենալով կենցաղային ու աշխարհագրական տարբերությունները՝ կարելի է ենթադրել նաև, որ երկրի մի շրջանում ընդունված սովորույթը պարտադիր չէ, որ ընդօրինակվեր

* Այսպիսով, Մովսես Խորենացին կարողացել է Հայաստանի այլևայլ հուշարձանների բազմության մեջ առանձնացնել ուրարտական՝ դրանց կառուցումը վերագրելով Շամիրամ թագուհուն: Շամիրամը Ատրեստանի արքա Սալմանասար 3-րդի (մ. թ. ա. 858–824 թթ.) հարսն էր, կինն էր Շամշի-Ադադ 5-րդի (մ. թ. ա. 823–810 թթ.) և մայրն էր Ադադ Ներարի 3-րդի (մ. թ. ա. 809–782 թթ.): Շամիրամն ապրել է այս երեք թագավորների օրոք (տես, օրինակ, Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և սեպագրական աղբյուրները, ՊԲՀ, 1992, հ. 2–3, էջ 32): Թագուհի էր՝ սկսած 823 թվականից: Այլ կերպ ասած, նա ժամանակակիցն է եղել Ուրարտուի Իշպուինի և Մինուա արքաների: Այսինքն՝ Մովսես Խորենացին ոչ միայն կարողացել է ճանաչել, այլև բավականին ստույգ թվագրել է իր տեսած վանտոսպյան հուշարձանները:

** Ուրարտուում ընդունված թաղման ծիսակարգերի մասին տես այս գրքի «Երևանի բիայնական դամբարանը» աշխատության մեջ:

երկրի մեկ այլ տարածաշրջանի բնակչության կողմից:

Դամբարաններում եղած որմնախորշերի՝ ճոյուն-աստափորների համար վերեղարաններ ծառայելու մասին է վկայում նաև հետեւյալ հանգամանքը: Բոլոր այն դամբարանների սենյակները, որոնք օժտված էին որմնախորշերով, չունեին հարթակներ, կամ էլ չօգտագործված այնքան տարածք, որտեղ տեղավորվեր քարատապանը (բացառություն է Կայալի-դերեն, որտեղ բացի հարթակից կան և որմնախորշեր): Բոլոր պարագաներում որմնախորշերի ու հարթակների երկուստեք առկայությունը մեկ դամբարանում ծայր աստիճան հազվադեպ է հանդիպում, որի պատճառը կարող է լինել, իհարկե, պեղված դամբարանների ոչ այնքան մանրակնին կատարված հետազոտությունը[86]: Բնականաբար, եթե որմնախորշերը նախատեսված լինեին վոհաբերությունների համար, ապա հարց կծագեր, թե ինչու այն դամբարաններում, որոնք հաստատապես նախատեսված են եղել դիտաղման ծեսով թաղումներ կատարելու համար, չկան որմնախորշեր: Բացի դրանից Ալթին-թեփեի 3-րդ դամբարանում դամբանանյութը հատակին էր դասավորված, մինչդեռ որմնախորշերը դատարկ էին:

Կարծիք կա նաև, թե որմնախորշերն օգտագործվել են շինությունը լուսավորելու համար[87]: Ճիշտ է, որ կողմնային սենյակները լուսավորելու անհրաժեշտություն պետք է որ ծագած լիներ: Սակայն եթե այդ նպատակի համար օգտագործվել են որմնախորշերը, անհասկանալի է մնում, թե ինչու են Խորխորյան Մեծ քարայրի կենտրոնական սրահը կամ Խորխորյան Փոքր քարայրի երկարավուն սրահը օժտվել այդքան շատ որմնախորշերով, երբ այդ սրահները լուսավորվում էին մուտքից: Արդյո՞ք այն պատճառով, որ արարողությունները կատարվում էին գիշերը և կամ այլ ժամանակ փակվում էր դամբարանի դուռը: Փակ դռներով արարողությունների կատարումն առավել անհավանական է թվում, քանի որ այդ սրահներում չի լուծված օդափոխության խնդիրը, և խոսել ճիթաճրագների լույսի ներքո իրականացվող քիչ թե շատ տեսական գործողությունների մասին, գրեթե անիմաստ է: Սակայն եթե նույնիսկ այդ արարողությունները գիշերը կատարվեին, ապա այս դեպքում էլ որմնախորշերը չէ,որ ծառայել են որպես ճիթաճրագները դնելու տեղ, քանի որ որմնախորշերից և ոչ մեկում չեն հայտնաբերվել ծխի և կամ մրի հետքեր, որոնց բացակայությունը եթե բացատրենք անցած ժամանակով, ապա կրկին առկախ կմնա օդափոխության խնդիրը: Բացի այդ, օրինակ՝ Իշկալան, որը Վանի ժայռի ամենախավար քարայրն է, չունի որմնախորշեր:

Տարբեր ձևի որմնախորշերի առկայության շուրջ արդեն խոսվել է. ասեմ միայն, որ թե՛ ուղղանկյունաձև և թե՛ կամարաձև որմնախորշեր կերտվում էին ոչ միայն դամբարաններում, այլև ժայռերի վրա՝ դրսից*, դրանց մեջ սովորաբար արձանագրություններ էին փորագրվում[88]:

Նավթ-քույրի և Ալթին-թեփեի 1-ին դամբարանները թվագրվում են Սարդուրի 2-րդ (մ. թ. ա. 764—735 թթ.), իսկ Կայալի-դերեն ու Ալթին-թեփեի 3-րդը՝ Արգիշթի 2-րդ (մ. թ. ա. 714—685 թթ.) արքաների թագավորության տարիներով[89]: Այս տարեթվերն իսկ ակնհայտ են դարձնում երկու ոճերի մրցակցության փաստը: Այդ նկատառումով տարբեր ոճերի առկայությունը բոլորովին էլ չի վկայում գործառության տարբերության մասին. քանի որ միևնույն դամբարանում կային թե հարթ և թ՛և կամարաձև տանիքներով սենյակներ: Պարզ է, որ համապատասխան տարածքները, չնայած կառուցողական տարբերություններին, ծառայել են նույն նպատակին: Ալթին-թեփեի դարակավոր և Խորխորյան Մեծ քարայրի եզրապարդ ունեցող որմնախորշերը կառուցվել են տարբեր ոճերով, սակայն ունեցել են միևնույն գործառությունը:

Այժմ երկու խոսք՝ հարթակների կիրառական նշանակության մասին: Արդեն ասվել է, որ դամբարաններում հայտնաբերված հարթակները նախատեսված են եղել դիակների համար, այսինքն՝ հարթակի երկարությունը սովորաբար համապատասխանում էր մարդու հասակին: Հատակից բարձր դիրք ունենալով՝ հարթակը դառնում էր տվյալ սրահի առավել աչքի ընկնող մասը: Այս նպատակով կառուցված գրեթե բոլոր հարթակները իրար նման են, բացառությամբ Կայալի-դերեի դամբարանի հարթակից, որի առկայությունը կարող է օգնել (կամ էլ խանգարել) ընդհանրապես բոլոր հարթակների կիրառական նշանակությունը բացահայտելուն: Այս հարթակի մեջ արված փորվածքում միայն մեկ քարատապան կարող է տեղավորվել, այն էլ այնքան փոքր, որ Չառլզ Բառնեյն ստիպված էր ասելու, թե այն միայն շատ կարճահասակ մարդու համար կարող էր նախատեսված լինել[90]: Իհարկե, չի բացառվում, որ այս հարթակը կարող էր նախատեսված լինել կարճահասակ մարդու և կամ երեխայի դիակի համար, սակայն չի բացառվում և հարթակի՝ այլ կիրառական նշանակություն ունեցած լինելու հանգամանքը:

Ալթին-թեփեի 3-րդ դամբարանի ամբողջ գույքը դրված էր հատակին[91], այնպես որ անգամ ոտք դնելու տեղ չի եղել: Կայալի-դերեի դամբարանում թաղումներ են կատարվել մի քանի անգամ: Այդ պատճառով ավելացված հարթակները կարող էին օգտագործվել ավելի վաղ կատարված վոհաբերությունները տեղավորելու համար, այլապես նոր թաղում կատարելու ժամանակ գետնի վրա դրված հին դամբանանյութը կխանգարեր դամբարանում ապատ տեղաշարժվելուն:

Այս տեսանկյունից, սակայն, հնարավոր չէ բացատրել բոլոր հարթակների նշանակությունը, քանի որ չկան համապատասխան տվյալներ: Սրանից կատ, հարթակների մեծ մասը չունի գույք տեղավորելու համար նախատեսված բավարար տարածք:

* Այս որմնախորշերը անհամեմատ ավելի մեծ են (Աշտակերտի որմնախորշը, օրինակ, ունի 4,10 մ երկարություն և 2,61 մ լայնություն): Դրանք կոչվել են «աստծո դռներ» և Ուրարտուի կարևոր պաշտամունքային կառույցներից էին (տես, օրինակ, *Ա. Գ. Հմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, էջ 67–69): Այդ որմնախորշերի անունը ուրարտերեն հնչում էր šeštili ձևով (տես, օրինակ, УКН, էջ 406):

ՈՒրարտական թաղման ծիսի մասին խոսքը թերևս պետք է սկսել դամբարանների կառուցողական հիմնական նյութից՝ ապառաժից:

ՈՒրարտական դամբարանների ուսումնասիրության ընթացքում հարց է ծագում, թե ինչու էին ուրարտացիներն իրենց դամբարանները ժայռերի մեջ փորում, իսկ այնտեղ, որտեղ ժայռեր չկային, դամբարաններ էին կառուցում խոշոր, դժվարությամբ տեղաշարժվող քարե կանգվածներից: Այս հարցը կարող է ունենալ մի քանի պատասխան, որոնցից ամենապարզները հետևյալներն են: ա) Ամուր ժայռի մեջ փորված դամբարանը դժվար էր կողոպտել, այն ապահովված էր և այլ խաթարումներից: բ) Ժայռը մատչելի և հարատև է: ՈՒրարտացիները հմուտ ժայռափորներ ու որմնադիրներ էին: Վանի թագավորության ամբողջ տարածքը այժմ էլ պատված է ուրարտացիների կերտած վեհաշուք քարե հուշարձաններով (Վանի Միջնաբերդը, Թոփրակ-կալեն, Կարմիր բլուրը, Արին բերդը (Էրեբունի), Կալի-Հայդարի ժայռափոր սանդղավանդակը, ժայռափոր ջրանցքները և շատ այլ կառույցներ): Հայկական բարձրավանդակի հիմնական շինանյութը քարն է, և այստեղ բնակվող ժողովուրդը իր գոյությունը պահպանելու համար պիտի մաքառեր ժայռի դեմ: ՈՒրարտացիները ասորեստանյան հզոր բանակներից պաշտպանվելու նպատակով ռազմավարական կարևոր կետերում հենց այս հումքն էին օգտագործում ամրոցներ կառուցելու համար: Քարը՝ այս անչափ գեղեցիկ, կատարյալ ու մնայուն շինանյութը, օգտագործվել է հայկական քաղաքները, ամրոցներն ու եկեղեցիները կառուցելիս[92]:

Հաջորդ խնդիրը, որին կյանկանայի քիչ ավելի հանգամանորեն անդրադառնալ, ժայռավոր դամբարանների ներքին հարդարանքն է: Վանի Նավթ-քուլու քարայրի սենյակներում, ուղղահայաց պատերի ամենաբարձր մասերում փորագրված է նրբին կիսաշրջանների մի ամբողջ շարք (տես գլուխ 1): Իշկալա քարայրի ամենախոր սենյակի հյուսիս-արևելյան պատին փորված են մոտ 2 սմ տրամագիծ ունեցող խոռոչներ: Ենթադրվում է, թե դրանցում մետաղե հարդարանքներ են ամրացվել: Այս քարայրի մյուս հղկված պատերին ևս կան կարդաքանդակներ[93]: Խորխորյան մեծ քարայրում առկա է հարդարման մեկ այլ տարբերակ. գլխավոր սրահի պատերի վրա, ինչպես ասվել է, փորված են քառակուսի քանդակներ, որոնցում ագուցվել են գունավոր քարեր կամ մետաղե կարդեր[94]:

Չնայած դամբարաններում մեծ չէ բարձրաքանդակ կարդանախշերի քանակը՝ սակայն եղածը կատարված է մեծ ճաշակով ու վարպետությամբ: Մեկ հայտնի գրեթե բոլոր ժայռափոր դամբարանների պատերը խնամքով հղկված են այնպես, որ վերացված են բոլոր անհարթությունները: Նկատված է, որ նրբորեն հղկված մաքուր պատերը դամբարաններին հաղորդում են առանձնահատուկ տպավորիչ տեսք[95]: Պատերի այս միապաղաղությունը թերևս ծառայել է դամբարանի այլ մանրամասներից (որմնախորշեր, հարթակներ, մուտքեր, կարդեր) ուշադրությունը շեղելու համար: Ակնածանք ներշնչող այս պարզության գաղափարը ինքնին շատ հետաքրքիր է:

ՈՒրարտական որոշ դամբարանների պատկառելի չափերը վկայում են, որ այդ չափերը համապատասխանեցվում էին տվյալ անձի դիրքին ու հեղինակությանը:

Իշկալա քարայրի ներսակողմի հարդարանքը այլ ոճի է: Այս քարայրում չկան ուշադրություն գրավող որմնախորշեր, և հղկված պատերն այստեղ չէին կարող չշեշտել այն, թե մյուս դամբարանների համեմատ այստեղ որոնք են դամբարանի ամենակարևոր մանրամասները: Որմնախորշերի փոխարեն այստեղ երեք տարբեր սենյակներում մեկական հարթակ է շինված, որոնք ավելի էին շեշտում քարանձավի հղկված պատերի խորհրդավոր ողորկությունը:

Պրոֆ. Ապարփայը Վանի արքաների կրոնամոլության մասին խոսելիս ի գիտություն է ընդունել նրանց թողած արձանագրությունները և ուրարտական արվեստի գործերը[96]: Եթե ՈՒրարտուի արքաները կրոնամոլ էին*, ապա այդ դեպքում հասկանալի է և նրանց ցուցաբերած ուշադրությունը մահվան ու հանդերձյալ կյանքի նկատմամբ, քանի որ թաղման վայրի ընտրությունն ու թաղման արարողությանը նախապատրաստվելը թերևս հենց արքայի հայեցողությանն էր վերապահված: Ալթին-թեփեի 3-րդ դամբարանում հայտնաբերված իշխանի (՞) և նրա կնոջ քարատապանները[97] վկայում են այն մեծ նշանակության մասին, որ թաղման ժամանակ տրվում էր դիակի դիրքին ու ապահովությանը դամբարանում: Ալթին-թեփեի 2-րդ դամբարանում երեխայի աճյունի մնացորդներ են գտնվել դամբարանի հետևում: Թահսին Օզգյուշը ենթադրում է, թե հանգուցյալը դրված է եղել փայտե դագաղի մեջ, որը ժամանակի ընթացքում փտել է[98], այսինքն՝ այս դեպքում էլ մարդիկ խնամքով են վերաբերվել մահացած երեխայի հանդեպ՝ նրա մարմինը ամփոփելով դագաղում**:

Նկատի ունենալով վերը ասվածը՝ կարելի է ենթադրել, որ դամբարաններում գտնվող հարթակների վրա դրվել են քարատապանները: Քարատապանների ենթադրյալ առկայությունը միայն պայմանականորեն կարող է վկայել տվյալ վայրում դիաթաղման ծեսով կատարված թաղումների մասին***: ՈՒրարտուում առավել ընդուն-

* Դեռևս Գ. Ղափանցյանն է ուրարտացիներին որակել «խալդամոլներ» բառով (Գ. *Ա. Ղափանցյան*, ՈՒրարտուի պատմությունը, Ե., 1940, էջ 114): Ըստ երևույթին Գ. Ղափանցյանի այս կարծիքը ավելի ստույգ է վերարտադրում կրոնական իրադրությունը ՈՒրարտուում, որի արքաները ավելի կրոնամոլ չէին, քան, ասենք, Եգիպտոսի կամ Բաբելոնի տիրակալները: Սակայն երկրի գլխավոր աստծո՝ Խալդիի պաշտամունքի նկատմամբ Վանի արքաները առանձնահատուկ վերաբերմունք ունեին և նույնն էլ պահանջում էին իրենց հպատակներից (այս մասին հանգամանորեն տես. *Ա. Գ. Հմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, էջ 33–37):

** Բացառված չէ, որ սա ուշ, ոչ ուրարտական թաղում լինի:

*** Ժայռափոր դամբարաններում և դամբանասրահներում, այսինքն՝ այնպիսի կառույցներում, որտեղ կարելի էր հարդարել նաև որմնախորշեր, հարթակների, հետևաբար և քարատապանների ենթադրյալ առկայությունը հավանականության մեծ տոկոսով վկայում է, որ այդ քարատապաններում թաղումները կատարվել են դիաթաղման

ված էր դիակիզումը[99], և որմնախորշերն էին ամենահարմար տեղը, որտեղ կարելի էր դնել աճյունասափորը:

Պաշտամունքային առումով դամբարաններին մեծ նշանակություն էր տրվում: Վանի ժայռին փորված, պայմանականորեն Սարդուրի 2-րդի անունը կրող վերոհիշյալ «հրապարակի» վրա, որտեղից կարելի էր անցնել դեպի Նավթ-քույու և Ինչկալա քարայրերը, գոյություն է ունեցել մի փոհասեղան[100]: Այս երկու ամենատպավորիչ քարայրերը կապող «հրապարակի» առկայությունն ինքնին վկայում է, որ այն օգտագործվել է տարբեր ժամանակներում և տարբեր մարդկանց թաղումների ընթացքում: Ըստ երևույթին, ժայռափոր դամբարաններում թաղմանը նախորդող, թերևս նաև հաջորդող արարողությունները կատարվում էին այս (և նման այլ) «հրապարակների» վրա, դամբարանի մուտքի մոտ:

Նման իրադրություն է նկատվում և Ալթին-թեփեում. առաջին դամբարանի վրա գոյություն է ունեցել երկրորդ դամբարանի հետ կապված բացօթյա մի սրբարան, որն անկասկած առնչվել է հանգուցյալի պաշտամունքի հետ: Սրբավայրի հատակը հարդարված էր դամբարանների հատակի նման, այսինքն՝ հարթեցված էր գլարարերով, որոնց վրա լցված էր կավահողի բարակ շերտ: Սրբարանի հատակին՝ քարե հիմքի վրա կառուցված է եղել մի պատվանդան: Այստեղ, բացօթյա սրբարանի հյուսիս-արևմտյան պատի առջև, կողք կողքի կանգնած են եղել ուղղանկյունաձև խարսխաքարերի վրա ամրացված առանց արձանագրությունների, կամարաձև ավարտով չորս կոթող (ստելա): Ռահսին Օզգյուչի կարծիքով դամբարաններն ու բացօթյա սրբարանը կառուցված են այնպիսի դիրքում, որ հնարավոր լինի մարդկանց մեծ խմբի ներկայությունը արարողությունների ժամանակ[101]: Այս ենթադրության առումով ուշագրավ է, որ Սարդուրի 2-րդի՝ թերևս նույն նպատակին ծառայած հարթակը («հրապարակը»), որի վրա մի փոհասեղան կա, ունի 25 մ լայնություն[102]: Հնարավոր է, որ նման շքեղ թաղման արարողություններ կազմակերպելով և այնուհետև նախնիների հիշատակին նվիրված ծիսակատարություններով Ուրարտուի ազնվականությունը ձգտում էր շեշտել իր իշխանության օրինականությունը:

Ժայռափոր դամբարաններում փոհաբերություններ են կատարվել, թերևս, կենտրոնական սրահում, որը, տեղադրված լինելով մուտքի մոտ, քիչ թե շատ լավ էր լուսավորված: Ուշագրավն այն է, որ բոլոր ընդարձակ ու բազմասրահ քարայրերը կառուցված են Վանի ժայռի հարավային՝ արևահայաց կողմում[103]:

Ուրարտական ժայռափոր դամբարանները ժամանակի քաղաքական ու տնտեսական իրադրության արդյունք էին և արտացոլում են այդ իրադրությունը: Միևնույն ժամանակ այդ կառույցները շինարար արքաների հիշատակը հավերժացնող հուշարձաններ են, որոնք առարկայացրել են մահվանը պատրաստ լինելու մարդու ձգտումը և հարդարված են բարդ ու կարգավորված կրոնի կանոններով:

Չնայած այն հանգամանքին, որ որմնախորշերի, հիմնական սրահների և հարթակների կիրառական նշանակությունը դեռևս լրիվ պարզ չէ, այնուամենայնիվ եղած բազում ընդհանրություններն ինքնին վկայում են, որ երկրի ազնվականությունը եղել է մեկ ընդհանուր և ներդաշնակ կրոնական մտածելակերպի կրող:

ծիսակարգով: Բայց ուրարտական հիմնահողային դամբարաններում, որտեղ ոչ մի հնարավորություն չկար որմնախորշ կառուցելու, դիակիզված (կամ մասնատված) աճյունը հաճախ դրվել է քարատապանի մեջ ու նոր թաղվել (այս մասին տես, օրինակ. *Հ. Ա. Մարտիրոսյան, Ռ. Մ. Թորոսյան*, Արգիշթիխինիլի սարկոֆագը, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, հ. 3, էջ 221–227):

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԱԳՈՒՄԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Ուրարտական ժայռափոր դամբարանների շինարվեստի ու հորինվածքային առանձնահատկությունների ակունքները որոնելիս ակնհայտ է դառնում Նաիրիի լեռնային կեղերի մասին եղած ինֆորմացիայի սակավությունը:

Ավելորդ պարզեցումներից և հապճեպ եզրակացություններից խուսափելու համար եղած նյութն անհրաժեշտ է վերանայել ամենայն ուշադրությամբ: Այս առումով առավել բարդ խնդիր է տեղաբնիկների և ներմուծված մշակութային հրեույթների առանձնացումը: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է միկ անգամ ևս դիմել մեզ հասած ուրարտական, մինչուրարտական և ոչ ուրարտական մշակութային ավանդույթների վերլուծությանը:

Ժամանակին Անատոլիայում ապրող (մ. թ. ա. շուրջ 2000—1200 թթ.) «խեթ» կոչվող ժողովրդի ստեղծած և մինչև այսօր գոյատևող ամրոցներն ու դամբարանները կառուցված են քարից: Խեթական շինարվեստի ամենավիհաշուք հուշարձանը խեթական կայսրության մայրաքաղաք Հաթուշան է (Բողազքոյ, գտնվում է կենտրոնական Անատոլիայում): Այս քաղաքի շենքերի պատերը կառուցված են տարբեր ձևերի մեծ ու միջին չափեր ունեցող քարերով, որոնց եզրերը, քարերը պետք եղած տեղում դնելու համար, համապատասխան ձևով հղկվել են ու կոպիտ հարմարեցվել իրար, իսկ առաջացած ճեղքերը լցվել են մանր քարերով[104]: Այս առումով խեթական որմնադրությունը ուրարտականից տարբեր է, քանի որ ուրարտացիները նախընտրում էին պատը շարել կողերը հարթ, ուղղանկյունաձև կամ խորանայդաձև քարերով[105]: Հատկապես զանգվածեղ են Հաթուշայի դամբարանների կողմնային պատերի քարերը (օրինակ՝ Արքայական և Առյուծի դամբարաններում): Յուրաքանչյուր քարի բարձրությունն այստեղ (3 մ) համապատասխանում է այժմ գոյություն ունեցող պատերի բարձրությանը: Քարերի մակերեսները հաճախ հարդարվել են բարձրաքանդակներով[106]:

Հաթուշայից ոչ հեռու գտնվում է Յազիլի-կայա հուշարձանախումբը: Սա բլրի մոտ գտնվող մի համալիր է՝ բաղկացած ժայռերի միջև կառուցված պատերից ու սենյակներից: Կառույցները բնական ժայռերին միացած են այնպես, որ փակվել է ժայռերի միջև ընկած տարածքը: Այս ձևով առաջացել են բացօթյա մի քանի սրահներ: Ուղղաձիգ ժայռերի դեպի ներս նայող մակերեսին քանդակված են գեղեցիկ բարձրաքանդակներ*:

Ուրարտական շինարվեստի ու ճարտարապետության վրա խեթական ազդեցության մասին կան մի քանի տեսակետներ, որոնց հիմքը աշխարհագրական առումով մոտիկությունն է, մշակութային առումով՝ խեթական և ուրարտական դիցաբանների նմանությունը: Սակայն այժմ էլ տակավին պարզ չէ, թե այնուամենայնիվ ուրարտացիներն ինչ են փոխառել խեթական մշակույթից: Օրինակ, Չառլզ Բառնիյը հարցը ներկայացնում է այնպես, թե իբր ուրարտական արվեստը ուրույն չէ, այլ հիմնականում փոխառված է ու հարմարեցված տեղական միջավայրին[107]: Միաժամանակ նա ընթերցողին զգուշացնում է՝ ասելով, թե «խեթական» կոչվող շատ երևույթներ կարող են և խեթական ծագում չունենալ, ընդ որում բերում է խեթական արքայատոհմի օրինակը, որը ծագումով խուռիական էր[108]: Իսկ Մորիս վան Լունի կարծիքով ուրարտացիները խեթերից շատ բան չեն ժառանգել[109]: Տարակարծությունների աղբյուրը հնագիտական առատ նյութն է: Չնայած այդ նյութը երբեմն հիմք է տալիս համեմատությունների համար, սակայն գոյություն ունեցող մի քանի հարյուր տարվա ժամանակագրական խզումը վիճելի է դարձնում նույնիսկ այդ համեմատությունները: Չնայած Ուրարտուն Ուրուատրի անունով հիշատակվում է դեռևս Ասորեստանի Սալմանասար 1-ինի (մ. թ. ա. 1274—1245 թթ.) արձանագրություններից մեկում, սակայն բուն ուրարտական մշակույթը հայտնի է միայն մ. թ. ա. 9-րդ դարից: Ուրարտական հասարակության և մշակույթի վրա խեթական ազդեցության հարցը չափազանց ընդգրկուն թեմա է և հետազոտության առանձին նյութ: Սակայն այստեղ այնուամենայնիվ կկանգնանայի անդրադառնալ այդ խնդրին, որքանով այն կարող է նպաստել ուրարտական ժայռափոր դամբարանների ծագումնաբանական ակունքների բացահայտմանը:

Ուրարտական դամբարանային կառույցների

---

* Յազիլի-կայայի տաճարները սկզբնապես հարդարված են եղել բնական քարայրերի մեջ, խեթական կայսրության կազմավորումից դեռ շատ առաջ և ձոնված են եղել ժամանակին ժայռից բխող աղբյուրի պաշտամունքին: Յազիլի-կայան կառուցապատվել ու խեթական տաճարային համալիր է դարձել Խաթուսիլիս 3-րդ արքայի օրոք (մ. թ. ա. շուրջ 1275–1250 թթ.): Բռնկված հրդեհից հետո վերակառուցվել է Թուդխալիաս 4-րդի (մ. թ. ա. 13-րդ դարի 40-ական թթ.) հրամանով: Այս հուշարձանախմբի ամենաուշագրավ մանրամասները հարթաքանդակներն են՝ փորագրված հինավուրց երկու քարայրերի պատերին: Առաջին քարայրում ներկայացված է աստվածների ու դիցուհիների շքերթը և Թուդխալիաս թագավորը, երկրորդ քարայրում պատկերված է իբրև թե ժայռի մեջ խրված մի մեծ սուր: Հարթաքանդակի բարձրությունը շուրջ 3,35 մ է: Հետևում Թուդխալիասի և Շարումմա աստծո պատկերներն են: Դիմացի պատին քանդակված են իրար հետևից քայլող 12 ռազմիկ աստվածներ (տես օրինակ. *Дж. Г. Маккуин.* Хетты и их современники в Малой Азии, М., 1983, с. 129–131).

հորինվածքային առանձնահատկությունների և թաղման ծիսակարգի վրա խեթական մշակույթի հնարավոր ազդեցության մասին խոսելիս մատնանշվել է հետևյալը. ա) Փռյուգիայից ճարտարապետական բնույթի որոշ լուծումների տարածումը հյուսիսային Սիրիա և ապա՝ Ուրարտու, բ) քարերի միջև թաղված դիակիզման ամյունասափորների առկայությունը խեթական աշխարհում:

Մ. վան Լունը ուրարտական ճարտարապետության վրա խեթականի ունեցած ազդեցության մասին խոսելիս առանձնապես շեշտում է ուրարտական «գունագեղ, աչք ծակող ճաշակի» առկայությունը, իսկ Թոփրակ-կալեի պարզունակ շինարվեստի ակունքները որոնվում են մ. թ. ա. 13-րդ դարի Ուգարիթում: Շինարարական ոճ, որն այնուհետև տարածվել է դեպի Տյուրոս ու Սամարա, ապա, վաղագույնս մ. թ. ա. 9-րդ դարում, դեպի հյուսիս, Ուրարտու[110]: Փոխառությունների այս շղթան համեմատաբար բարվոք է վավերացված: Խնդիրն այն է, սակայն, որ ճարտարապետության մեկ բնագավառում կատարված փոխառությունները չեն վկայում այն մասին, որ նման օտար ազդեցության արդյունք են և ուրարտական ճարտարապետության մյուս ուղղությունները: Ասվածը վերաբերում է հատկապես այս ժամանակաշրջանի ժայռափոր դամբարանների պարագային, որոնք զուգահեռներ չունեն ո՛չ արևմտյան Անատոլիայում և ո՛չ էլ հյուսիսային Սիրիայում[111]:

Մ. վան Լունը կարծում է նաև, որ դիակիզման ծեսը խեթական աշխարհից է տարածվել դեպի Ուրարտու: Մ. թ. ա. 2-րդ հազարամյակի խեթական թաղումները համեմատված են Մալաքլուի (Իգդիրի) թաղումների հետ[112]: Իգդիրի դամբարանադաշտի 13 գերեզմաններից 12-ում թաղումը կատարված էր դիակիզման ծեսով: Այրված աճյունները այստեղ դրված էին սավորների մեջ ու թաղված ժայռաքարերի միջև եղած ճեղքերում: Ուղեկցող դամբանանյութը հարուստ է՝ զենքեր, զարդեր, կավանոթներ[113]: Բաքի Օգյունը և Էմին Բիլգիքը այս տվյալները քննարկում են նաև ժայռափոր դամբարանների կոնտեքստում: Նրանց կողմից Արծկեում հաստատագրված դիակիզմամբ կատարված թաղումները շատ նման են խեթերի համար սովորական թաղումներին[114]:

Թաղման ծեսում ուրարտա-խեթական այս առադրումները հիմնավորված չեն թվում հասկանալի պատճառով. ուրարտական մշակույթը ձևավորվել է խեթական կայսրության կազմալուծումից երեք հարյուր տարի հետո, մի հանգամանք, որը, ինչպես ասվել է, բացառում է որևէ անմիջական փոխառության հնարավորությունը:

Ուրարտացիները մեծ ակնածանքով են կատարում թաղման արարողությունները, և բացառված չէ, որ այդ ծեսի հիմքում ընկած լինեին մահվան ու հանդերձյալ կյանքի մասին նախիրյան ցեղերի պատկերացումները, բացառված չէ նաև, որ դիակիզման ծիսակարգը ունեցած լինի տեղական ծագում*:

Այս առումով ուշագրավ է, որ սովորաբար որպես աճյունասափորներ ծառայում էին կենցաղում օգտագործվող անոթները[115], որոնց մեջ լցվում էր դիակիզ-վածի մոխիրը, և այնուհետև դրանք տեղադրվում էին դամբարանում, որտեղ դրված էր լինում և այն գույքը, որը դիտվում էր հանդերձյալ աշխարհում տվյալ մարդու համար անհրաժեշտ**:

Հատկանշական է նաև, որ թաղման ծեսը և դամբարանների հատակագծային լուծումները փոխկապակցված չէին միմյանց հետ:

Այսպիսով, կարծում եմ, որ առկա փաստական տվյալների լույսի ներքո ուրարտական ժայռափոր դամբարանային կառույցների և խեթական ճարտարապետության, ինչպես և թաղման ծեսերի միջև գոյություն ունեցող ենթադրյալ կապը շատ անորոշ է ուրվագծվում:

Կ. Ֆ. Լեման-Հաուպտը Մանապկերտի կամարաձև ավարտով որմնախորշերին վերագրում է արևմտյան ծագում՝ դրանք համեմատելով Ամասիայի և պոնտական դամբարանների (մ. թ. ա. 2-րդ հազարամյակ) կամարակապ մուտքերի հետ, որոնք ըստ նրա ենթադրության կարող էին լինել ընդօրինակման հիմնական աղբյուրը[116]: Երկու տարածաշրջանների մերձավորության հանգամանքը նկատի ունենալով՝ սույն վարկածը կարելի է հավանական համարել: Կամարաձև ավարտով որմնախորշեր ունեցող բոլոր դամբարաններն էլ հայտնաբերված են կա՛մ Ուրարտուի արևմտյան շրջաններում, կա՛մ Վանա լճի հյուսիսային ափերից ոչ հեռու: Վանա լճից արևելք ընկած շրջաններում՝ Տուշպայում և Ալիշարում, հայտնի են միայն ուղղանկյունաձև որմնախորշեր: Կամարաձև և ուղղանկյունաձև որմնախորշերը սովորական են Մանապկերտի (թվագրվում է Մինուա արքայի թագավորության տարիներով) և Ալթին-թեփեի դամբարանների համար, որոնք կառուցվել են մոտավորապես այն ժամանակ, երբ փորվել են Վանի ժայռի Նավթ-քուրու և Խորխորյան Մեծ քարայրերը: Եվ թվում է, որ այնտեղ, որտեղ ավելի զգալի էին փոխառնչություն-

---

* Հայաստանի հանրապետության տարածքում հայտնաբերված, դիակիզման ծեսով կատարված վաղագույն թաղումները թվագրվում են մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերով: Թաղման այս ծեսը (դիաթաղմանը զուգահեռ) տևում է բավականին երկար, մինչև ուշ բրոնզի դար: Մի քանի հարյուրամյակ ընդմիջումից հետո այն կրկին ընդունելի ենք գտնում ուրարտական մշակույթում. Հայաստանում այս ծիսակարգով թաղումները կատարվել են և հետագայում, ընդհուպ մինչև վաղ միջնադար ու քրիստոնեության պաշտոնական մուտքը Հայաստան (տես, օրինակ՝ *Հ. Ա. Մարտիրոսյան*, Հայաստանի միջինբրոնզեդարյան մշակույթի բնույթն ու զարգացման ուղիները, «Հայ ժողովրդի պատմություն», 1971, էջ 161–162, *Ժ. Դ. Խաչատրյան*, Դիակիզումը Հայաստանում (մ. թ. ա. 2-րդ դ.–մ. թ. 3-րդ դ.), «Բարեր» ՀԱԱՀ ԳԱ (հաս. գիտ.), 1975 թ., հ. 2, էջ 57–69):

** Հայտնի չէ, թե ինչպես էին արբագործվում փաստորեն որպես կենցաղային գույք պատրաստված այդ անոթները. գիտենք միայն, որ նախքան որպես աճյունասափոր օգտագործելը այդ կավանոթների ուսերին փոքրիկ անցքեր էին բացում: Այդ անցքերի առկայությունը հիմք է տվել Բ. Ա. Կուֆտինին ենթադրելու, որ Ուրարտուում գոյություն է ունեցել այն պատկերացումը, թե հոգին անմիջապես չի լքում հանգուցյալի աճյունը (նույնիսկ դիակի մոխրանալուց հետո) և կարիք ունի հարդարակցվելու արտաքին աշխարհի, մասնավորապես դամբարանում դրված իրերի հետ: Այս առումով ուշագրավ է և այն, որ հանգուցյալին սովորաբար այրել են իր հագուստով ու զարդերով հանդերձ (տես *Б. А. Куфтин*. Урартский колумбарий у подошвы Арарата и куро-араксский энеолит, «Вестник Гос. музея Грузии», вып. XIII-B, 1944, с. 69–70).

ները արևմտյան երկրների հետ, հորինվել են և կամարակապ որմնախորշերը: Սակայն Ուրարտուի արեելյան շրջանները ըստ երևույթին վերջ մնացին այս նորամուծությունից ու անխաթար կերպով շարունակեցին ուղղանկյունաձև որմնախորշերի օգտագործման ավանդույթը: Չնայած այս հանգամանքին՝ Նավթ-քույու և Ինչկալա քարայրերի կենտրոնական սրահների, Զինապահեստի մոտի դամբարանի փոքր սենյակի և Ալիշարի 2-րդ սենյակի առաստաղները կամարաձև են: Ասվել է արդեն, որ դամբարաններում դիտվող կամարաձև առաստաղի գաղափարը գալիս է վերգետնյա կառույցների նման հորինվածքից, և եթե ճիշտ է այս կարծիքը, ապա պետք է ենթադրել, որ կա՛մ արևմտյան շինարվեստի ազդեցությունն է շատ մեծ եղել ուրարտականի վրա, կա՛մ ուրարտացիները, արևմտյան ազդեցությունից անկախ, իրենք են հանգել կամարաձևության գաղափարին: Սակայն առայժմ, քանի դեռ չափազանց սակավ է այս խնդրի հետ առնչվող տեղական ավելի հին նյութը, հնարավորություն չկա վերջնական եզրակացության գալու կամարի ծագման տեղական արմատների մասին*:

Ուրարտական ժայռափոր դամբարանների գոյացման երկրորդ հնարավոր օտար աղբյուրը Ասորեստանն է: Այժմ քաջ հայտնի է, թե ուրարտացիներն ինչ և երբ են փոխառել իրենց այս հիմնական ախոյան երկրից[117]: Ուրարտուն և Ասորեստանը մի քանի դար անընդհատ փոխառնչվում էին թե՛ քաղաքական և թե՛ մշակութային կյանքի առումներով: Մ. վան Լունը, ուրարտական արվեստի մասին խոսելով, նկատել է, որ այստեղ միջագետքյան փոխառությունները շատ են, սակայն այնքան փոփոխված, որ կարելի է իրավամբ ասել, թե դրանց տեղական զարգացումը հանգեցրել է մեկ այլ ուրույն արվեստի՝ ուրարտականի, ձևավորմանը[118]: Մասնավորապես ենթադրվում է, որ ուրարտացիներն Ասորեստանից են փոխառել պերճաշուք թաղումներ կատարելու սովորույթը[119] (խոսքը, սակայն, դամբարանների հորինվածքների մասին չէ): Մ. թ. ա. 9-րդ դարից առաջ, հետագայի ուրարտական պետության սահմաններում, նկարագրված դամբարանների նման ավելի վաղ կառույցներ դեռևս հայտնաբերված չեն: Մեկ հայտնի ամենահին ուրարտական դամբարանները թվագրվում են Մինուա արքայի թագավորության տարիներով: Այդ ժամանակ ուրարտացիներն արդեն ունեին ժայռավոր դամբարաններ կառուցելու փորձ, և երկրի կենտրոնական շրջանում արդեն կառուցված էին կամ կառուցվում էին Մանավկերտի դամբարանը, Վանի Մեծ քարայրն ու հյուսիսային քարայրը: Եթե ժայռերի մեջ վեհաշուք դամբարաններ կառուցելու ուրարտական փորձը ասորեստանյան ակունքներ ունի, ապա հարկ է կարծել, որ այդ երկու երկրների միջև մշակութային փոխառնչություններբ գոյություն են ունեցել ուրարտական թագավորության կազմավորման առաջին իսկ տարիներից: Դա փաստարկված է և ասուրական սեպագիր տվյալներով: Խոսքը մասնավորապես Սալմանասար 3-րդ արքայի (մ. թ. ա. 858—824 թթ.) տարեգրության որոշ հատվածների մասին է, որտեղ նկարագրվում են այս արքայի օրոք դեպի Ուրարտու կատարված արշավանքները**: Այս, ինչպես նաև սրանց նախորդած ասուրական արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհ նպաստեցին Հայաստանի լեռնային գեղերի միավորմանը. ստեղծված ֆեդերացիան կարողացավ պաշտպանվել ասուրական բանակի հարձակումներից: Նորաստեղծ Վանի թագավորությունը, սակայն, զգալով իր վարչակառավարչական կառույցների անկատարությունը, Ասորեստանից ընդօրինակեց երկրի կառավարման հետ առնչվող շատ պետական կառույցներ***: Մ. թ. ա. 8-րդ դարի առաջին կեսում սկսված ասուրական պետության թուլացմանը զուգընթաց տարածաշրջանում աճեց Ուրարտուի քաղաքական ազդեցությունը: Վանի արքաների ձեռնարկած հաղթական արշավանքներն ավելի մեծացրին ուրարտական արքաների հեղինակությունն ու տնտեսական հզորությունը: Այս ժամանակ, թերևս, Ուրարտուի տիրակալների շրջանում ուժեղացավ Ասորեստանի գահակալներին նմանվելու ձգտումը, որի դրսևորումներից մեկն էլ հենց կարող էր լինել ուրարտական վեհաշուք դամբարանների կառուցումը:

Ուրարտական ժայռափոր դամբարանների հնարավոր օտար ծագման մասին խոսելուց վատ, բնականաբար, անհրաժեշտություն կա քննարկելու և լեռնաշխարհին բնորոշ նախաուրարտական նյութը: Այս նպատակի համար ընտրել ենք Մինգեչաուրի դամբարանադաշտի ուսումնասիրությամբ ստացված տվյալները: Մինգեչաուրի դամբարանադաշտը գտնվում է Կուր գետի ավազանում, Սևանա լճից շուրջ 180 կմ արևելք և ընդգրկված չի հղել Վանի թագավորության սահմաններում, այսինքն՝ ուրարտացիները այս տարածքում որևէ շինարարական գործունեություն չէին կարող ծավալած լինել:

Այս դամբարանադաշտում բացված, էնեոլիթից բրոնզի դար ընկած ժամանակաշրջանի շուրջ 100 դամբարանները**** բոլորն էլ դիաթաղումներ էին, որոնց մի նշանակալից մասը՝ հիմնահողային բնույթի: Դամբարանները կազմված է խեցեղենից, զարդերից, վենքերից: Այստեղ պեղված դամբարանների հաջորդ խումբն էին կազմում դամբանաբլուրները: Հայտնաբերված 20 դամբանաբլուրներից պեղվել են հինգը: Այս դամբանա-

* Հավաստված է միայն կեղծ կամարի առկայությունը, որը տիպական էր Հայաստանի քարարկղային դամբարանների համար՝ առնվազն ուշ բրոնզի դարից սկսած:

** Սալմանասար 3-րդը այս արշավանքների ընթացքում Ուրարտուի տարածքում իրեն ներկայացնող մի քանի բարձրաքանդակներ է հրամայել կերտել, իսկ Ասորեստանում իր պալատի դարպասների երեսպատման բրոնզե թիթեղների վրա դրվագել պատկերներ, որոնք պատմում են, մասնավորապես և Ուրարտուի դեմ տարած իր հաղթանակների մասին (տես *Б. Б. Пиотровский*, Ванское царство, с. 52–60).

*** Այս երևույթի վաղագույն արտահայտությունը Սարդուրի 1-ինի տիտղոսաշարն է, որը շատ մանրամասնորեն կրկնում է ասուրական, մասնավորապես, Աշուրնաձիրպալ 2-րդ (մ. թ. ա. 883–859 թթ.) արքաների տիտղոսները (այս մասին հանգամանորեն տես *N. Adontz*. Histoire d'Arménie, les origines de X^e siecle au VIe (av j. c.), Paris, 1946, p. 184.

**** Մինգեչաուրի այս դամբարանների թվագրությունը այժմ հիմնովին վերանայված է:

ղուրները ցածրադիր են, շրջանաձև և ծածկված են հողի շերտով: Թաղումները կատարվել են ուղղանկյունաձև դամբարանախցերում: Դամբարանախցերից երեքում հայտնաբերվել են պատի ծեփի մնացորդներ: Դամբարանախցերի հատակի վրա բացվել է նաև փայտի քայքայված մնացորդների շերտ: Չնայած դամբարանների խոշոր չափերին՝ դրանցից յուրաքանչյուրում թաղված էր եղել մեկ մարդ*: Դամբարանյութը կազմված է եղել խեցեղենից, բրոնզե զարդերից, վանակատից պատրաստված նետասլաքներից: Մարդու ոսկորներից բացի այս դամբարաններում հայտնաբերվել են նաև կենդանիների, մասնավորապես, ձիու և ոչխարի կմախքներ: Մարդն այստեղ թաղվել է կծկված դիրքով: Գ. Մ. Ասլանովի կարծիքով Մինգեչաուրի դամբարանադաշտում դիտվող այս երկու ձևի դամբարանների առկայությունը (հիմնահողային և քարաբկղային) բացատրվում է բրոնզի դարում այստեղ արդեն գոյություն ունեցած սոցիալական շերտավորման առկայությամբ[120]:

Եթե համատեղելու լինենք Մինգեչաուրի դամբարանները ուրարտականների հետ, կտեսնենք հետևյալ ընդհանրությունները.

1. ՈՒղղանկյունաձև դամբարասրահներ:

2. Գույք՝ խեցեղեն, բրոնզե առարկաներ, զենքեր ու զարդեր:

3. Մեծ խնամք դամբարասրահների ներսակողմի նկատմամբ:

4. Դիաթաղման ծես:

Սակայն ուղղանկյունաձև դամբարասրահները համընդհանուր բնույթ ունեն և այս դեպքում զուրկ են որևէ կարևորությունից: Համընդհանուր բնույթ ունի նաև դամբարաններում դրված գույքի տեսակներին ու որակը: Աչքի ընկնող երրորդ ընդհանրությունը՝ խնամքով հարդարված ներսատարածքը, նույնպես մեզ հնարավորություն չի ընձեռում հեռուն գնացող ընդհանրացումների համար: Նույնը կարելի է ասել չորրորդ ընդհանրության՝ դիաթաղման ծեսի վերաբերյալ: Այսինքն՝ Անդրկովկասին բնորոշ դամբարանային կառույցները չեն տալիս որևէ լուրջ կռվան, որը օգներ ուրարտական ժայռափոր դամբարանների ծագման խնդիրը լուծելուն:

Այսպիսով, ուրարտական ժայռափոր դամբարանների տեղական ծագման մասին վկայող, առայժմ միակ, սակայն և ծանրակշիռ փաստարկն առնչվում է երկրի ունեցած բնորոշ երկրաբանական կառուցվածքի և, այս հանգամանքով պայմանավորված, տարածաշրջանում առանձնահատուկ շինարվեստի գոյության հետ: Խոսքը կրկին երկրի լեռնային ու քարաշատ բնույթի և այստեղ քարի ճարտարապետության ունեցած նշանակալից նվաճումների մասին է, մեկը մյուսով պայմանավորված երկու հանգամանք, որոնք հավանական են դարձնում ժայռափոր դամբարանների տեղական ծագումն ՈՒրարտուՈՒմ:

* * *

ՈՒրարտական ժայռափոր դամբարանների ճարտարապետության ունեցած ազդեցությունների ժամանակատարածքային սահմանների որոշման խնդիրը ավելի դյուրին է թվում, քան ծագման խնդրի հետազոտումը: Հարցի լուծումն իրականացավ պատմական ավելի ուշ դարերում, քանի որ մեծ քանակությամբ արձանագրությունները, հնագիտական նյութերը վավերացրել են գաղափարների, գեղարվեստական մոտիվների և մշակութային ավանդույթների յուրացման ու տարածման ուղիները:

ՈՒրարտական ժայռափոր դամբարանների ամենամոտ զուգահեռները գտնում ենք Իրանում: Աքեմենյան հզոր արքաները Մերձավոր Արևելքի երկրներից շատ փոխառություններ կատարեցին: Աքեմենյան գեղարվեստի և ճարտարապետական շատ ոճերի հիմնական սկզբնաղբյուրը Ասորեստանի, ՈՒրարտուի և Մարաստանի մշակույթներում է փնտրվում[121]: Մարերի միջոցով Աքեմենյաններին փոխանցվեցին ուրարտական արվեստին և ճարտարապետությանը բնորոշ շատ ուղղություններ[122]: ՈՒրարտուին այնքան բնորոշ «կիկլոպյան ճարտարապետությունը» յուրացվեց ու կատարելագործվեց նրանց կողմից: Այն հետագայում օգտագործվեց Աքեմենյան երկու մեծ մայրաքաղաքների՝ Պասարգադայի և Պերսեպոլսի կառուցման ժամանակ: Պասարգադայի ու Պերսեպոլսի սյունազարդ սրահները թերևս Առաջավոր Ասիայի մշակույթում ուրարտացիների կատարած ամենաուշագրավ ներդրումն է[123]: Ժայռափոր դամբարանների գաղափարի՝ Պարսկաստան ներթափանցելու մասին ամենակոթողային վկայությունը Դարեհի դամբարանն է Նախշ ի Ռուստամում (մ. թ. ա. 485 թ.)[124]: Այս դամբարանի հորինվածքը, Աքեմենյան որոշ այլ ճարտարապետական վերամշակումների նման, վկայում է այստեղ Վանի դամբարանաշինության վաղ ձևերի կատարելագործման մասին: Դամբարանի մուտքը գտնվում է ժայռի ճակատին փորված խաչաձև հսկայական (խորշի լայնքը՝ 18 մ) կենտրոնում: Խաչի հորիզոնական փորվածքը կազմող արգելապատին քանդակված են չորս սյուն, որոնք հայտնի են Պերսեպոլսի Դարեհի պալատից: Դամբարանի մուտքի ճակատը հարդարված է բարձրաքանդակներով (նկ. 18): Այս առումով, Աքեմենյանների կողմից ուրարտական ճարտարապետությունից կատարված փոխառությունների մասին տեսակետը, թերևս, ենթադրական է: Հետաքրքրությունն այս երևույթի հանդեպ պայմանավորված կարող էր լինել, սակայն, ուրարտական դամբարանների անչափ տպավորիչ բնույթով: Ելնելով աքեմենյան ճարտարապետության առանձնահատկություններից՝ կարելի է ենթադրել, որ Աքեմենյանները փորձել են իրենց փառահեղությունը ցուցադրել հպատակներին: Ինչպես ասվել է, Վանի ռազմականացված թագավորությունում վեհաշուք ժայռափոր դամբարաններն էլ ունեցել են այդ գործառույթը:

ՈՒրարտական թաղումները իրենց նմանակներն ունեն նաև Սկյութիայում:

ՈՒրարտացիների նախկին դաշնակից սկյութները որոշակի դեր խաղացին տկարացած ուրարտական

* Որոշ դամբարաններում, սակայն, մարդու ոսկորներ չեն հայտնաբերվել:

պետության կործանման մեջ (մ. թ. ա. 585 թ.)[125]: Սկյութների և ուրարտացիների առնչությունների հետևանքը եղավ այն, որ ուրարտական արվեստի շատ դրսեորումներ կլանվեցին սկյութների կողմից և տեղ գտան սկյութական ավանդույթներում: Սկյութական դամբարաններում գտնվել են բազում այնպիսի առարկաներ, որոնք սկյութական շատ մոտիվների ուրարտական ծագման մասին են վկայում (սրբազան ծառի մոտիվը, տարբեր կենդանական բարդ նկարագրադումներ և այլն): Այուս կողմից, ակնհայտ է, որ սկյութական դամբանաբլուրները ուրարտական ճարտարապետական հուշարձանների հետ կառուցվածքային ոչ մի առնչություն չունեն: Ինչպես սկյութների դեպքում, ուրարտական դամբարանները ոչ մի նշանակալից դեր չեն խաղում բացահայտելու համար Սիրիայում, Անատոլիայում և Հունաստանում հիմնական գեղարվեստական և ճարտարապետական հորինվածքների վրա ուրարտական ազդեցությունը ուսումնասիրելու տեսանկյունից[126]: Հետևաբար դամբարանների ուսումնասիրությունը չի բացահայտում մերձավոր արևելյան մշակույթներում ուրարտական ազդեցության չափն ու սահմանները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս ուսումնասիրության մեջ ուրարտական քաղաքակրթության վերաբերյալ բավականաչափ վավերացված տեսակետների և տակավին չմեկնաբանված հարցերի ու հնարավոր հետևությունների ներկայացման հետ մեկտեղ բացահայտվում են այն տարածաշրջանները, որտեղ առաջիկայում նոր փաստերի հայտնագործման համար անհրաժեշտ է հետազոտություններ կատարել:

Թեև թաղման ծեսում և ճարտարապետական որոշ մոտիվներում խեթերի և ուրարտացիների միջև մշակութային զուգահեռներ կան, բայց խեթական պետության սահմաններում տակավին բացակայում են ժայռափոր դամբարանների խեթական ծագումը հաստատող փաստեր: Նույնը կարելի է ասել և ՈՒրարտուում վերգետնյա ճարտարապետական հորինվածքների տարածման սիրիական վարկածի մասին: Չնայած ուրարտական մշակույթի վրա Ասորեստանի մշակույթի ունեցած ընդհանուր ազդեցությանը՝ ժայռափոր դամբարանների վրա եղած ասուրական ազդեցությունը երկրորդական պիտի դիտվի: Օրինակ՝ ասուրական մշակույթի ազդեցությունն արտահայտվել է ուրարտական կառույցների առավելապես համակարգման կանոնավորության մեջ: Այնուամենայնիվ դամբարանների առանձնահատուկ գծերը, քարի մշակման տարբեր եղանակները և ուրարտական ճարտարապետության գլխավոր միտումները օտար ազդեցությունների որոնումները դարձնում են քիչ խոստումնալի: Հնարավոր է, որ իշխողների վեհությունը ցուցադրող ուրարտական ժայռափոր դամբարանների կարգացման գլխավոր գործոններ լինեն աշխարհագրական ուրույն միջավայրն ու քաղաքական-կրոնական իրադրությունը[127]: Ժայռը հարատև ու վեհաշուք կառույցների համար ոչ միայն կատարյալ հումք էր, այլև դամբարանները ժայռի մեջ փորելով խնայվում էին մշակովի հողերը: Ժայռափոր դամբարաններ չէին կառուցվում նաև այն վայրերում, որոնք ունեին ռազմավարական կարևոր նշանակություն:

Դամբարանների տարբեր մանրամասների կիրառական նշանակության քննությամբ ընկալվում են ՈՒրարտուի սոցիալ-քաղաքական և հոգեոր կյանքի կարևոր կողմերը: Վերջին առումով շատ կարևոր է կողմնային որմնախորշերի ունեցած կիրառական նշանակության քննությունը: Ժայռափոր դամբարանների մեծ մասը ունեցել է որմնախորշեր, հարթակներ կամ քարատապաններ: Դիակիզումը ՈՒրարտուում ընդունված ծես էր, հետևաբար միանգամայն հավանական է, որ բոլոր որմնախորշերը նախատեսված լինեին աճյունասափորների համար: Դամբարանների հիմնական սրահները ամենամեծն ու ամենալուսավորներն էին: Սա ենթադրում է, որ բոլոր դամբարաններում գլխավոր սրահները ծառայել են թաղման կամ զոհաբերության արարողությունների համար: Դամբարանների հիմնական կառուցվածքային տարրերի (որմնախորշեր, հիմնական սրահներ, նրբորեն հղկված պատեր և այլն) առկայությունը, որն ընդհանուր է բոլոր ժայռափոր դամբարանների համար, վկայում է համայն ՈՒրարտուՈՒմ պաշտամունքային, հատկապես թաղման արարողակարգի ավանդույթների ժամանակագրական հարատևման մասին: Որմնախորշերի, կատարման ոճերի և շարքերի ձևավորման ըստ տարածաշրջանների տարբերությունները հավաստում են, որ ուրարտական բնակավայրերն ինչ-որ չափով մեկուսացած են եղել մայրաքաղաք Տուշպայից: Աշխարհագրական այսպիսի մեկուսացումը ապացուցվում է պատմական այն տվյալներով, որոնք վկայում են տեղական կառավարիչների վրա հսկողության իրականացման դժվարությունների մասին[128]: Դամբարանների հարդարանքի, չափերի և շինարարական հմտությունների տարբերությունը ցուցադրում է շինարվեստի զարգացման բարձր մակարդակը՝ միաժամանակ արտացոլելով յուրաքանչյուր թագավորի կառավարման ժամանակի տնտեսական-քաղաքական իրավիճակը: Դամբարանների ճարտարապետությունը իր զուգահեռներն ունի վերգետնյա ճարտարապետական շինություններում: Իսկ եթե դա այդպես է, ուրեմն թե՛ հարթ և թե՛ կամարաձև առաստաղ ունեցող սենյակները սովորական են եղել ուրարտական բոլոր կառույցների համար[129]:

ՈՒրարտական ժայռափոր դամբարանների ճարտարապետության ազդեցությունը զգալի է միայն Աքիմենյան Իրանում, ինչպես օրինակ՝ Դարիհի դամբարանն է Նախշ ի Ռուստամում: Ընդամենը Իրանում կատարելագործվեց ու նրբաճաշակորեն ձևափոխվեց քարի որմնադրությունը և ուրարտական այունապարդ սրահի հորինվածքը[130]: Այնուամենայնիվ ուրարտական ժայռափոր դամբարանների կառուցման ավանդույթը լայն տարածում չի գտել այլ երկրներում: Մյուս կողմից, սակայն, ընդհանրապես ուրարտական մշակույթն իր ուրույն ազդեցությունն է ունեցել մարերի, սկյութների, հույների, ինչպես նաև Սիրիայից Անատոլիա ընկած բնակավայրերի վրա: Փղոսկրե և մետաղե առարկաների վրա վերարտադրված կենաց ծառի ու կենդանական զարդամոտիվների կատարման ոճը (ինչպես օրինակ՝ Զիվիեի գանձում է) խորհրդանշում է ուրարտական մշակույթի ազդեցությունն այն վայրերում, որտեղ ժայռափոր դամբարաններ առհասարակ չեն հայտնաբերվել:

ՈՒրարտական ժայռափոր դամբարանները մշակութային այն երևույթների շարքն են դասվել, որոնց հիման վրա առաջ են քաշվել Մերձավոր Արևելքի մշակութային

կյանքին առնչվող տարբեր խնդիրներ: Դամբարանների վերլուծությունից բխող համապատասխան տեղեկությունները պիտի դիտվեն պատմական, հնագիտական այլ նյութերի կոնտեքստում, որպեսզի հնարավորին չափ ճիշտ ընկալվի Հայկական բարձրավանդակի կյանքն այնպես, ինչպես այն եղել է դարեր առաջ: Հուսանք, որ առաջիկա պեղումները նոր նյութեր կբացահայտեն ու կճշտեն մեր պատկերացումները Առաջավոր Ասիայի մշակույթի վրա ուրարտական դամբարանների ճարտարապետության ունեցած ազդեցության մասին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Г. А. Меликишвили.* Урартские клинообразные надписи, М., 1960; *И. М. Дьяконов.* Урартские письма и документы, М.—Л., 1963.

2. *Charles Burney* and *David M. Lang.* The Peoples of the Hills Weidenfeld and Nicolson, London, 1971, (այսուհետև՝ PH), pp. 128—129.

3. *B. B. Piotrovski.* The Ancient Civilization of Urartu (այսուհետև՝ ACU). Barrie and Rockliff: The Crcssct Press, trans; James Hogarth. London, 1969, pp. 13—19.

4. *B. B. Piotrovski.* Urartu, The Kingdom of Van and its Art. Evelyn, Adams and Mackay, Ltd., London, 1967 (այսուհետև՝ «*Urartu*»), p. 47

5. *Guitty Azarpay.* Urartian Art and Artifacts. University of California Press, Berkeley, 1975, pp. XVII—XVIII.

6. «*Urartu*», p. 5.

7. Նույն տեղում, էջ 7—14:

8. Նույն տեղում, էջ 3:

9. ACU, p. 50.

10. Նույն տեղում, էջ 16—17:

11. *Kurt Bittel.* Hattusha, The Capital of the Hittites. Oxford University press, New York, 1970,

12. *Burchard Brentjes.* Dreijahrtausende *Armenien.* Verlag Anton Schroll und Co., München, 1974, S. 32.

13. *B. B. Piotrovski.* The Kingdom of Van (= il Regno de Van. Urartu). Edizioni dell' Ateneo, Rome, 1966, (այսուհետև՝ VT), pp. 204—219.

14. VT, p. 209.

15. *Б. Б. Пиотровский.* Ванское царство. Изд. Вост. лит., М., 1959 (այսուհետև՝ «Ванское царство»), с. 209.

16. Նույն տեղում: VT, pp. 207—210.

17. VT, p. 211.

18. PH, p. 145. plate 48; *Margarete Riemschneider.* Das Reich am Ararat. Lambert Schneider, Heidelberg, 1966, S.70.

19. «Ванское царство», с. 211.

20. PH, p. 145.

21. VT, pp. 212—213.

22. Նույն տեղում:

23. Նույն տեղում, էջ 215—216:

24. Նույն տեղում:

25. Նույն տեղում, էջ 216—217:

26. *Tahsin Özgüç.* Altintepe II: Tombs, Storehouse and ivories. Türk Tarih Kurumu Bazimevi, Ankara, 1969 (այսուհետև՝ «Altintepe II»), p. 71.

27. «Altintepe II», pp. 10—14.

28. Նույն տեղում, էջ 15—18:

29. Նույն տեղում, էջ 28—33:

30. Նույն տեղում, էջ 18—26:

31. *Tahsin Özgüç.* Excavations at Altintepe. «Belleten», XXV, 98.Türk Tarih Kurumu, Ankara, 1961, p. 272.

32. Քարատապանի մանրամասն նկարագիրը տես «Altintepe II», pp. 68—69.

33. VT, p. 218.

34. «Ванское царство», с. 35—36.

35. *C. F. Lehmann-Haupt.* Armenien einst und jetzt. I, Berlin, 1910, II, 1, Berlin–Leipzig, 1926, II, 2, Berlin–Leipzig, 1931 (այսուհետև՝ «Armenien»), S 469; *C. F. Lehmann-Haupt.* Materialen zur alteren Geschichte Armeniens und Mesopotamiens. Abhandlungen der Königlichen Gesellschaft der Wissenschaften zu Gottingen, IX, Wedmannsche Buchhandlung, Berlin, 1907 (այսուհետև՝ «Materialen»), S. 70.

36. VT, p. 208.

37. *Maurits Nanning van Loon.* Urartian Art: Its distinctive Traits in the light of new Excavations. Nederlands Historisch-Archaeologisch Institut, Istanbul, Leiden, 1966 (այսուհետև՝ UA), p. 62.

38. PH, p. 139.

39. Charles Burney. A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalidere. «Anatolian Studies», XVI. British institute of Archaeology at Ankara, London, 1966, (այսուհետև՝ AS, XVI). pp. 55—111.

40. PH, p. 150.

41. Նույն տեղում, էջ 145—153:

42. *Baki Ögün,* and *Emin Bilgic.* Recent Archaeological Research in Turkey: Adilcevaz. «Anatolian Studies», XXIII. British institute of Archaeology at Ankara, London, 1973, pp. 13—14.

43. Նույն տեղում:

44. Նույն տեղում: *R. D. Barnett.* The Urartian Cemetery at Igdir, «Anatolian Studies», XIII, 1963, pp. 153—198.

45. *Wolfram Kleiss.* Urartäische Architektur: in Urartu: Ein wiederentdeckter Rivale Assyriens. Katalog der Ausstellung, München, 1976, S. 42.

46. *R. Dyson.* Problems of Proto-historic Iran as Seen from Hasanlu. «Journal of Near Eastem Studies», XXIV, N 3. University of Chicago Press, Chicago, 1965, p. 203.

47. Altintepe II, pp. 65—70.

48. *К. Л. Оганесян.* Архитектура Тейшебаини (Кармир-Блур IV). Е., 1955; *W. Kleiss.* նշվ. աշխ., էջ 28:

49. Այս մասին հանգամանորեն տես. *Charles Burney.* Measurcd Plans of Urartian Fortresses, «Anatolian Studies», X, 1960, pp. 177—196.

50. UA, pp. 42—54.

51. Նույն տեղում, էջ 55—60.

52. Նույն տեղում, էջ 59.

53. VT, p. 208.

54. Նույն տեղում:

55. Նույն տեղում, էջ 219:

56. PH, p. 145:

57. *W. Kleiss,* նշվ. աշխ., էջ 29:

58. *T. M. Coles.* Experimental Archaeology. Charles Scribner's Sons, New York, 1973, pp. 83—84. Փորձերը կատարվել են Ասուանում:

59. *Thor Heyerdahl.* Aku-Aku, George Allen and Unwin, Ltd., London, 1958. Փորձերը կատարվել են Զատկի կղզում:

60. *J. S. Velson* and *T. C. Clark.* Transport of Stone Monuments to the La Venta and the San Lorenzo Sites. Contributions of the University of California Archaeological Research Facility, N24, Berkeley, 1975, pp. 11—39.

61. *D. Ingersoll, I. E. Yellen* and *W. Macdonald.* Archaeology by Experiment. Columbia University press, New York, 1977, pp. 61—69.

62. *Clarence I. McGillard.* Oakland, California. Տվյալները ստացել եմ անձնական հաղորդակցության միջոցով: Արդյունքը. գործիքը՝ պողպատե մուրճ-հատիչ, նյութը՝ գրանիտ. խորանարդ մետրը՝ 20 «մարդ-օր»:

63. *Markar Melkonian.* Venice, California. Տվյալները ստացել եմ իր հետ ունեցածս անձնական հաղորդակցությունների ընթացքում: Արդյունքը. մեկ խորանարդ մետր ապար պեղելու համար ծախսվել է 24 «մարդ-օր»:

64. *D. Ingersoll, I. E. Yellen* and *W. Macdonald,* նշվ. աշխ., էջ.96:

65. *S. Aaberg* and *J. Bonsignore.* Consideration of Time and Labor Expenditure in the Construction Process at the Teotihuacan Pyramid of the Sun and the Poverty Point Mound, Contributions of the University of California Archaeology Research Facility, N 24, Berkeley, 1975, p. 48.

66. United, Nations, Earth Moving by Manual Labor and Machines, United Nations publicatoin ST-ECAFE/SER. F/17, Bankok, 1961. Փորված ապարի փոխադրման ժամանակ ծախսված «մարդ-ուժի» քանակը հաշվել ենք հետևյալ բանաձևով. $qH\frac{L}{V} + \frac{L}{V'}$, որտեղ q-ն գետեղարանի տարողությունն է, H-ը՝ աշխատանքի ժամերը, L-ը՝ հեռավորությունը, V-ն և V'- ը՝ բարձած և չբարձած փոխադրականի հաճախականությունը:

67. Հմմտ. *D. Ingersoll, I. E. Yellen*, նշվ. աշխ., էջ 96:
68. *B. Ögün and E. Bilgic*, նշվ. աշխ., էջ 13—14:
69. Հիշարժան է, որ Մինուայի գահակալության տարիներին թե՛ Մեծ և թե՛ Հյուսիսային քարայներն արդեն փորված էին: Ինչպես ասվել է, Հյուսիսային քարայրը դամբարան չի հղել, և այն, որ Հյուսիսային քարայրը գտնվում է Մեծի հարևանությամբ, այս ենթադրությունն ավելի հավանական է դարձնում, քանի որ Մինուան որպես դամբարան կարող էր օգտագործել միայն մեկ այր, ընդ որում, այս երկու քարայրերն էլ գրեթե նույն չափերն ունեն:

Խորխորյան երկու քարայրերը սովորաբար թվագրվում են Արգիշթի I-ինի գահակալության տարիներով: Բայց այս քարանձավները շատ տարբեր են, և եթե ընդունենք, որ Խորխորյան Մեծ քարայրը Արգիշթիի դամբարանն է հղել, ապա պետք է ընդունենք նաև, որ Փոքր քարայրը պատկանել է Արգիշթիից դիրքով ավելի ցածր, սակայն և հրկրում մեծ հեղինակություն վայելած մեկ այլ մարդու:

70. Որևիցե թագավորի կամ կառավարչի հզորության աստիճանը իր նախաձեռնած շինությունների քանակով և որակով գնահատելու փորձի դեպքում կարող է չափազանցվել միապետի քաղաքական կարողության նկարագիրը: Այսպես օրինակ՝ դատելով Աշոկա կայսեր հրովարտակներից՝ կարելի է կարծել, թե Աշոկանների ազդեցությունը տարածվել է Հնդկական թերակղզու բոլոր բնակավայրերի վրա: Բայց վերջերս Աշոկայի ենթադրվող հզորությանը վերագրվող տվյալների քննությունը վկայում է, որ նրա կողմից շատ հրովարտակներ արձակվել են, հավանաբար, իր անձը բարձրացնելու և այդ ձևով իր թույլ դիրքերը ամրացնելու նպատակով: ՈՒրարտական ժայռափոր դամբարանների պարագան առանձնահատուկ է և շատ տարբեր: Յուրաքանչյուր թագավորի դամբարանը կարող էր տեղադրվել միայն մեկ վայրում: Ավելացնենք, որ դամբարանները խնամքով փակվել են կամ պաշտպանվել, հետևաբար դրանց դերը ժողովրդի վրա տպավորություն գործելու տեսակետից և իբրև թագավորի հեղինակությունը բարձրացնող հուշարձանների, սահմանափակ է հղել:

Դամբարաններից շատերի վրա թափված աշխատանքի արդյունքի միայն մի մասն էր տեսանելի՝ փակ դուռը և կից արձանագրությունները: Չնայած դամբարանը, այնուամենայնիվ, նաև թագավորի ամբողջության վկայությունը պիտի լիներ, սակայն եթե արքան հարկ եղածից ավելի մեծ ծախսեր աներ, կարող էր արդարացի դժգոհություն առաջանալ: Խելամիտ տիրակալը երբեք չէր անի նման բան: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ արքայական դամբայանները ընդգծում են թագավորի հզորության ամենաստորին սահմանը:

71. «Armenien I», SS. 469—470.
72. Charles Burney, նշվ. աշխ., էջ 101:
73. PII, p. 153.
74. Նույն տեղում:
75. Charles Burney, նշվ. աշխ., էջ 101:
76. «Altintepe II», p. 67.
77. Նույն տեղում, էջ 65—66, 68—72:
78. VT, pp. 207—219.
79. Սովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Գիրք առաջին, ԺԶ:
80. VT, p. 218.
81. *B. Ogün* and *E. Bilgic*, նշվ. աշխ., էջ 14:
82. PII, p. 152—153.
83. Նույն տեղում: *B. Ogün* and *E. Bilgic*, նշվ. աշխ., էջ 14:
84. Նույն տեղում:
85. «Altintepe II», p. 70—71.
86. *W. Kleiss*, նշվ. աշխ., էջ 29—31:
87. PH, p. 146:
88. «Armenien II», S. 120:
89. «Altintepe II», p. 71.
90. PH, p. 153:
91. «Altintepe II», p. 65—70:
92. *Tamara Talbot Rice*, A Concise Hystory of Russian Art. Praeger, New York, 1963.
93. VT, p. 212.
94. Նույն տեղում:
95. *W. Kleiss*, նշվ. աշխ., էջ 42:
96. *G. Azarpay*, նշվ. աշխ., էջ 4:
97. «Altintepe II», p. 67—69.
98. *T. Özgüç*, Excavations at Altintepe, pp. 67—69:
99. *B. Ögün* and *E. Bilgic*, նշվ. աշխ., էջ 14—15:
100. *M. Riemschneider*, նշվ. աշխ., էջ 70:
101. «Altintepe II», p. 73—74.
102. VT, p. 211.
103. Սովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Գիրք առաջին, ԺԶ:
104. *K. Bittel*, նշվ. աշխ., էջ 12:
105. UA, pp. 38—41.
106. *K. Bittel*, նշվ. աշխ., էջ 17—25:
107. *Charles Burney*, The ancient Near East, p. 196.
108. Նույն տեղում, էջ 139:
109. UA, p. 64.
110. UA, p. 51.
111. Նույն տեղում:
112. Նույն տեղում, էջ 64.
113. *Б. А. Куфтин*. Урартский колумобарий у подошвы Арарата и куро-араксский энеолит. «Вестник Гос. музея Грузии», вып. XIII-B, 1994, с. 1—72.
114. *B. Ögün* and *E. Bilgic*, նույն տեղում:
115. *Б. А. Куфтин*, նշվ. աշխ., էջ 70.
116. «Armenien I», S. 469, «Materialen», SS. 70—72.
117. *G. Azarpay*, նույն տեղում:
118. UA, p. 167.
119. «Altintepe II», p. 71.
120. *Г. М. Асланов, Р. М. Вогдов, Г. М. Ионе*. Древний Мингечаур. Баку, 1959, с. 90—118.
121. UA, p. 51; *H. Frankfort*. The Art and Architecture of the Ancient Orient, p. 215.
122. *G. Azarpay*, նշվ. աշխ., էջ 55., UA, p. 80.
123. UA, pp. 52—53.
124. Պարոն Ֆլետչերը Աքեմենյանների դամբարանները դիտում է որպես Թեբեի արքայական դամբարանների նմանակներ: Ենթադրվում է, թե Դարիոն այս ձևն ընտրել է եգիպտոսում ճանապարհորդելիս: (Sir *Barister Fletcher*, A History of Architecture on the Comparative Method. B. T. Batsford Ltd., London, 1954, PP. 61—62). Եթե պարսիկներն այդ գաղափարը եգիպտոսից են փոխառել, ապա այդ դեպքում խնդիր է դառնում եգիպտական ժայռավոր դամբարանների աղբյուրի հարցը: Ս. թ. ա. 7-րդ դարում եգիպտական դամբարանների որոշ առանձնահատկություններ ենթադրում են արևելյան, այսինքն՝ ուրարտական կապեր (*W. Kleiss* and *P. Calmeyer*. Das unvollendete achaemenidische Felsgrabe bei Persepolis, «Archaeologische Mitteilungen aus Iran», N 8, 1975, p. 94.
125. ACU, r. 199.
126. ՈՒրարտական մշակութային ազդեցությունը տարածվել է և ուշ արևելյան հոսանքների միջոցով. Օրինակ, քառանկյունի աշտարակավոր տաճարները, մասնավորապես, Սուծածիրինը (որը պատկերված է դեպի Սուծածիր Սարգոն 2-րդի կատարած արշավանքի մասին պատմող բարձրաքանդակին) նմանակվել ու ձևափոխվել է Աքեմենյանների կողմից: Աքեմենյան Իրանի ճարտարապետությունն, իր հերթին, ազդեցություն է ունեցել արաբական ճարտարապետական ավանդույթների վրա, ինչը և իր արտացոլումն է գտել Մեքքայի ալ Քաաբայում (*B. Brentjes*, Drei Jahrtausende Armenien, Verlag Anton Schroll und Co. München, 1974, p. 32).
127. *G. Azarpay*, նշվ. աշխ., էջ 4:
128. «Urartu», pp. 10—12.
129. VT, p. 219.
130. UA, pp. 45—47.

МОНТЕ МЕЛКОНЯН

УРАРТСКИЕ ПОГРЕБЕНИЯ В СКАЛАХ: ОПИСАНИЕ И АНАЛИЗ

РЕЗЮМЕ*

Изучив конструктивные особенности обнаруженных на Армянском нагорье урартских скальных погребений, проанализировав их на широком историко-религиозном фоне, сопоставив свои взгляды с точкой зрения других ученых, разрабатывавших эту тематику, автор пришел к следующим выводам:

1. Представители высших слоев урартского общества проявляли заботу о своем потустороннем существовании, строя роскошные гробницы. Существовали определенные каноны строительства гробниц, в основе которых лежали обряд погребения и стремление обеспечить их недоступность.

2. Постройке гробницы предшествовал тщательный выбор места с учетом целого ряда обстоятельств: гробницы не сооружались в тех местах, которые могли быть использованы при сельскохозяйственных работах или имели военно-стратегическое значение. Кроме того, учитывалось пожелание будущего владельца гробницы. По этим причинам не исключено, что погребальные сооружения лиц, даже принадлежащих к царской семье, строились в местах, расположенных далеко от столицы.

3. У урартов существовало два основных способа захоронения: а) трупоположение; б) кремация. В случае трупоположения могли быть использованы саркофаги. При кремации пепел хранился в урне, размещаемой в специально изготовленной для этого нише.

4. В основе планировки урартских скальных гробниц лежит, по большей части, ряд параллельных и перпендикулярных друг относительно друга прямоугольных помещений, которые обычно опоясывают центральный зал и сообщаются с ним. Ритуальные действия, связанные с жертвоприношениями, производились в центральном, наиболее освещенном зале.

5. Погребальная архитектура Урарту напрямую связана с традициями постройки наземных сооружений. Как заметил в свое время Б. Б. Пиотровский, изучая погребения, можно составить мнение и о деталях наземных сооружений, не дошедших до нас. Так, можно предположить, что эти сооружения могли иметь коробчатое перекрытие.

6. Подсчитав затраченные на строительство известных нам гробниц время и рабочую силу и сравнив их с подобными сооружениями из других регионов, можно прийти к определенным заключениям: в частности, (безусловно, с определенными допущениями) составить мнение об экономическом и политическом могуществе того или иного урартского правителя.

7. Скальные погребения урартов не имеют прототипов на Армянском нагорье, хотя, учитывая естественные условия нагорья и вековые традиции каменной архитектуры, существовавшие здесь, не исключено, что эти погребения могут иметь местные корни.

8. Наиболее близкую аналогию урартским скальным гробницам находим в Ахеменидском Иране.

9. Урартские скальные гробницы, естественно, являются частью создаваемого из века в век культурного наследия населения Армянского нагорья. Следовательно, их изучение делает более понятным происхождение культуры нагорья, а также историю создавших эту культуру этносов.

---

* Ամփոփումները կազմվել են ինստիտուտի կողմից:

МОНТЕ МЕЛКОНЯН

УРАРТСКИЕ ПОГРЕБЕНИЯ В СКАЛАХ: ОПИСАНИЕ И АНАЛИЗ

РЕЗЮМЕ*

Изучив конструктивные особенности обнаруженных на Армянском нагорье урартских скальных погребений, проанализировав их на широком историко-религиозном фоне, сопоставив свои взгляды с точкой зрения других ученых, разрабатывавших эту тематику, автор пришел к следующим выводам:

1. Представители высших слоев урартского общества проявляли заботу о своем потустороннем существовании, строя роскошные гробницы. Существовали определенные каноны строительства гробниц, в основе которых лежали обряд погребения и стремление обеспечить их недоступность.

2. Постройке гробницы предшествовал тщательный выбор места с учетом целого ряда обстоятельств: гробницы не сооружались в тех местах, которые могли быть использованы при сельскохозяйственных работах или имели военно-стратегическое значение. Кроме того, учитывалось пожелание будущего владельца гробницы. По этим причинам не исключено, что погребальные сооружения лиц, даже принадлежащих к царской семье, строились в местах, расположенных далеко от столицы.

3. У урартов существовало два основных способа захоронения: а) трупоположение; б) кремация. В случае трупоположения могли быть использованы саркофаги. При кремации пепел хранился в урне, размещаемой в специально изготовленной для этого нише.

4. В основе планировки урартских скальных гробниц лежит, по большей части, ряд параллельных и перпендикулярных друг относительно друга прямоугольных помещений, которые обычно опоясывают центральный зал и сообщаются с ним. Ритуальные действия, связанные с жертвоприношениями, производились в центральном, наиболее освещенном зале.

5. Погребальная архитектура Урарту напрямую связана с традициями постройки наземных сооружений. Как заметил в свое время Б. Б. Пиотровский, изучая погребения, можно составить мнение и о деталях наземных сооружений, не дошедших до нас. Так, можно предположить, что эти сооружения могли иметь коробчатое перекрытие.

6. Подсчитав затраченные на строительство известных нам гробниц время и рабочую силу и сравнив их с подобными сооружениями из других регионов, можно прийти к определенным заключениям: в частности, (безусловно, с определенными допущениями) составить мнение об экономическом и политическом могуществе того или иного урартского правителя.

7. Скальные погребения урартов не имеют прототипов на Армянском нагорье, хотя, учитывая естественные условия нагорья и вековые традиции каменной архитектуры, существовавшие здесь, не исключено, что эти погребения могут иметь местные корни.

8. Наиболее близкую аналогию урартским скальным гробницам находим в Ахеменидском Иране.

9. Урартские скальные гробницы, естественно, являются частью создаваемого из века в век культурного наследия населения Армянского нагорья. Следовательно, их изучение делает более понятным происхождение культуры нагорья, а также историю создавших эту культуру этносов.

---

* Ամփոփումները կազմվել են ինստիտուտի կողմից:

MONTE MELKONIAN

URARTIAN ROCK-CUT TOMBS: A DESCRIPTION AND ANALYSIS

SUMMARY

Studyimg the structural features of the Urartian rock-cut tombs discovered on the Armenian Highiand, in the means of the cultural and religious aspects and considering the opmions over this theme, the author comes to the following conclusions.

1. Although not all, but at least the representatives of the Urartian high class took care for their afterlife and huilt magnificent tombs. There existed specific rules to build tombs on the basis of the excepted Urartian burial customs. The builders were aware also to keep the tombs untouched.

2. Before biuldimg the tomb, the place was carefully chosen. The builders took care of the following circumstances. 1) The rock as the ideal medium for permanent monumental works 2) The hewed tombs in rock cliffs reserved the use of agricultural and easily fortified land for the living. 3) And, finally, they considered the owner's wili. So it is as likely as not that most of the king's and his family's tombs were constructed far from the capital.

3. The Urartians buried their deceased in two common burial practices a) inhumation b) cremation. Since inhumation was accepted as a common burial practice, we shall not be suprised at the use of the platforms for sarcophagi. It is hkely that the sidespread iniches were intended to house cremations contained in urns, because the cremation in urns was also an Urartian burial custom.

4. In most cases on the scheme's basis of the Urartian rock-cut tombs lay rectangular rooms on horizontal vertical axis, associated to the main hall, whicb were the largest and best lit rooms.

5. The architecture of the Urartian tombs is directly connected with the tradition of the overground structures and as Boris Piotrovski noted, by studyimg the tombs, we can have an idea about some overground buildmgs in detail. Thus we can suggest, that some of them had vaulted ceilings.

6. Approxinnately, we can estimate the «man day», spent on an available tomb.And there is even the possibility to compare the results with sinnlar structures and come to certain conclusions. This method of approach, as exception, enables to forin an idea about the Urartian kmgs economic and political power.

7. The Urartian rock-cut tombs have no previous examples on the Armenian Highiand though, having in view the local geological traditions, the unique characteristics of the tombs, the various stone working techniques and basio trends in Urartian architecture a search for local origins makes the study of great promise.

8. The earliest similar example of the Urartian rock-cut tomb is known from Achememd Iran.

9. The Urartian rock cut tombs are treated as a part of the monuments biilt during ages on the Armenian Highland. So, the relevant study and information, derived from the analysis of the tombs, may set new light on the origin and history of the people who created tbat culture.



ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

1. ՈՒրարտուի ուրվագիծ քարտեզը (հեղինակ՝ Ռիչարդ ՈՒիստ.
տես *G. Azarpay.* Urartian Art and Artifacts).
2. ՈՒրարտական կինփիրների պատկերներ. ձախակողմյանը՝ ըստ բալավաթյան դարպասների (մ. թ. ա. 9-րդ դ.),
աջակողմյանը՝ ըստ ուրարտական բրոնզե մի գոտու (մ. թ. ա. 8-րդ դ.)
(տես *Б. Б. Пиатровский.* Искусство Урарту, Л., 1962, էջ 29, նկ. 7):
3. Քարտաշի արդպատե մուրճ-հատիչ Բաստամից (տես *W. Kleiss,* նշվ. աշխ., էջ 29, նկ. 4).
4. Մալուի (Սանգար) ժայռափոր դամբարանը (տես նույն տեղում, էջ 42, նկ. 32).
5. Խորխորյան Մեծ քարայրի հատակագիծը և կտրվածքները, ըստ Ա. Վ. Սիսկովի՝ կատարված Պ. Ե. Կնյագնիցկու
չափագրությունների հիման վրա (տես «Ванское царство», էջ 210, նկ. 58):
6. Խորխորյան Փոքր քարայրի հատակագիծը և կտրվածքը, ըստ Ա. Վ. Սիսկովի՝ կատարված
Պ. Ե. Կնյագնիցկու չափագրությունների հիման վրա (տես նույն տեղում, էջ 211, նկ. 59):
7. Նստիթ-քույու քարայրի հատակագիծը և կտրվածքը, ըստ Ա. Վ. Սիվիրովի՝ կատարված
Պ. Ե. Կնյագնիցկու չափագրությունների հիման վրա (տես նույն տեղում, էջ 212, նկ. 60):
8. Վանի ժայռի վերին հրապարակի տակ գտնվող քարայրի հատակագիծը և կտրվածքները,
ըստ Ա. Վ. Սիվիրովի՝ կատարված Պ. Ե. Կնյագնիցկու չափագրությունների հիման վրա
(տես նույն տեղում, էջ 213, նկ. 61):
9. Վանի ժայռի հարավ-արևելյան կողմում գտնվող Մեծ քարայրի հատակագիծը և կտրվածքը,
ըստ Ա. Վ. Սիվիրովի՝ կատարված Պ. Ե. Կնյագնիցկու չափագրությունների հիման վրա
(տես նշվ. աշխ., էջ 215, նկ. 63):
10. Ինչկալա քարայրի հատակագիծը և կտրվածքը, ըստ Ա. Վ. Սիսկովի՝ կատարված
Պ. Ե. Կնյագնիցկու չափագրությունների հիման վրա (տես նույն տեղում, էջ 214, նկ. 62):
11. Վանի ժայռի հյուսիսահայաց քարայրի հատակագիծը և կտրվածքը, ըստ Ա. Վ. Սիվիրովի՝ կատարված Պ. Ե. Կնյագնիցկու
չափագրությունների հիման վրա (տես նշվ. աշխ., էջ 216, նկ. 64):
12. Զինանոցի մոտի քարայրի հատակագիծը և կտրվածքները, ըստ Ա. Վ. Սիվիրովի՝ կատարված Պ. Ե. Կնյագնիցկու
չափագրությունների հիման վրա (տես նշվ. աշխ., էջ 217, նկ. 65):
13. Ալթին-թեփեի 1-ին դամբարանի հատակագիծը և կտրվածքները
(տես «Altintepe II», էջ 11, նկ. 4):
14. Ալթին-թեփեի 2-րդ դամբարանի հատակագիծը (տես նույն տեղում, էջ 15, նկ. 12):
15. Ալթին-թեփեի 3-րդ դամբարանի հատակագիծը (տես նույն տեղում, էջ 16, նկ. 18):
16. Ալիշարի դամբարանը (տես «Ванское царство», էջ 218, նկ. 66):
17. Կայալի-դերեի դամբարանի հատակագիծը և կտրվածքները
(տես *Ch. Barney.*A. First Season of Excavation at the Urartian Citadel of Kayali-dere, նկ. 22):
18. Նախշ ի Ռուսաստան (տես Sir *Bannister Fletcher.* A History of Architecture on
the Comparative Method, London, 1954).
19. Սարգոն 2-րդի Խորսաբադի պալատը (տես ՍԱ):
20. Թելլեբարինի (Կարմիր բլուր) քաղաքի միջնաբերդի հատակագիծը
(տես *Б. Б. Пиатровский.* Искусство Урарту, էջ 21, նկ. 5):
21. Հաթուշա քաղաքի սրբատեղի հատակագիծը (տես *K. Bittel.* Hattusha, The capital
of the Hittites, New York, 1970, նկ. 10):




CASPIAN
SEA
Derbent
Baku
Tiflis
SHIRAK
STEPPES
Kirovabad
KARABAGH
STEPPES
KURA R.
ARAS R.
N. Bayazit
SEVAN
Karmir-Blur
Nakichevan
Tabriz
MT. SAHAND
Miyandoab
Hasanli
Zinjan
Saqqiz
Modern Boundaries
Ancient Sites
Modern Towns
Leninakan
Arin-Berd
Yerevan
Igdir
MT. ARARAT
Maku
Alishar
Toprak-Kale
Van
Van Kayalıgtepe
URMIA
SPILIK
FASO
Mosul
Tigris R.
Kars
Batum
Erzerum
Malazgirt
O. Bayazit
Patnos
Adilcevaz
Muş
Bitlis
Muradiye
Murad R.
Diyarbakir
Erzincan
Altin-Tepe
BLACK
SEA
Trabzon
100 STATUTE MILES

Դր. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4





Նկ. 5



Նկ. 6







Նկ. 8





Նկ. 7



Նկ. 9



Նկ. 10


Ծածկաքարի տեղը
Լուսանցք
Դռան կամարաքար
Լուսանցք
0 1 2 3 4 մ.

Նկ. 12


Աղձամաղքու թրատ տեղը
0 5 10 մ.

Նկ. 11



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15

Նկ. 16



Նկ. 17



Նկ. 18


VI
VII
VIII
XXIV
XV
XX
XXVII
XXX
XXXI
0
50
100 METRES
0
100
200
300 FEET

Նկ. 19



Նկ. 20


HEARTH
HEARTH
HEARTH
TABLETS
HEARTH
HEARTH
COURT
HEARTH
ALLEY
ALLEY
COURT
HEARTH
TABLETS
DRAIN
HEARTH
ALLEY
DRAIN
COURT
HEARTH
HEARTH
COURT
HEARTH
0
10
20
30m

Նկ. 21

Ս. Ա. ԵՍԱՅԱՆ, Լ. Ն. ԲԻՑԱԳՈՎ, Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ, Ա. Գ. ԿԱՆԵՅՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԲԻԱՅՆԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԸ (2)

1984 թվականին Երևանի Արշակունյաց պողոտայի մոտ, Ավտոագրեգատ գործարանի տարածքում շինարարական աշխատանքների ժամանակ բացվեց մի դամբարան, որն այնուհետև պեղվեց ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական ջոկատի կողմից: Պարզվեց, որ դամբարանը բիայնական է և կառուցված է եղել մի հին ու մեծ դամբարանադաշտում: Այստեղ, բացի այդ դամբարանից, բացվեց նաև մեկ վաղ բրոնզեդարյան քարարկղային թաղում, որից մի փոքր հեռու պեղվեց միջին բրոնզեդարյան մեկ այլ դամբարան: Բացի այս, վերոհիշյալ դամբարաններին հարող տարածքում գտնվեց մ. թ. ա. I հազարամյակի սկզբներով թվագրվող խեցեղեն:

Պեղված բիայնական դամբարանը 3,46 մ երկարությամբ, 1,97 մ լայնությամբ և 2,15 մ բարձրությամբ (ներքին չափերով) ուղղանկյունաձև կառույց է, հյուսիս-հարավ կողմնորոշմամբ (ունի 10° շեղում դեպի արևմուտք): Դամբանախցի հատակը շարված է լավ տաշված սև, կարմիր, մուգ շագանակագույն տուֆե սալերով, որոնց տակ հարմարեցված էին գաղտնարանները: Հինգ շարք բարձրությամբ պատերը կառուցված են տուֆե սրբատաշ քարերով: Դամբանախցի հինգ որմնախորշերից երեքը կառուցված են արևմտյան պատի մեջ, հատակից 0,44 մ բարձր (0,50 մ x 0,50 մ չափերով): Նույնանման որմնախորշ կառուցված է հարավային պատի մեջ: Արևելյան որմնախորշն ավելի մեծ է, հատակից 0,44 մ բարձր է: Որմնախորշի վերին մասը կազմված է տուֆե մեկ հեծանից, որն իր վրա է կրում դամբանախցի ծածկի սալերի ծանրության մի մասը: Որմնախորշի երկարությունը 2,06 մ է, բարձրությունը՝ 1,22 մ, խորությունը՝ 1,01 մ:

Դամբարանի պատերի շարվածքի ամենավերջին՝ հինգերորդ շարքը մի փոքր (0,13—0,18 մ) առաջ է ելած՝ խցի գրեթե ամբողջ պարագիծն ընդգրկող քիվի ձևով, որի վրա (դամբարանի հյուսիսային կողմում) նստած են մեծ տուֆե ծածկի հինգ հեծաններ (բարձր.՝ 0,37—0,64 մ, լայն.՝ 0,45 մ), գցված դամբարանի լայնքով՝ արևմուտքից արևելք: Արևելյան որմնախորշն ունի առանձին ծածկ՝ կազմված երկու այլ, միանման քարե հեծաններից, գցված դամբարանի երկայնքով՝ հյուսիսից հարավ: Դամբարանի հարավային կողմի ծածկի չորս սալերը մի կողմից ամուր կցված են հիմնական ծածկի սալերին, մյուս կողմից հենված են քիվի ու հյուսիսային պատի շարվածքին:

Դամբանախցի մուտքը (բարձր.՝ 1,29 մ, լայն.՝ 0,75 մ, խոր.՝ 0,54 մ), որը գտնվում է կառույցի հյուսիսային կողմում, դրսից ամուր փակված է մեծ տուֆե սալաքարով: Դեպի մուտք տանող միջանցքի (դրոմոսի) չափերը և հորինվածքը հնարավոր չէ որոշել, քանի որ այն ընկած է այժմ գործող գործարանի արտադրամասի շենքի սյան տակ (աղ. I—IV):

Դամբարանում գտնվեց հարուստ նյութ: Արևմտյան պատի երեք որմնախորշերում դրված էին մեկական ամբողջական՝ լցված մարդու, կենդանիների և թռչունների մանրացված ոսկորներով, արևելյան մեծ որմնախորշում՝ ցլի գլխի արձանիկներով զարդարված մի մեծ կավանոթ, ինչպես նաև մի թաս, որի հատակի վրա պահպանված էր նապաստակի պատկերով կնքադրոշմ: Դամբարանի մյուս խեցեղեն նյութը առյուծի գլխի ձևով հարդարված ծորակով սափորն է: Մեկ այլ սափոր, ճրագ, մի քանի մեծ ու փոքր թասեր գտնվեցին դամբարանի հյուսիս-արևելյան անկյունում:

Երեք գաղտնարաններից առաջինը հայտնաբերվեց դամբանախցի արևմտյան պատի մոտ գտնվող հատակի սալաքարերի տակ: Այստեղ պահված էին բրոնզե կապարճի բեկորներ, թաս, ագաթե հուլունքներ, գիշերաքարից պատրաստված կշռաքարաձև, գրիֆոնի և կիսալուսնի պատկերներով հարդարված մի կնիք: Երկրորդ գաղտնարանը հայտնաբերվեց դամբարանի արևելյան պատի հատակի սալերի տակ. այստեղից գտնվեցին միայն մի քանի օձագլուխ ապարանջաններ: Երրորդը կառուցված էր արևելյան մեծ որմնախորշի հատակի տակ, որտեղ թաքցված էին երեք տարբեր գոտիների ու ձիասարքի մասեր, օձագլուխ ապարանջաններ, երկաթե սուր, դանակ, դաշույններ, բրոնզե գամեր, մեկ դույլ և այլ իրեր:

Դամբարանում գտնված բարձրորակ գեղարվեստական խեցեղենը իր ձևերով և հարդարանքով բաժանվում է երկու խմբի: Առաջինում ընդգրկվում են հինգ լայնաբերան, կլորավուն, քիչ ձգված իրանով անկանթ սափորներ, որոնք ունեն համեմատաբար բարձր վզիկ և շեշտակիորեն դեպի դուրս կլորացող շուրթ ու լայն հատակ: Այս անոթների իրանները պսակից «անջատված են» ուռուցիկ գոտիով: Սափորներից երեքի ուսերին գայլիկոնված են եռանկյունաձև դասավորված երեքական, իսկ մյուս երկուսի վրա՝ երկուական անցքեր (աղ. V, նկ. 1—5): Նման կամ փոքր-ինչ տարբեր ճյուղանաստիոներներ գտնվել են ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքից, այնպես էլ Արևմտյան Հայաստանի հուշարձաններից:

Ուրարտուում որպես ճյուղանաստիոր սովորաբար օգտագործվում էին կանգուն ձևեր ունեցող կենցաղային խեցանոթները՝ անկանթ, միականթ կամ երկկանթ սափորներ (Երևան, Չրմես (Աղթին-թեփե), Իգդիր,

Օշական), կճուճներ (Նոր Արեշ), կարասներ (Արգիշթիխինիլի, Չրմեսի): Ուշագրավ է, որ կավե դիանոթներից բացի Չրմեսի դամբարաններից մեկում գտնվել են նաև բրոնզե ամբունասափորներ:

Դամբարանում հայտնաբերված գեղարվեստական խեցանոթների երկրորդ խումբը կազմում են երկու կենդանակերպ արձանիկներով հարդարված, բարձր որակով պատրաստված կավանոթները. մեկը մեծ, լայն բերանով, կլորավուն իրանով, անկանթ, առաջին խմբի սավորների նման վզիկով և շեշտված շրթով է, որի մակերեսը հարդարված է երեք զարդագոտիներով: Սափորի ուսին տեղավորված առյուծի արձանիկը հիշեցնում է Կարմիր բլուրից հայտնի քարե տուփի վրայի առյուծի քանդակը: Առյուծի այս արձանիկը ծորակի նշանակություն է ունեցել և խողովակաձև անցումով միացած է անոթի հատակին գտնվող բոլորաձև, իր վրա չորս անցքեր կրող թմբիկի հետ (աղ. VI, նկ. 1—1ա): Տեղական արտադրության նման անոթներ են գտնվել նաև Սևանա լճի ավազանում, Արցախում:

Երկրորդ անոթը մեծ, անկանթ սավոր է, կլորավուն, ուռուցիկ իրանով ու թույլ ընդգծված վզիկով: Ունի լայն, դեպի ներս ճկված ու հորիզոնական դիրքով դրված շուրթ, որի ամբողջ պարագիծը զարդարված է առվակոսով: Ներճկված, անոթի ամբողջ պարագիծն ընդգրկող երկու զույգ գծերով է զարդարված և նրա ուսամասը: Անոթի պսակին, իրարից հավասար հեռավորությամբ, ամրացված են վարպետորեն քանդակված ցլի գլխի երեք արձանիկներ (աղ. VI, նկ. 2): Ճաշակով հարդարված այս պիսի անոթները տարածված էին Վանի թագավորությունում. գտնվել են Կարմիր բլուրի ամրոցի ու բնակավայրի տարածքից, Դվինից, Պատնոսից: Կասկած չկա, որ դրանք ընդօրինակված են Վանի թագավորության մեջ հայտնի համապատասխան բրոնզե անոթներից:

Խեցեղենի մյուս մեծ խումբը կազմում են համեմատաբար հասարակ կավանոթները՝ կլորավուն, քիչ ձգված, լայն ու բարձր վզիկով սավոր (աղ. V, նկ. 6), երկու մեծ (մեկի հատակին կա նապաստակի պատկերով մի դաջվածք) թասեր և կլորացող կողերով, կտրված շրթով և երկու միջնորմով ձիթաճրագ (աղ. VI, նկ. 3—10): Վերջինիս նմանակը հայտնի է Էրեբունիից և թվագրվում է մ. թ. ա. VIII դարով:

Դամբարանում հայտնաբերված իրերի թվում մեծ խումբ են կազմում զենքերը, որոնց մեջ առանձնանում է 0,90 մ երկարություն ունեցող երկաթե սուրը: Գտնվել են նաև երեք այսպես կոչված առաջավորասիական տիպի դաշույններ, որոնք, ի հայտ գալով Հայկական լեռնաշխարհում միջին բրոնզե դարում, հարատևում են մինչև մ. թ. ա. VIII դարը: Հայտնաբերվեց նաև կոտրված սայրով, մի եզրը բութ, հարթ ու կարճ պոչուկով դանակ (աղ. VII, նկ. 2—4, 10), որի նմանները հայտնի են Իգդիրի դամբարաններից: Դամբարանում գտնված՝ բացվածք ունեցող կոթառներով երեք նիզակի ծայրերը տերևաձև են (կտրվածքում՝ ձվաձև) (աղ. VII, նկ. 5—7): Նման, սակայն միջնաջիղ ունեցող գեղարդներ հայտնի են Կարմիր բլուրից, Արգիշթիխինիլիից, Չրմեսից: Երկու նետասլաքները նշաձև են (կտրվածքում՝ ձվաձև), ունեն ուղիղ պոչուկներ: Այս ձևի նետասլաքները լայն տարածում են ունեցել Վանի թագավորությունում մ. թ. ա. VIII դարից սկսած (աղ. VII, նկ. 8, 9):

Կապարճները (երկար.՝ 0,55 մ) (աղ. VIII, նկ. 1—2) դեպի ներքև նեղացող բրոնզե խողովակների ձև ունեն (վերին եզրի տրամագիծը 0,15 մ է, ստորին եզրինը՝ 0,09 մ), որոնց վրա գամված են գոտու համար նախատեսված երկուական օղակներ: Այս կապարճները, ըստ երևույթին, իրենց ներքին եզրին ամրացվող կաշվե պարկաձև մասեր են ունեցել, որոնք չեն պահպանվել: Նման կապարճները բնորոշ չէին Վանի թագավորության համար. այստեղ տարածված էին ավելի մեծ, ուղիղ, չնեղացող եզրերով օրինակները, որոնց բազմաթիվ նմուշներ են հայտնի Կարմիր բլուրից: Դամբարանում գտնված աղեղի մաս կազմող բրոնզե կիսակլոր անցքերով երկու թիթեղները (աղ. VIII, նկ. 3, 4) նույնպես սակավ են հայտնի բիայնական հուշարձաններից և հիշեցնում են Բ. Ա. Կուֆտինի - կողմից Թոնեքում գտնված աղեղի մանրամասները:

Դամբարանի գաղտնարաններում հայտնաբերված իրերի թվում մեծ խումբ են կազմում ձիասարքի մասերը՝ սանձեր, ճակատակալ, զանգակներ, վահանակներ, ճարմանդներ: Գտնված սանձերի երկմաս, եզրերն օղակաձև ավարտվող երկաթե լկամների մի քանի կտորներ են պահպանվել միայն (աղ. VII, նկ. 17): Ձիու ճակատակալը (աղ. VII, նկ. 11) հավասարակող, մի եզրը նեղացող, սեղանաձև բրոնզե թիթեղ է՝ հարդարված երկու հորիզոնական և մեկ ուղղահայաց ուռուցիկ գծերով: Ճակատակալի վրա արված են երկու անցքեր՝ այն ձիու հանդերձանքի մյուս մասերին ամրացնելու համար: Վանի թագավորության տարածքից այժմ հայտնի են բազմաթիվ ճակատակալներ, որոնք ճոխ նախշազարդված են, իսկ մի քանիսն ունեն առասպելական թեմաներով պատկերներ և ուսումնասիրողների կողմից հաճախ դիտվում են որպես Բիայնիլիի կիրառական արվեստի վայելուն նմուշներ:

Բրոնզե երկու զանգակներից առաջինը (աղ. VII, նկ. 14) հարդարված է հինգ հորիզոնական ուռուցիկ գծերով, որոնցից երկրորդի ու չորրորդի միջև առկա են չորս ուղղանկյունաձև անցքեր: Զանգակի գագաթին ամրացված է մի օղակ: Զանգակի մեջ պահպանվել է նաև երկաթե լեզվակը: Մյուս զանգակը (աղ. VII, նկ. 15) առաջինից տարբերվում է իրանի ձևերի ավելի սահուն անցումներով և զարդարանքի բացակայությամբ: Նման զանգակները տարածված են եղել ինչպես Վանի թագավորությունում, այնպես էլ սահմանամերձ հյուսիսային շրջաններում:

Ձիասարքի մաս են կազմել, ըստ երևույթին, նաև բրոնզե կոնաձև, գամաձև գագաթով վահանակները (բարձր.՝ 2,5—4,5 սմ, հիմքի տրամ.՝ 6—8 սմ), որոնք ներսի կողմից ունեն կամրջակ (աղ. IX, նկ. 3—7): Նման վահանակներ հայտնի են Իգդիրից, Կարմիր բլուրից, Ալիշարից և թվագրվում են մ. թ. ա. VIII—VII դարերով: Ձիու հանդերձանքի մասեր են նաև երկու մեծ (տրամ.՝ 6

սմ) և մեկ փոքր (տրամ.՝ 4,2 սմ) ճարմանդները, որոնցից մեծերը շրջանաձև են և ունեն քիչ ուռուցիկ մակերես և կամրջակ, հարդարված են հատիկախառով և ուռուցիկ գծերով (աղ. IX, նկ. 1, 2): Փոքր ճարմանդը ձևով նման է մեծերին, սակայն զարդանախշված չէ (աղ. IX, նկ. 8, 9): Նման ճարմանդները, որոնք հայտնի են ինչպես Հայկական լեռնաշխարհի բիայնական, այնպես էլ «տեղական» հուշարձաններից, բացի ձիասարքի մաս լինելուց, օգտագործվել են նաև որպես զինվորի զրահաշապկի բաղադրամաս:

Դամբարանում դրված, շատ վատ պահպանված կահույքի մասեր են եղել վեց փոքր, բրոնզե կլորավուն գլուխներով գամերը (աղ. XI, նկ. 4—9), որոնց համանմանները հայտնի են Կայալի-դերեից, և գահավորակի՝ ցլի կճղակի ձև ունեցող բրոնզե սնամեջ ոտքերը (աղ. XI, նկ. 17—20):

Երևանի դամբարանում գտնված բրոնզե իրերի մյուս խումբը կազմում են դույլը, թասը և գավաթի կանթերը: Դույլը պատրաստված է բրոնզե բարակ թիթեղից, ունի դեպի վեր լայնացող իրան: Շրթի տակ ամրացված են երկու օղակներ, որոնց միջով անցնում են բրոնզե լարից պատրաստված բռնակի կոր ծայրերը (աղ. X, նկ. 2): Բրոնզից և արծաթից պատրաստված ուրարտական դույլերի հավաքածուն մեծաթիվ է: Ուշագրավ են Շվեյցարիայի և Լեզ Արքս թանգարաններում պահվող այն դույլերը, որոնցից մեկի վրա փորագրված արձանագրությունում հիշատակված են Վանի թագավորությունում մ. թ. ա. IX դարի վերջին քառորդում գահակալած Իշպուինի արքայի և նրա թոռան՝ Ինուշպուայի, իսկ մյուսի վրա՝ միայն Իշպուինիի անունները: Հիշատակված առաջին արձանագրությունը աքադերեն է: Այս արձանագրության տվյալների առաջարկումը Ինուշպուայի մասին հայտնի այլ տեղեկությունների հետ հնարավորություն է ընձեռում ենթադրելու, որ Ինուշպուան կարճ ժամանակով ժառանգել է Ուրարտուի գահը:

Թասը (աղ. X, նկ. 1) ունի կլորավուն, լայնացող իրան, եզրագծված կողեր, դուրս ճկված պսակ և (օղակաձև հատակից ու կողերից բացի) հարդարված է եռաշար ծաղկաթերթիկավոր վարդակներով (աղ. X, նկ. 1): Այս թասն իր նմանակներն ունի ինչպես Կարմիր բլուրի և Գոլովինոյի պեղումների ժամանակ գտնված նյութերում, այնպես էլ Մայնցի թանգարանի բիայնական նյութերի հավաքածուներում, որոնք հայտնաբերվել են Արևմտյան Հայաստանի տարածքից և թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դարերով:

Բրոնզե երկու կանթերը տարբեր անոթների են պատկանել: Առաջինը մեծ է, երկարավուն (աղ. X, նկ. 13): Երկրորդն ավելի փոքր է, կտրվածքում կլոր, կորության վրա ունի ոչ մեծ ելուն (աղ. XI, նկ. 14): Կարելի է ենթադրել, որ այս կանթերը պատկանել են Վանի թագավորությունում լավ հայտնի, երկարավուն իրանով և բարձր վզիկով, հարթ կամ ելուն ունեցող երկկանթանի գավաթներին: Նման երկկանթանի մետաղե ամբողջական անոթներ առայժմ չեն գտնվել: Սակայն դրանց գոյության մասին վկայում է Պերսեպոլսում Քսերքսեսի (մ. թ. ա. 486—464 թթ.) հայտնի բարձրաքանդակի այն հատվածը, որտեղ պատկերված են արքային հարկ բերող հայերը: Վերջիններիս կողմից արքային նվիրաբերվող իրերի թվում պատկերված է թանկարժեք մետաղից պատրաստված, վերը հիշատակված գավաթների ձևերը կրկնող երկկանթանի մի շքեղ անոթ:

Դամբարանում գտնված իրերի թվում մեծ խումբ են կազմում նաև բրոնզից և կիսաթանկարժեք քարերից պատրաստված զարդերը, առանձնապես ուշագրավ է խոյի չորս գլուխների քանդակներով զարդարված բրոնզե շքասեղը (աղ. XI, նկ. 1): Նման շքասեղներ հայտնի են նաև Կարմիր բլուրից, Արմավիրից, Օշականից, Նոր Արեշից, Իգդիրից և այլ հուշարձաններից: Վերոհիշյալ իրերի թվում հետաքրքիր հավաքածու են կազմում ութ օձագլուխ ապարանջանները (աղ. XV), բոլորն էլ խոշոր են և դամբարան են դրվել կոտրելուց, կտրատելուց ու ծռմռելուց հետո: Նման ապարանջաններ հայտնի են պատմական Հայաստանի թե՛ բիայնական (Արմավիր, Կարմիր բլուր, Էրեբունի, Իգդիր, Արծկե, Պատնոս) և թե՛ տեղական (Մուխաննաթ-թափա, Աստղաձոր, Աթարբեկյան, Կամո, Վարդենիս) հուշարձաններից: Գտնվեցին նաև հիանալի հղկված ագատե ուլունքներ երեք սկավառակաձև հուլունք-բաժանարարների հետ (աղ. XVI): Նման ուլունքներ հայտնի են նաև Կարմիր բլուրից և Էրեբունուց:

Դամբարանում գտնված զարդերից են նաև բրոնզե փոքրիկ խողովակի (աղ. VII, նկ. 12, 13) և կախիկի բեկորները (աղ. XI, նկ. 10, 11): Հատուկ ուշադրության են արժանի նաև դամբարանում գտնված երեք գոտիները, որոնցից առաջինը մասնատված է բազմաթիվ բեկորների. գոտին լայն է (19 սմ) և ունեցել է մոտ 120 սմ երկարություն: Այն եզրերին ունի անցքեր, որոնց միջոցով կարվել է կաշվե հենքի վրա: Գոտու արտաքին մակերեսը ամբողջությամբ դրվագված է ինչպես առանձին կանգնած ռազմակառքերի, հեծյալների, ցուլերի, ձիերի և առյուծների պատկերներով, այնպես էլ որսի տեսարաններով. ներկայացված են ռազմակառքի վրա հարձակվող առյուծների և դրանց հետապնդող հեծյալների կերպարներ (աղ. XII):

Մյուս գոտին նույնպես դամբարան է դրվել մասնատված վիճակում: Գոտու վրա պատկերված են առասպելական տարբեր կենդանիներ. սրընթաց վազող թևավոր ցուլեր, առյուծի թաթերով թևավոր ձիեր, թռչունի կտուցով կամ ձկան պոչով ու կանացի դեմքով թևավոր առյուծներ, ձկնապոչ և առյուծի թաթերով թռչուններ: Այստեղ ևս ներկայացված են որսի տեսարաններ. պատկերված են առյուծների ու ցուլերի հետ մարտնչող որսորդներ (հեծյալներ կամ ռազմակառքերում կանգնած մարտիկներ), ինչպես նաև ձիու և ցուլի, ցուլի և առյուծի, ձիու և առյուծի միջև մենամարտի տեսարաններ (աղ. XIII):

Արևմտյան Հայաստանի տարածքից հայտնի, նման հարդարանք ունեցող բիայնական գոտիների մի բավականին մեծ հավաքածու է պահվում Ադանայի գավառական թանգարանում:

Երրորդ գոտին հարդարված է միայն երկրաչափական զարդանախշով: Պահպանվել է հինգ ոչ մեծ բեկորների ձևով, որոնց ընդհանուր երկարությունը 26 սմ է: Գոտու լայնքը 9,5 սմ է (աղ. XIV):

Դամբարանում գտնված մյուս իրը գիշերաքարից պատրաստված կշռաքարաձև, կախիկ ունեցող կնիքն է, որի աշխատող՝ ստորին հարթության վրա պատկերված է մի թռչուն, կտուցի մոտ՝ օձ: Նման տեսարան կա նաև Արգիշթիխինիլիում գտնված բիայնական մի կարասի ուսի վրայի կնքադրոշմին: Ըստ երևույթին, թռչունի և օձի նման մենամարտերի տեսարանները վերարտադրում են ուրարտական առասպելաբանությունից նկարչին հայտնի՝ տիեզերական, նպաստավոր և չար ուժերի հավերժական պայքարի գաղափարը: Այսօրվա դրությամբ հայտնի են բիայնական բազմաթիվ կնիքներ, որոնք պահվում են աշխարհի տարբեր թանգարաններում: Բիայնական կնիքներն իրենց ձևով բաժանվում են չորս տեսակների՝ գլանաձև, կշռաքարաձև, զանգակաձև և կենդանակերպ արձանիկների ձև ունեցող: Կշռաքարաձև կնիքներ (որոնց թվին է դասվում և Երևանի դամբարանի օրինակը) հայտնի են Էրեբունիից, Արգիշթիխինիլիից, Թեյշեբաինիից, Բաստամից և այլ հնավայրերից:

Դամբարանում գտնվել են նաև մեկ բրոնզե ձուլակտոր, անորոշ նշանակության բրոնզե մի իր, երկու բրոնզե եռոտանի պատվանդաններ և վանակատի մի ծղեպ (աղ. XI, նկ. 2, 12, 15):

Դամբարանում գտնված իրերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս դրանք թվագրելու մ. թ. ա. VIII դարով: Թվագրության համար կռվան են ոչ թե մետաղե առարկաները, որոնց նմանակները հայտնի են և ավելի ուշ թվագրվող հուշարձաններից, այլ խեցեղենը: Երևանի դամբարանի իրերի այս հավաքածուն Էրեբունիից և Արգիշթիխինիլիից հայտնի վաղ թվագրվող նյութերի հետ կազմում է Վանի թագավորության մ. թ. ա. VIII դարի նյութական և հոգևոր մշակույթի մասին պատկերացում տվող արժեքների մի ոչ մեծ խումբ:

Այսօր դժվար է ասել, թե որ քաղաքի բնակիչներն են թաղված եղել այս դամբարանում: Բանն այն է, որ դամբարանը գտնվում է Էրեբունուց բավականին հեռու. հիմքեր կան ենթադրելու նաև, որ Էրեբունի քաղաքի դամբարանադաշտը գտնվել է այժմյան Նոր Արեշ թաղամասի տարածքում: Երևանում գտնվող, մեզ հայտնի բիայնական մյուս քաղաքը՝ Թեյշեբաինին, մ. թ. ա. VIII դարում դեռևս հիմնադրված չէր: Հետևաբար, կարելի է ենթադրել մի երրորդ քաղաքի գոյությունը Երևանի տարածքում, մանավանդ որ բիայնական ոչ մեծ հուշարձաններ են հայտնի նաև Երևանի Չարբախ, Նորագավիթ թաղամասերից և Թումանյան փողոցից:

Երևանի դամբարանը իր ձևով և հորինվածքով համեմատաբար քիչ նմանակներ ունի և այս առումով շատ մոտ է կանգնած Չրմեսի դամբարաններին: Բայց այստեղ դիտվող թաղման ծեսերը հայտնի են նաև մի շարք այլ բիայնական հուշարձաններից: Դամբարանների առկայությունն ինքնին վկայում է, որ տվյալ հասարակության մեջ արդեն եղել են պատկերացումներ հոգու և հանդերձյալ աշխարհի մասին, պատկերացումներ, որոնք իրենց արտացոլումն են գտել նաև ուրարտական կրոնական համակարգին վերաբերող գրավոր աղբյուրներում: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս ներկայացնելու, ճիշտ է, շատ ընդհանուր գծերով, ծնունդ—կյանք—մահ—հանդերձյալ աշխարհ անցման մասին ուրարտացիների պատկերացումների դրսևորումը կրոնում, որոնց արտահայտություններից կարևորագույնը թերևս թաղման ծեսն է:

Այս հարցին առաջինն անդրադարձել է Գ. Ա. Ղափանցյանը: Նրա կարծիքով ուրարտական աստվածություններից Ադարուրթան խորհրդանշում էր ծնունդը, Իրմուշինին՝ հիվանդությունը, կյանքը, առողջությունը, իսկ «աստվածը, որը հոգիներ է տեղափոխում»՝ մահը: Միհերի դռան արձանագրության մեջ, որում համակարգված են ուրարտական դիցարանում մ. թ. ա. IX դարի վերջին ընդգրկված բոլոր աստվածությունները, նրանք հիշատակված են հաջորդաբար և կազմում են իմաստաբանական մի շարք:

«Հոգիներ տեղափոխող աստծու» առկայությունն Ուրարտուում ինքնին վկայում է, որ այստեղ գոյություն են ունեցել պատկերացումներ և առասպելներ հոգու, հանդերձյալ աշխարհի, այս և մյուս աշխարհների միջև եղած սահմանի մասին, որը հոգին չէր կարող միայնակ հաղթահարել: Հանդերձյալ աշխարհի սահմանի վրա մարդու հոգին հանդիպում էր թերևս և մեկ այլ աստվածության՝ Շեբիթուին, որը, ինչպես և իր միջագետքյան անվանակցուին՝ Սաբիթու-Սիդուրին, պահպանում էր հանդերձյալ աշխարհի մուտքը:

Հանդերձյալ աշխարհի մասին եղած պատկերացումը Վանի թագավորությունում առնչվում էր ջրի՝ օվկիանոսի կամ ծովի հետ, որի առարկայացված օրինակն էր Վանա լիճը: Ինչպես վկայում են Վանա ծովակի շրջակայքից հայտնի հայկական ավանդությունները, որոնք ծագումնային կապ ունեն բիայնական ավանդությունների հետ, կյանքը հանդերձյալ աշխարհում նման է երկրայինին, հոգին այնտեղ կարիք ունի կերակրի, հագուստի, զենքերի, գործիքների, փոխադրամիջոցների:

Հանդերձյալ աշխարհի տիրակալն էր Խուտուինին՝ դիցաբանի չորրորդ աստվածությունը, մարդու ճակատագիրը տնօրինողը:

Բիայնիլիում, ըստ երևույթին, կար այն պատկերացումը, որ երկրից դեպի հանդերձյալ աշխարհ տանող ճանապարհն անցնում է ժայռերի մեջ եղած բնական կամ արհեստական անձավների, ճեղքվածքների և, հնարավոր է նաև, «դարպասների» միջով: Այդ են վկայում թաղումների այն ձևերը, որոնք կատարված են ժայռերի ճեղքվածքներում և կամ արհեստական անձավներում: Այս առումով առանձնապես ուշագրավ է, որ եթե նույնիսկ թաղումը կատարվում էր գետնի մեջ կառուցված դամբարանախցում, ապա վերջինս հաճախ պատվում էր քարե «դրահով»: Այս հանգամանքը, որը, շատ հնարավոր է, ժայռափոր թաղումների նմանակման արտահայտություններից մեկն էր, ակնհայտ դարձավ նաև Երևանի

դամբարանի պեղումների ընթացքում: Ուշագրավ է, որ Վանի թագավորությունում պատկերացում է հոլել այն մասին, թե աստվածները հաղորդակցվել են երկրային աշխարհի հետ՝ ելնելով ժայռերի միջից: Կարծիք կա, որ նման պատկերացման հետ է կապված այս կամ այն աստծուն (հիմնականում՝ Խալդիին) «դարպասներ» (ժայռի մեջ փորված արհեստական խորշեր) ձոնելու սովորույթը, որը տարածված էր Բիայնիլիում: Այդ հավատալիքը պահպանվում էր Հայաստանում մինչև վերջին ժամանակներս՝ կապված Միհրի «դռան» (բիայնական Խալդիի «դարպասների») պաշտամունքի հետ, «դուռ», որով Վանի ժայռի մեջ է մտել ու աշխարհից առանձնացել փոքր Աները: Ավանդությունը նրա ելքի հետ է կապում գալիք համընդհանուր բարեկեցության գաղափարը:

Չնայած Վանի թագավորությունում հանդերձյալ աշխարհի մասին եղած ընդհանրական պատկերացումների գոյությանը՝ թաղումներն այստեղ ունեին սկզբունքային տարբերություններ, որոնք պայմանավորված էին, թերևս, տերության էթնիկական, հասարակական-տնտեսական և մշակութային անհամասեռությամբ:

Փաստորեն Վանի թագավորության տարածքում առանձնանում է թաղման երեք հիմնական ծես. ա) դիաթաղում, բ) դիակիզում, գ) դիամասնատում, որոնք հայտնի են իրենց բազմաթիվ տարբերակներով:

Դիաթաղման ծեսը բնորոշ է եղել Հայկական լեռնաշխարհի մշակույթի զարգացման բոլոր փուլերի համար: Վանի թագավորությունում այն ունեցել է հետևյալ տարբերակները: 1. Թաղում ձեռակերտ անձավներում. դիակը երբեմն դրված է լինում սարկոֆագի մեջ (Վան, Բոստան-կայա, Կայալի-դերե, Լիճ, Մանազկերտ, Պատնոս, Արծկե և այլն): 2. Մեկ կամ մի քանի բաժանմունքներից կազմված դամբարաններում՝ փորված գետնի մեջ և կառուցված քարից. ունեն դրոմոս, դիակը դրվել է սարկոֆագի մեջ (Զրմես, Ջիվին): 3. Ժայռի ճեղքվածքի մեջ (Իգդիր): 4. Սալարկղային դամբարանում (Արգիշթիխինիլի, Օշական): 5. Մեծ քարարկղային դամբանախցում (Օշական): 6. Հիմնահողային թաղում (Լիճ, Երեան): 7. Կարասային թաղում (Արգիշթիխինիլի):

Դիակիզման ծեսը, Հայկական լեռնաշխարհում հայտնի լինելով միջին բրոնզե դարից, հարատևել է մինչև քրիստոնեության մուտքը Հայաստան: Վանի թագավորությունում հայտնի էին այս ծեսի հետևյալ տարբերակները: 1. Դիանոթը թաղված է ժայռի ճեղքվածքում (Իգդիր): 2. Դիանոթը թաղված է հողի մեջ (Նոր Արեշ, Արգիշթիխինիլի): 3. Դիանոթը դրված է դրոմոս ունեցող մեկ կամ մի քանի բաժանմունքներից կազմված դամբանախցում (Զրմես, Երեանի դամբարան, Լիճ, Արծկե, Պատնոս): 4. Դիանոթը դրված է ձեռակերտ անձավում (Արծկե, Ալիշար): 5. Դիանոթը թաղված է սալարկղային դամբարանում (Լիճ):

Դիամասնատման ծեսը Հայկական լեռնաշխարհում հայտնի է՝ սկսած վաղ բրոնզի դարից, և հարատևել է մինչև վաղ միջնադար: Եթե վաղ թվագրություն ունեցող դամբարաններում այս ծեսը դրսևորվում է կմախքի ոսկորների մի մասի բացակայությամբ կամ տարանջատվածությամբ և ոսկորները չեն տեղավորվել աճյունասափորներում, ապա Վանի թագավորությունում դրանք միշտ դրված են եղել ուսերին անցքեր ունեցող դիանոթներում: Վանի թագավորությունում այս ծեսը հայտնի էր հետևյալ տարբերակներով: 1. Դիանոթը դրված էր քարե դագաղի մեջ: 2. Դիանոթը՝ սալարկղային դամբարանում: 3. Դիանոթը թաղված է հողում (այս դամբարանները հայտնի են առայժմ միայն Արգիշթիխինիլիից): 4. Դիանոթը դրված է գետնի մեջ, քարից խնամքով կառուցված, դրոմոս ունեցող դամբանախցի որմնախորշում (Երեանի դամբարան):

Չի կարելի, սակայն, հարցը ներկայացնել այնպես, թե յուրաքանչյուր տվյալ դամբարանադաշտում կամ նույնիսկ դամբարանում թաղումները պիտի կատարված լինեին հիշատակված ծեսերից միայն մեկով:

Այսպես, Իգդիրի դամբարանադաշտում հայտնաբերվել և ուսումնասիրվել են թաղումներ ինչպես դիակիզման, այնպես էլ դիաթաղման ծեսերով: Արգիշթիխինիլիում հայտնի են թաղումներ՝ կատարված դիաթաղման, դիակիզման, դիամասնատման ծեսերով, Լիճի դամբարանադաշտում՝ դիաթաղման և դիակիզման ծեսերով: Նույն երևույթը դիտվում է նաև Դեղելիի ու Արծկեի դամբարանադաշտերում, իսկ Զրմեսի և Բիայնիլիի Ջիուկունի (Վանա լճի հյուսիսային ափ) երկրում պեղված առանձին դամբարաններում ուսումնասիրվել են թաղումներ՝ կատարված նույն դամբարանում երկու տարբեր՝ դիակիզման և դիաթաղման ծեսերով: Նման պատկեր դիտվում է և Երևանի ուսումնասիրվող դամբարանում, սակայն թաղումներն այստեղ կատարվել են դիակիզման և դիամասնատման ծեսերով: Այս հանգամանքը կարելի է բացատրել Վանի թագավորության մեջ գոյություն ունեցած էթնիկական իրադրությամբ: Ինչպես հայտնի է, Վանի թագավորությունն իր կազմավորման սկզբից ևեթ չի եղել միատարր ո՛չ էթնիկական և ո՛չ էլ մշակութային առումներով: Տերության մեջ ապրում էին տարբեր ժողովուրդներ, որոնք խոսում էին հիմնականում խուռի-ուրարտական (կամ ալարոդյան) և հնդեվրոպական լեզվաընտանիքներին պատկանող լեզուներով: Վերջիններիս թվին էին պատկանում հայերը, հեթիթները, լուվիացիները, իրանցիները և այլն: Սակայն ճիշտ չի լինի ասել, թե այս ժողովուրդներից յուրաքանչյուրն ուներ իր բնակության հստակ ու անփոփոխ տարածքը, քանի որ այն ժամանակ նս գործում էին, մի կողմից, բնական միգրացիայի օրենքները և, մյուս կողմից, այս ուղղությամբ տերության որոշակի քաղաքականությունը: Այս էթնիկական իրադրությունն իր խոր ազդեցությունն է թողել և տերության մշակութային առանձնահատկությունների վրա, մի հանգամանք, որով ինքնին պայմանավորվում է Վանի թագավորության տարածքում գոյատևած «բիայնական մշակույթի» և «տեղական մշակույթների» առանձնացման անհրաժեշտությունը: Աշխատանքում «բիայնական մշակույթ» հասկացության ներքո նկատի է առնված այն

ապրելաձևը, որը բնորոշ էր հիմնականում Վանա լճի շրջակայքում ապրող բնակչությանը, որի արտադրանքը արտահանվում էր նաև տերության կողմից վերակառուցված կամ նոր հիմնադրված վարչական կենտրոնները և կամ արտադրվում էր այնտեղ բիայնական չափանիշներով:

«Տեղական մշակույթ» հասկացության ներքո նկատի է առնվում այն ապրելաձևը, որը քննարկվող ժամանակաշրջանում բնորոշ էր Էթիունիում ապրող հնաբնակների համար: Այստեղի հուշարձաններից հայտնի են տեղական արտադրանքից հստակ տարբերվող բազմաթիվ նյութեր, որոնք ներմուծված են ինչպես բիայնական մշակութային կենտրոններից, այնպես էլ ուրիշ՝ հին արևելյան երկրներից: Ցավոք, փաստագրական նյութի սակավության պատճառով հստակ պատկերացում չունենք պատմական Հայաստանի այլ շրջանների ոչ բիայնական մշակույթների մասին: Սակայն Հայկական լեռնաշխարհին արևմուտքից ու հարավից հարող մի շարք շրջաններում խուռիական ու փռյուգիական հարուստ նյութեր պարունակող հուշարձանների առկայությունը հնարավորություն է տալիս այստեղ ևս ենթադրելու «տեղական» մշակույթների գոյությունը: Միևնույն ժամանակ, ըստ Հայաստանի Հանրապետության տարածքից հայտնի հնագիտական նյութերի (մ. թ. ա. IX—VII դդ.), նկատվում է բիայնական մշակույթի ուժեղ ազդեցություն բնիկների նյութական մշակույթի վրա: Այս երևույթը հստակ է դիտվում կենքերի (ի հայտ են գալիս սրերի, դանակների, դաշույնների ու նետասլաքների որոշ նոր ձևեր) և խեցեղենի (կիրառություն են ընտանում բիայնական մշակույթին բնորոշ կանթեր և շրթեր ունեցող կավանոթներ) վրա: Նույն երևույթն է ի հայտ գալիս և հոգևոր մշակույթի ասպարեզում. «տեղական» աստվածություններն ընդգրկվում են համաուրարտական դիցարանում, իսկ բիայնական աստվածությունների պաշտամունքը տարածվում է ծայրագավառներում:

Այսպիսով, մեկ անգամ ևս շեշտենք ուրարտագիտության մեջ վաղուց հայտնի այն կարծիքը, որ Վանի թագավորությունում շարունակում էր ընթանալ երկրի՝ տարբեր ծագում ունեցող բնակչության՝ խուռիական, բիայնական, ինդեվրոպական (հիմնականում հայկական), միաձուլումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ս. Ա. Եսայան*, Հայաստանի պատմության պետական թանգարանի դրոնգե ապարանջանները, ՀԱԱՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, հ. 8, էջ 83—94:

2. *Մ. Ա. Իսրայելյան*, Երևանի բերդ-քաղաքի պատմություն, Ե., 1971:

3. *Ս. Գ. Հմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990:

4. *Հ. Ա. Մարտիրոսյան, Ռ. Մ. Թորոսյան*, Արգիշթիխինիլիի սարկոֆագը, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, հ. 3, էջ 221—227:

5. *Գ. Բ. Ջահուկյան*, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Ե., 1987:

6. *С. Г. Амаякян*. Культ солнца у земледельческо-скотоводческих общин Закавказья и урартское божество Шивини, «Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа», Е., 1982, с. 141—143.

7. *И. М. Дьяконов*. К вопросу о символе Халди, «Древний Восток», IV, 1983, с. 190—194.

8. *С. А. Есаян*. Каталог археологических предметов музея истории города Еревана, т. II, Е., 1967.

9. *С. А. Есаян*. Скульптура древней Армении, Е., 1986.

10. *С. А. Есаян, М. Н. Погребова*. Скифские памятники Закавказья, М., 1986.

11. *С. А. Есаян, А. А. Калантарян*. Ошакан 1, Е., 1988.

12. *Г. А. Капанцян*. Историко-лингвистические работы, т. II, Е., 1975.

13. *Е. И. Крупнов*. Желматинский клад, М., 1952.

14. *Б. А. Куфтин*. Урартский колумбарий у подошвы Арарата и куро-араксский энеолит, «Вестник гос. музея Грузии», вып. XIII-В, 1944, с. 1—127 и табл. I—XXX.

15. *К. Х. Кушнарева*. Древнейшие памятники Двина, Е. 1977.

16. *А. А. Мартиросян*. Раскопки в Головино, Е., 1954.

17. *А. А. Мартиросян*. Аргиштихинили, Е., 1974.

18. *Г. А. Мелакишвили*. Древневосточные материалы по истории народов Закавказья, 1, Наири—Урарту, Тбилиси, 1954.

19. *Г. А Меликишвили*. Урартские клинообразные надписи, М., 1960.

20. *К. А. Оганесян*. Росписи Эребуни, Е., 1973.

21. *Б. Б. Пиотровский*. Кармир-блур I, Е., 1950; *его же*. Кармир-блур II, Е., 1952; *его же*. Кармир-блур III, Е., 1955.

22 *Б. Б Пиотровский*. Ванское царство, М., 1959.

23. *Б. В. Техов*. Центральный Кавказ в XIV-X вв. до н. э., М., 1977.

24. *Г. А. Тирацян*. Культура древней Армении (VI в. до н. э.—III в. и. э.), Е., 1988.

25. *С. И. Ходжаш, Н. С. Трухтанова, К. Л. Оганесян*. Эребуни, М., 1979.

26. *R. D. Barnett*. Excavations of the British Museum at Toprak-kale. «Iraq», XII, 1952, pp. 1—43.

27. *Ch. A. Burney*. A First season of Excavations at the Urartian Citadel of Kayalidere. «Anatolian Studies». XVI, 1966, pp. 55—111.

28. *A. Erzen*. Çavustepe, I, Ankara, 1978.

29. *S. A. Esayan*. Curtelbleche der älteren Eisenzeit in Armenian. «Beiträge zur Allgemeinen und Vergleichenden Archäologie». Band 6, 1984, S. 97—198..

30. *R. Ghirshman*. Iran. Protoiranier, Meder, Achämeniden. München, 1964.

31. *S. Kroll*. Keramik Urartäischer Festungen in Iran. Berlin, 1976.

32. *B. Ögün*. Die urartäischen Bestattungsbräuche. In: «Studien zur Religion und Kultur Kleinasien» (Festschrift für Friedrich Karl Dörner zum 65. Geburstag am 28. Februar, 1976), zweiter Band, 1978, S. 639—678. Täf. CLI—CLXV, Abb. 1—59.

33. *T. Özgüç*. Altintepe I, Ankara, 1966, Altintepe II, Ankara, 1969.

34. *F. F. Schmidt*. Persepolis, I, Chicago, 1953.

35. *K. Tanabe, A. Hori, T. Hayashi, S. Miyashita, K. Ishida*. Studies in the Urartian bronze objects from japanese collections (1), «Bulletin of the ancient Orient museum», IV, Tokyo, 1982.

36. *O. A. Tasyürek*. The urartian belts in the Adana regional museum, Ankara, 1975.

37. *L. Vanden Berghe, L. de Meyer*. Urartu een vergeten cultuur uit het bergland Armenie, Gent. 1982—1983.

С. А. ЕСАЯН, Л. Н. БИЯГОВ, С. Г. АМАЯКЯН, А. Г. КАНЕЦЯН

БИАЙНСКАЯ ГРОБНИЦА В ЕРЕВАНЕ (2)

РЕЗЮМЕ

Случайно обнаруженная и исследованная в 1984 г. биайнская гробница на территории завода "Автоагрегат" в плане имеет прямоугольную форму (3,46 м х 1,97 м х 2,15 м), сооружена из гладко обтесанных туфовых блоков, которые, однако, плохо обработаны с наружной стороны. В стенах гробницы с внутренней стороны имеются 5 ниш: в западной—три, в южной—одна (0,50 м х 0,50 м), в восточной—одна—самая большая (длина—2,06 м, высота—1,22 м, глубина—1,01 м). Закрытый каменной плитой дверной проем находится в северной стене.

Пол гробницы уложен разноцветными плитами, под которыми обнаружены три тайника. В трех нишах западной стены найдены керамические урны с раздробленными костями человеческого скелета, перемешанными с костями птиц и животных. В большой—восточной—нише обнаружен крупный сосуд, украшенный тремя бычьими головами, и небольшая миска, на дне которой сохранилось клеймо с изображением зайца. В гробнице находились также и урны с кремированным прахом погребенного.

Богатый инвентарь гробницы, характерный для биайнской культуры VIII в. до н. э., состоял из вырезанной из гишера печати, одного обломка обсидиана, агатовых бус, прекрасно оформленной керамики, железных и бронзовых предметов вооружения, богато орнаментированных бронзовых поясов, различной утвари, конской сбруи и украшений.

S. A. YESAYAN, L. N. BIYAGOV, S.G. HMAYAKIAN, A.G. KANETSIAN

THE BIAYNIAN GRAVEYARD IN YEREVAN (2)

SUMMARY

In 1984 within the territory of Yerevan «Auto-agregate» factory a Biaynian tomb was discovered by a happy chance. The tomb's interior with a rectangular plan (3.46 x 1.97 x 2.154 m) was constructed with toof stones hewed into smooth blocks; however, from the outer side blocks had roughly treated surface. In the interior walls of tomb five niches were constructed: three of them—in the western wall, one (0.5 x 0.5 m) in the southern wall and the fifth, the largest (2.06 x 1.22 x 1.01 m)-in the eastern wall. The doorway, on the northern wall, was locked with stone slab.

The floor of the tomb was covered by motley flagstones under which were three hiding-places. Three ceramic urns were found in the niches of the west wall keeping shuttered bones of human skeleton mixed up with bones of birds and animals were found in the niches of the western wall.

In the niche of the eastern wall there were a big vessel decorated with three bull heads and small bowl with the stamp at the bottom representing a hare.

There were also urns in the tomb, with cremated remains of deceased.

The rieh archaeological discovered material is characteristic to the culture of Biaynili of to the VIII century B. C.: seals cut out of gagate, an obsidian fragment, agate beads, finely decorated ceramics, iron and bronze weapons, magnificently ornamented bronze belts, utensils and harness.

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ I. Երևանի դամբարանի հատակագիծը
Աղյուսակ II. Կտրվածք 1—1
Աղյուսակ III. Կտրվածք 2—2
Աղյուսակ IV. Երևանի դամբարանի առաստաղի հատակագիծը
Աղյուսակ V.— VI. Խեցանոթներ Երևանի դամբարանից
Աղյուսակ VII. Զենքեր և ձիասարքի մանրամասներ Երևանի դամբարանից
Աղյուսակ VIII. Կապարճներ և աղեղի բրոնզե մասեր Երևանի դամբարանից
Աղյուսակ IX. Ճարմանդ և կոնաձև իր Երևանի դամբարանից
Աղյուսակ X. Բրոնզե թաս և դույլ Երևանի դամբարանից
Աղյուսակ XI. Կահույքի և գավաթի մասեր, զարդեր Երևանի դամբարանից
Աղյուսակ XII.—XIV. Բրոնզե գոտիներ Երևանի դամբարանից
Աղյուսակ X.V. Բրոնզե ապարանջաններ Երևանի դամբարանից
Աղյուսակ X.VI. Քարե ուլունքներ Երևանի դամբարանից
Աղյուսակ X.VII. Կնիք Երևանի դամբարանից


ԱՌՈՒՄԱԿ I
1
2
2
1
0
20
40
60
80
100
մ



Աղամամբ II



III հոսքաշերտ



Աղյուսակ IV

ԱՂՅՈՒՍԱԿ V



ԱՂՅՈՒՍԱԿ VI



ԱՂՅՈՒՍԱԿ VII



ԱՂՅՈՒՍԱԿ VIII



ԱՂՅՈՒՍԱԿ IX



ԱՂՅՈՒՍԱԿ X



1



2

0 2

ԱՂՅՈՒՍԱԿ XI





ԱԳՈՒՄԱԿ XII



ԱՌԱՔՈՒՄԸ XIII



Գ 1

ԱՂՅԱՆՈՎ XIV

ԱՂՅՈՒՍԱԿ XV



ԱՂՅՈՒՍԱԿ XVI

ԱՂՅՈՒՍԱԿ XVII



Ռ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Պ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ Մ. Թ. Ա. 8–6-ՐԴ ԴԴ. ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՏԵՔՍՏՈՒՄ

Վերջին տարիներին, Հայաստանի հանրապետության տարածքում կատարված պեղումների շնորհիվ, Վանի թագավորության պատմության ու մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը համալրվեց հնամարդաբանական տվյալներով: Ներկայումս նյութի մշակվածության աստիճանն ու ստացված արդյունքները[1] հնարավորություն են ընձեռում այն դիտարկելու ուրարտագիտության հիմնախնդիրների արդիական ընկալումների և հարցադրումների շրջանակում: Մեթոդաբանության և ուսումնասիրությունների հեռանկարի առումներով հատկապես կարևորվում են հետևյալ պարագաները:

ա) Ուրարտական մշակույթի ձևավորման ու զարգացման, բիայնական (վանտոսպյան) «տեղական» մշակույթների փոխհարաբերության խնդիրները լուրջ քննարկման առարկա են[2]: Լեզվաբանության, առասպելաբանության, հնագիտության տվյալներն ունենալով՝ մասնավորապես շեշտվում է այն հանգամանքը, որ «Վանի թագավորությունը, իր կազմավորման սկզբից ետք, չի եղել միատարր ո՛չ էթնիկական և ո՛չ էլ մշակութային առումներով: Տերության մեջ ապրում էին տարբեր ժողովուրդներ... Սակայն ճիշտ չի լինի ասել, թե այս ժողովուրդներից յուրաքանչյուրն ուներ իր բնակության հստակ ու անփոփոխ տարածքը, քանի որ այն ժամանակ ևս գործում էին, մի կողմից, բնական միգրացիայի օրենքները և, մյուս կողմից, այս ուղղությամբ տերության որոշակի քաղաքականությունը»[3]: Կոնկրետ հուշարձաններից հայտնաբերված հնամարդաբանական նյութերի համեմատական վերլուծությունը հատուկ կարևորություն ունի նման խնդիրների լուսաբանման համար:

բ) Հնամարդաբանական վերլուծությունների տվյալները հստակ ժամանակագրվող պատմահնագիտական կոնտեքստով մեկնելու հնարավորությունը (սեպագիր արձանագրություններից հայտնի են մարդկանց հոծ խմբերի տեղահանության և վերաբնակեցման հանգամանքները, մարդաբանական նյութը պեղված է տարբեր հնագիտական մշակույթներ փաստող հուշարձաններից) թույլ է տալիս հաստատագրել առադրումներով առանձնացվող «ինդիկատոր» հատկանիշների տաքսոնոմիական արժեքը:

Այս նկատառումներից ելնելով՝ անդրադառնում ենք ուրարտական և նախաուրարտական դամբանային հուշարձաններից հայտնաբերված գանգաբանական նյութերի համեմատական վերլուծությանը: Ուրարտական դարաշրջանի մեր տրամադրության տակ գտնվող ոսկրաբանական գտածոները հայտնաբերվել են չորս խմբային թաղումներից (Արգիշթիխինիլի, Գեղհովիտ, Նորատուս, Արտաշավան): Հասկանալի է, որ սույն հավաքածուն չի արտացոլում խնդրո առարկա պատմական դարաշրջանի բնակչության ձևակազմական առանձնահատկությունների ամբողջական նկարագիրը՝ ոչ միայն դիտարկումների սակավության, այլ նաև գտածոների տարածական անհավասարաչափ տեղաբաշխման, թաղման ձևերի առանձնահատկությունների բերումով: Խմբային թաղումներից հայտնաբերված հնամարդաբանական նյութերը հատուկ մոտեցում են պահանջում, քանի որ բացառված չէ վիրջիններիս առավել սերտ կապը ներխմբային մակարդակում այն պարզ պատճառով, որ թաղվածները կարող են յինել մեկ ընտանիքի կամ գերդաստանի անդամներ: Նման պարագայում մարդաբանական պատկերը չի կարող ամփոփել գանգաբանական հատկանիշների փոփոխականության այն ողջ բազմազանությունը, որը հատուկ է տվյալ հանրությանը (պոպուլյացիային):

Գտածոների անհատական և միջինացված ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն տվեց նյութերը խմբավորելու ըստ դամբանային համալիրների: Միևնույն ժամանակ բացահայտվեց հավաքածուի համասեռությունը՝, որը թույլ է տալիս սույն գանգաբանական հավաքածուն դիտել որպես մեկ ամբողջական ընտրություն՝ ուրարտական դարաշրջանի մարդաբանական տիպի համեմատական վերլուծության համար: Հարկ է նշել, որ այս հավաքածուն պատմահնագիտական բովանդակությամբ տարբերվում է տարածաշրջանից մինչ օրս հայտնի մյուս գանգաբանական ընտրություններից: Մեր տրամադրության տակ գտնվող նախկինում հրատարակված նյութերը, որոնք անհրաժեշտ են համեմատության համար, ծագում են կա՛մ առանձին դամբանադաշտերից (Արթիկ, Ցամաքաբերդ, Հոռոմ), կա՛մ էլ խմբային թաղումներից (Ակունք, Նորատուս)[5]: Թվարկված հուշարձաններից հայտնաբերված գտածոներն արտացոլում են տվյալ դամբանադաշտում թաղված մարդկանց մեկ կոնկրետ համայնքի ձևաբանական տիպը: Ի տարբերություն սրանց,

երախճանով և մի ծայրը գլանաձև, մյուսը ճանկավոր վերջույթներ ունեցող բրոնզե աղեղնաձև լկամներով սանձ է, որի լկամները դիմային մասում եռանկյունաձև միջանցիկ կտրվածքներ ունեն (աղ. 2, նկ. 1): Որքան մեզ հայտնի է, նման ճանկավոր սանձերը մինչև օրս վկայված չեն վանտոսպյան հուշարձաններում և երկմետաղյա ձիասանձերի նոր, ուշագրավ օրինակ են հանդիսանում: Միակ մոտիկ զուգահեռը պատահական մի գտածո է Արևմտյան Հայաստանից, որ ներկայումս պահվում է Մայնցի թանգարանում[6]: Երկրորդ ձիասանձը պահպանվել է միայն կիսով չափ: Այն օղակաձև վերջույթներ ունեցող երկաթե երկմաս երախճանով և մի ծայրը գլանաձև, իսկ մյուսը սուր վերջավորություն ունեցող բրոնզե աղեղնաձև լկամով սանձ է և լկամի վրա, երախճանին հագնող կենտրոնական անցքից վեր ու վար, փոկերի ամրացման համար կիսակլոր երկու մերակներ ունի (աղ. 2, նկ. 1): Նման բրոնզե և երկմետաղյա սանձերը լավ հայտնի են Հայկական լեռնաշխարհի (Կարմիր բլուր, Լոռի բերդ, Դոլանլար, Վանաձոր, Բջնի, Շիրակավան, Մակարաշեն) վանտոսպյան հուշարձաններից, երբեմն զարդարված են Վանի թագավորության արքաների սեպագիր անուններով և վերաբերում են մ. թ. ա. 8—7-րդ դարերին[7]: Ձիասանձի երրորդ օրինակը ներկայացված է միայն լկամներից մեկով (աղ. 2, նկ. 3): Այն վանտոսպյան դեկորատիվ արվեստի մի ուշագրավ նմուշ է: Վերջինիս կենտրոնական ուղղանկյուն տախտակաձև մասը դիմային կողմից օժտված է երկու ուղղանկյուն միջանցիկ կտրվածքներով, որոնց միջև ընկած տարածության կենտրոնում երախճանին հագցնելու համար արված շրջանաձև անցքն է: Բարակ կողային մասը զարդարված է համաչափ վեցանկյուն փորագիր գծապատկերով: Լկամի ծայրերն ավարտվում են կենդանակերպ արձանիկներով: Վերինը կլորավուն խնձորակի վրա ամրացված ուղղանկյուն պատվանդանին թառած գիշանգղ է՝ մեջքին ծալած փորագրազարդ թևերով, կեռ կտուցով և գլխին արված ոլորուն փետրազարդով: Լկամի ստորին ծայրին թևավոր ձիու գլուխ է՝ ընդգծված աչքերով և ճակատին համաչափ թափված մազափնջով: Կենդանակերպ վերջույթներ ունեցող լկամներով սանձերը, թեև ոչ հաճախ, այնուամենայնիվ հանդիպում են վանտոսպյան հուշարձաններում: Նման ուշագրավ օրինակ հայտնաբերվել է Ճմինի (Ալթին-թեփե) դամբարաններից մեկում, զարդարված է ձիու արձանիկներով և վերաբերում է մ. թ. ա. 8—7-րդ դարերին[8]:

Ձիու հանդերձանքի մաս է կազմում նաև կիսագնդաձև միջուկ և հարթ եզրեր ունեցող, մոտ 7 սմ տրամագծով բրոնզե շրջանաձև ճարմանդը, որ ներսից օժտված է երկաթե կամբջաձև մերակով (աղ. 1, նկ. 5): Նրա զուգահեռներից մեկը հայտնի է Երևանի Ավտոագրեգատ գործարանի բակում բացված վանտոսպյան դամբարանից, իսկ մյուսները, որ դարձյալ հայտնաբերվել են ձիու հանդերձանքի այլ մասերի հետ, պատահական գտածոներ են և պահվում են Երուսաղեմի թանգարանում[9]:

Գեղհովտի վիմափոր դամբարանի սպառազինության հետ առնչվող գտածոների մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում մարտակառքի տարբեր մասերը: Դրանց մեջ հատկապես առանձնանում են Հայաստանի վանտոսպյան հուշարձաններում առաջին անգամ հանդիպող մարտակառքի անվի կապ-երեսպատումները (աղ. 3, նկ. 3): Սրանք մոտ 0,2 սմ հաստությամբ բրոնզե թիթեղից պատրաստված, եզրերում 7,5 սմ, իսկ միջնամասում 3,5 սմ լայնք ունեցող և մոտ 25 սմ երկարությամբ ժապավենաձև հարմարանքներ են, որոնք, դատելով Ադանայում պահվող բրոնզե գոտիների, Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանի Արգիշթի արքայի անունը կրող դրվագազարդ թիթեղի և Թիլ-Բարսիբի ասուրական պալատի որմնանկարների վրա պահպանված պատկերներից, անուրի նման երկուական կամ չորսական հատ ամրացվել են մարտակառքի յուրաքանչյուր անվի վրա, վերջինիս փայտե դողը թաթանվի ճաղերն իրար կապող շրջանակին միացնելու համար[10]: Այդ նպատակով թիթեղյա հարմարանքների եզրերին բացված մեծ, իսկ միջնամասում արված շատ ավելի փոքր անցքերով վերջիններս գամվել են փայտե դողի կողային մակերեսին: Ըստ որում մեծ անցքերի համար նախատեսված գամերը, անցնելով փայտե դողի ողջ հաստությունը, դուրս են եկել հակադարձ կողմից և, կրկին մտնելով անուրաձև ծալված բրոնզե կապ-հարմարանքի մյուս եզրին բացված անցքերի մեջ, ծռվել են: Այդ են վկայում պատահաբար հայտնաբերված և Երուսաղեմի թանգարանում պահվող անուրաձև չորս կապ-հարմարանքները, որոնց վրա պահպանվել են նաև մեծ գամերը[11]: Բրոնզե կապ-հարմարանքների վրա պահպանված ծալվածքները թույլ են տալիս մոտավոր ճշտությամբ պարզել գեղհովիտյան մարտակառքի թափանվի ճաղերն իրար կապող շրջանակի լայնքը (մոտ 6 սմ), ինչպես նաև փայտե դողի հաստությունը (մոտ 10 սմ): Ուշագրավ է, որ, նման կարևոր դեր կատարելուց զատ, կապ-հարմարանքները ունեցել են նաև դեկորատիվ նշանակություն, որի լավագույն վկայությունը գեղհովիտյան օրինակներից մեկի եզրին հազիվ նշմարվող եռաշար զիգզագների և ինչոր կենդանակերպ պատկերների (հավանաբար այծ կամ ցուլ) ստորին վերջույթների դրվագման հետքերն են: Մարտակառքի հետ առնչվում են նաև երկաթե ձողի ծայրին ամրացված ձիու բրոնզե կիսարձանը և բրոնզե զանգվածեղ ձողից պատրաստված փականաձև հարմարանքը (աղ. 3, նկ. 1, 2): Առաջինն ըստ ամենայնի որպես զինանշան տեղադրվել է ձիերը մարտակառքին կապող առեղի գլխամասում, իսկ երկրորդն առեղը կցել է մարտակառքին: Ձիու նման կիսարձաններ հանդիպում են նաև Կարմիր բլուրի և Ճմինի (Ալթին-թեփե) պեղումներից և, ինչպես ենթադրում են ուսումնասիրողները, դարձյալ զարդարել են ձիու առեղի կամ քարշակի գլխամասը[12]: Ինչ վերաբերում է փականաձև հարմարանքին, ապա նրա զուգահեռները հայտնի են Լոռի բերդի հ. 2 դամբարանի և Նյու Յորքում պահվող մասնավոր հավաքածուի նյութերում և նույնպես հայտնաբերվել են ձիու հանդերձանքի և մարտակառքի մասեր հանդիսացող իրերի հետ[13]:

Ըստ ամենայնի մարտակառքի առեղին են ամրացվել նաև վիմափոր դամբարանից հայտնաբերված ուղ-

ղանկյուն հիմքով, սնամեջ, զանգվածեղ, միաձույլ, կեռ (եղջյուրաձև) առարկաները, որոնց դեպի ցած թեքվող վերնամասերը հիմքի համեմատ ավելի բարակ են ու լայն (աղ. 4, նկ. 1, 3): Դատելով ասուրական բարձրաքանդակների ե որմնանկարների, վանտոսպյան դեկորատիվ թիթեղների, լանջապանակների, սաղավարտների, գոտիների ե Վանի քարակոթողի վրա պահպանված պատկերներից՝ նման առարկաները հիմնականում ամրացվել են մարտակառքի առեղի միջնամասում կամ լծի ծայրերին ե բաժանարարի դեր են կատարել զույգ ձիերից դեպի կառամարտիկը եկող երկու զույգ սանձափոկերի համար[14]: Նման երկու կեռ (եղջյուրաձև) առարկաներ ներկայումս պահվում են Երուսաղեմի թանգարանում, ի տարբերություն Գեղիովտի օրինակների, դրանցից յուրաքանչյուրը պատրաստված է բրոնզե երկու առանձին թիթեղներից ե դիմային մասում իրար հաջորդող հորիզոնական դասավորված ծաղկաշղթաների փորագիր գոտիներ է կրում[15]: Համանաբար մարտակառքի մասերից է նաե զանգվածեղ գլխով երկաթե գամը (աղ. 11, նկ. 5): Բերված բոլոր զուգահեռները թույլ են տալիս ենթադրել, որ քննարկվող երկանիվ մարտակառքը նախատեսված է եղել մեկ զույգ ձիերի լծման համար ե իր արտաքին տեսքով կրկնել է վանտոսպյան որմնանկարներից, փորագիր ե դրվագված այլ պատկերներից հայտնի մարտակառքի ձևերը (աղ. 5, նկ. 1—5):

Գեղիովտի դամբարանի գտածոների հաջորդ խումբը կազմում են վանտոսպյան կահույքի բրոնզե մասերը: Դրանց մեջ են ցլի կճղակի տեսքով ավարտվող բրոնզե միաձույլ, սնամեջ 7 առարկաներ, որոնք, ինչպես երեում է ասուրական ե վանտոսպյան բարձրաքանդակների, կնիքների, գոտիների, դեկորատիվ թիթեղների ե այլ հուշարձանների վրա արված փորագրություններից ու դրվագումներից, հագցվել են փայտե կահույքի (սեղան, աթոռ, պատգարակ, բազմոց, գահավորակ, եռոտանի, աշտանակ ե այլն) ոտքերին, ամրություն ե ուրույն տեսք հաղորդելով վերջիններիս: Ուշագրավ է, որ պահպանված 7 ոտքերից 3-ը հատույթում շրջանաձև են, իսկ 4-ը՝ ուղղանկյունաձև (աղ. 6): Հաշվի առնելով վերը թվարկված դեկորատիվ արվեստի հուշարձանների ընձեռած տվյալները, ինչպես նաև նկատի ունենալով Բ. Հրուդայի, Թ. Օզգյուչի, Ե. Ակուրգալի, Լ. Վանդեն Բերգեի, Լ. դե Մեյերի և Ռ. Մերհավի կողմից վանտոսպյան կահույքի վերականգնման ու հավաքման փորձերը (աղ. 9, նկ. 1—3, 7, 9), կարելի է ենթադրել, որ վերնամասի շրջանաձև հատույթով բրոնզե 3 կճղակավոր երեսպատումները հագցվել են եռոտանու (պատվանդան կամ սեղան) ստորին վերջույթներին: Նման տեսք ունեցող պատվանդաններ ու սեղաններ հանդիպում են Տոկիոյի Հին Արևելքի թանգարանում պահվող վանտոսպյան գոտու և Սոթբիի աճուրդի հատկանշական ցուցակում հրատարակված բրոնզե շրջանաձև առարկայի (հավանաբար հայելի) վրա փորագրված տեսարաններում, ինչպես նաև Ճմինի (Ալթին-թեփե) և Արծկեի (Ադիլջևազ) դամբարաններից պեղած նյութերում[16]: Ինչ վերաբերում է վերնամասում ուղղանկյունաձև հատույթով, սնամեջ, կճղակավոր կենդանու ոտքի ձև ունեցող երեսպատումներին, ապա վանտոսպյան և ասուրական բարձրաքանդակներում ու դեկորատիվ արվեստի գործերում հանդիպող տեսարանների համաձայն դրանք հիմնականում երեսպատել են աթոռների, բազմոցների, ոտնակների, գահավորակների ու սեղանների ոտքերի ստորին մասերը: Ըստ որում դրանք օգտագործվել են ինչպես առանձին, այնպես էլ ուղղանկյունաձև, կիսագլանաձև, կոճաձև և հատած կոնի տեսք ունեցող սնամեջ հարմարանքների հետ համադրությամբ: Նման առարկաներ ի հայտ են եկել Թոփրակ-կալեի, Թեյշեբաինիի (Կարմիր բլուր), Ճմինի (Ալթին-թեփե), Կայալի-դերեի և Երևանի (Նորագավիթ ու Խարբերդ արվարձաններ) հնագիտական համալիրներից, ինչպես նաև պատահաբար հայտնաբերվել են Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից[17]: Ուղղանկյունաձև, կիսագլանաձև, կոճաձև և հատած կոնի ձևով սնամեջ բրոնզե առարկաներ հայտնաբերվել են նաև Գեղիովտի վիմափոր դամբարանում (աղ. 4, նկ. 2, աղ. 7, նկ. 1—3): Գահավորակների, պատվանդանի և աշտանակի մասեր են նաև Գեղիովտի դամբարանից հայտնաբերված, գլանաձև կամ քառանկյունաձև իրանով, հորիզոնական ծալված ուղղանկյունաձև վերնամասով և վերջինիս եզրերին բացված չորս անցքերի մեջ հագցված գամերով բրոնզե առարկաները (աղ. 8, նկ. 1): Դրանք սնամեջ են, մեկը հագցված է բրոնզե խողովակի, իսկ վերջինը՝ երկաթե ձողի վրա: Ըստ այդմ էլ կարելի է ենթադրել, որ առաջին չորսը (երկուսը հատույթում քառանկյունի են, երկուսը՝ շրջանաձև) օգտագործվել են կլոր և քառանկյունաձև ոտքեր ունեցող երկու տարբեր գահավորակների նստելատեղերի տակ, ոտքերի վերնամասում ամրացնելու համար, բրոնզե ձողի վրա ամրացված օրինակը նույն դամբարանից հայտնաբերված բրոնզե ձողի հետ միասին պատվանդանի մաս է կազմել, իսկ երկաթե զանգվածեղ ձողին հագցվածը, ամենայն հավանականությամբ, երկաթե աշտանակի վերնամասն է պահել:

Գեղիովտի վիմափոր դամբարանում տեղադրված գահավորակների արտաքին ձևավորման մանրամասեր են եղել նաև բրոնզե թերթիկավոր վարդակներն ու ռելիեֆ պարուրաձև զույգ նախշեր կրող ուղղանկյուն, սնամեջ հարմարանքները (աղ. 8, նկ. 2, 3): Դրանցից առաջինները զբաղեցրել են գահավորակների փայտե ոտքերին հագցված կոճաձև ու հատած կոնի տեսք ունեցող երեսպատումների միջև ընկած տարածությունը կամ զարդարել են ոտքի և նստելատեղի միացման հանգույցը, իսկ երկրորդները տեղադրվել են բազմոցների և գահավորակների հանդիպակաց ոտքերի միջնամասերն իրար կապող փայտե հորիզոնական շրջակների կենտրոնում: Արտաքին հարդարանքի նման մասեր պեղվել են նաև Թեյշեբաինիի (Կարմիր բլուր), Ճմինի (Ալթին-թեփե) և Կայալի-դերեի դամբարաններում, իսկ պատահաբար հայտնաբերված օրինակները պահվում են Երուսաղեմի թանգարանում[18]:

Հնարավոր է, որ բազմոցի կամ գահավորակի մաս է

կազմել նաև գլանաձև, սնամեջ իրանով, շեփորաձև գլխով և վերևից հարթ թիթեղով փակված առարկան (աղ. 4, նկ. 2): Նրա զուգահեռները վանտոսպյան հուշարձաններից մեկ հայտնի չեն: Բացառված չէ, որ նման հարմարանքները ծառայել են բազմոցների և գահավորակների թիկնակների ուղղահայաց հիմնաձողերի վերին եզրերը կամ արմնկակալների գլխամասերը զարդարելուն: Նման ենթադրության համար հիմք են տալիս Վանից հայտնաբերված արծաթե կրծքազարդերի և Նյու Յորքի Մետրոպոլիտեն թանգարանում պահվող վանտոսպյան արծաթե (ոսկեզօծ) մեդալիոնի վրա արված պատկերները[19]: Բերված բոլոր զուգահեռները վկայում են, որ վիմափոր դամբարանում տեղադրված կահույքի նմուշներն ընդհանուր առմամբ կրկնել են վանտոսպյան և ասուրական բարձրաքանդակների և դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշների վրա արված փորագրություններից հայտնի կահույքի դասական օրինակների ձևերը (աղ. 9, նկ. 1—9, աղ. 10, նկ. 1—9):

Գեղհովտից հայտնաբերված իրերի երրորդ խումբը սպասքն է (աղ. 4, նկ. 3, աղ. 11, նկ. 3, 4): Այն կազմված է հարթ հատակով, փքված իրանով, կարճ վզով, շեփորաձև բացվող շուրթով, մուգ դարչնագույն, մի կանթանի, ձեռածեփ, ամբողջական գավից, կանթի հիմքի պահպանված մասի վրա փորված տարողության շրջանաձև նշաններով գորշ-դարչնագույն անոթի բեկորից և շուրթին վարպետի նշանի հետքեր ունեցող բրոնզե սափորի ծռմռված վերնամասից: Վերջինիս նշանը ներկայացնում է պատվանդան հիշեցնող երկու պատկերներ, որոնց վերնամասում փորագրված է գծերով լեցուն ձվաձև շրջանակ: Կավանոթներն իրենց ձևով, պատրաստման եղանակով և արտաքին հարդարմամբ բնորոշ են Վանի բրուտագործության միջին փուլի օրինակներին և կարող են թվագրվել մ. թ. ա. 8-րդ դարի վերջ—7-րդ դարով:

Նույն ժամանակաշրջանին են վերաբերում նաև Գեղհովտի դամբարանից հայտնաբերված նյութերի վերջին խումբը կազմող պերճանքի առարկաները (աղ. 11, նկ. 1, 2): Դրանք ներկայացված են բրոնզե բարակ լարից պատրաստված, ծայրերն իրար ընդհուպ մոտեցող երկու ապարանջաններով (մեկը թերի է), շագանակագույն, դեղնադարչնավուն և մուգ կանաչ ապակուց պատրաստված գլանաձև, գնդաձև և անվաձև ուլունքահատիկներով և խորադիր շրջանագծերով զարդարված «դոմինո» տիպի ոսկրե զարդարանքներով (աղ. 11, նկ. 2):

Անհրաժեշտ է ավելացնել մի տվյալ ևս: Հուշարձանը պատահաբար քանդած շինարարների և գյուղի բնակիչների հաղորդումների համաձայն, դամբարանի ավերման պահին, հնագիտական նյութերի հետ միասին ի հայտ են եկել նաև մեծ քանակությամբ ոսկորներ և հատուն տարիքի մարդկանց չորս գանգ: Տեղանքի ուսումնասիրության ժամանակ ավերված դամբարանի տեղում հնարավոր եղավ հավաքել մանկահասակ երեխաների գանգերի մասեր ևս: Բերված բոլոր տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ դամբարանը պատկանել է տվյալ հասարակության սոցիալական սանդղակի վերին աստիճանին կանգնած անհատներից մեկին, որի թաղման արարողության ժամանակ, երկանիվ մարտակառքի, հարուստ սպառազինության, կահույքի ու սպասքի հետ միասին վիմափոր դամբարանխուց են իջեցվել թերևս տիրոջը հանդերձյալ աշխարհ ուղեկցող սպասավորների ու ծառաների դիակներ:

Ինչ վերաբերում է քննարկվող հուշարձանի թվագրմանը, ապա, նկատի ունենալով Սևանի ավազանում Վանի արքաների թողած սեպագիր արձանագրությունների տեղեկատվությունը, նույն տարածքից (Կամո, Նորատուս, Սարուխան, Արծվաքար, Կարմիրգյուղ, Զորագյուղ, Ալ բերդ, Ներքին Գետաշեն, Կարճաղբյուր և այլն) հայտնաբերված վանտոսպյան նյութերի բազմազան հավաքածուն, Գեղհովտի վիմափոր դամբարանի ժամանակագրական վերին ու ստորին սահմանները և հատկապես նույն համալիրում «ակինակ» տիպի դաշույնի առկայությունը, կարելի է հիմնավորել, որ քննարկվող հուշարձանի կառուցման առավել հավանական ժամանակահատվածը մ. թ. ա. 8-րդ դարի վերջն է կամ 7-րդ դարի առաջին կեսը:

Վիմտիոր հուշարձանի և նրանից ոչ հեռու գտնվող Ալ բերդ բլրի գագաթին պահպանված ամրոցի տարածքում հետագայում կատարվելիք հետազոտություններն ու պեղումները կարող են ավելի նեղացնել և ճշգրտել առաջարկվող թվագրման սահմանները և, բացառված չէ նաև, հնարավորություն տալ այն կապելու Վանի թագավորության որոշակի տիրակալի գործունեությանն առնչվող իրադարձությունների հետ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Б. А Куфтин*. Урартский колумбарий у подошвы Арарата и куро-араксский энеолит, ВГМГ, вып. XIII-В, Тб., 1944, էջ 69–71: *Б. Б. Пиотровский*. История и культура Урарту, Е., 1944, 258–270. *Б. Б. Пиотровский*. Ванское царство, М., 1959, 208–219. *Թ. Օգուզ*, Հնադարյան Արարատը, «Գարուն», 1968, N 8, էջ 19: *А. А. Мартиросян*. Аргиштихинили, Е., 1974, էջ 56: *B. Ögün*. Die urartäischen Bestattungs Bräuche, SRKK, Leiden, 1978, աղ. 645: *T. Forbes*. Urartian Architecture, BAR, International Series 170, Oxford, 1983, նկ. 58: *Ս. Գ. Հմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 79: *С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян, А. Г. Канецян*. Бинайнская гробница в Ереване, Е., 1991, էջ 20–21: *B. Andre-Salvini, M. Salvini*. Gli annali di Argisti I–Note e collazioni, SMEA, Fascicolo XXX, Roma, 1992, աղ. 1: *Ս. Ս. Եսայան, Լ. Վ. Արզյան*, Վանի ավազանի բիայնական ամրոցները, ՊԲՀ, հ. 1, 1995, էջ 211:

2. *Б. Б. Пиотровский*. Город бога Тейшебы, СА, N 2, М., 1959, էջ 175, աղ. 6, նկ.1: *Г. Ф. Гобеджишвили*. Археологические раскопки в Советской Грузии, Тб., 1952 (на груз. языке), աղ. 40: *А. Н. Калантадзе*. Археологические памятники Сухумской горы, Сухуми, 1954, էջ 78, աղ. VIII, նկ. 19: *М. М. Трапш*. Труды, т. 2, Сухуми, 1969, էջ 26, աղ. II, նկ. 12: *А. А. Мартиросян*. Аргиштихинили, Е., 1974, էջ 172: *М. В. Барамидзе*. Мерхеульский могильник, Тб., 1977, աղ. VIII, նկ. 8: *Б. В. Техов*. Скифы и Центральный Кавказ в VII–VI вв. до н. э., М., 1980, էջ 57–59: *Ս. Ն. Պոգրեբովա, Ս. Ս. Եսայան*. Անդրկովկասում հայտնաբերված սկյութական թրեր և

դաշույններ, ԼՀԳ, h. 9, 1981, էջ 85–96: *С. А. Есаян, М. Н. Погребова.* Скифские памятники Закавказья, М., 1985, էջ 40–52:

3. *Б. Б. Пиотровский.* Археология Закавказья, Л., 1949, ադ. 10. II: *А. А. Мартиросян.* Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, էջ 211, նկ. 83, էջ 272, նկ. 105, էջ 284, նկ. 110, ադ. XXX–XXXII: *С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян. А. Г. Канецян.* նշվ. աշխ., ադ. X, նկ. 6, 7: *Ս. Ս. Փիլիպոսյան.* Պեղումներ Սևանի կոլեկտորի Նորատուսի հատվածում, ՀՀԴԱՆԳՆ, ԶԹ, Ե., 1991, էջ 31: *Ն. Գ. Ենգիբարյան,* Ուրարտական դամբարաններ Նորատուսից, ՀՀԴԱՆԳՆ, ԶԹ, Ե., 1991, էջ 66–69:

4. *Б. Б. Пиотровский.* Ванское царство, М., 1959, ադ. 40–41: *А. А. Мартиросян.* Город Тейшебаини, Е. 1961, ադ.17:

5. *С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян, А. Г. Канецян.* նշվ. աշխ., ադ. XVIII: *H.- J. Kellner.* Grouping and Dating of Bronze Belts, UMCFM, Jerusalem, 1991, էջ 158–159, նկ. 5:

6. *L. Vanden Berghe, L. De Meyer.* Urartu een vergeten cultuur uit het Bergland Armenie, Gent 1982–1983, էջ 147, նկ. 61:

7. *А. А. Мартиросян.* Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, էջ 212, նկ. 84, ադ. XXI, նկ. 19, 20: *O. Tasyürek.* Dome Inscribed urartian Bronze Armour, Iraq, vol. 37, part 2, London, 1975, էջ 151–154, ադ. XXXII, նկ. c: *С. Г. Деведжян.* Лори Берд I, Е., 1981, ադ. 23, նկ. 1: *L. Vanden Berghe , L. De Meyer.* նշվ. աշխ., էջ 146–147, նկ. 57–59: *U. Seidl.* Horse Trappings, UMCFM, Jerusalem, 1991, էջ 79–81, նկ. 31–33: *Ս. Ս. Եսայան.* Կառամարտիկ զորամասերը և հեծելազորը Հին Հայաստանում, Ե., 1994, ադ. 8, նկ. 15, ադ. 11, նկ. 7, 12, 13, 15, 16:

8. *T. Özgüç.* Excavations at Altin tepe, TTKB, vol. 25, Ankara, 1961, էջ 272–278, նկ. 17: *Ս. Ս. Եսայան.* նշվ. աշխ., էջ 77–78, ադ. 28:

9. *С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян, А. Г. Канецян,* նշվ. աշխ., ադ. XII, նկ. 9: *R. Merhav.* Chariot Accessories, UMCFM, Jerusalem, 1991, էջ 71, նկ. 18, 88, նկ. 45:

10. *A. Parrot.* The Art of Assyria, New York, 1961, ադ. 345: *O. Tasyürek* . The urartian belts in the Adana Regional Museum, Ankara, 1975, ադ. 32: *O. Muscarella.* Bronze and Iron–Ancient Near Eastern Artifacts in the Metropoliten Museum of Art, New York, 1988, էջ 428, նկ. 576:

11. *R. Merhav.* նշվ. աշխ., էջ 64–65, նկ. a–b:

12. *T. Özgüç.* նշվ. աշխ., էջ 278, նկ. 16: *Б. Б. Пиотровский.* Ванское царство, М., 1959, էջ 178, նկ. 40: *B. Piotrovski.* Urartu, the kingdom of Van and its Art, New York, 1967, նկ. 107:

13. *С. Г. Деведжян.* Лори Берд I, Е., 1981, էջ 60, ադ. XXIII, նկ 4: *R. Merhav.* նշվ. աշխ., էջ 68–69, նկ. 15–16:

14. *A. Parrot.* նշվ. աշխ., ադ. 345: *P. Calmeyer, U. Seidl.* Eine Fruhurartäische Siegesdrstellung, AS, vol. 33, London, 1983, էջ 103–114, նկ. I: *R. Merhav.* նշվ. աշխ., էջ 54–55, նկ. 2, 3, էջ 312–313, նկ. 2 *E. Haerink* und *B. Overlaet.* Zur Funktion eingier urartäischer Bronzegegen էջ 131, նկ. 21, էջ 164–165, նկ. 97, 98:

15. *R. Merhav.* նշվ. աշխ., էջ 67–81, նկ. a–b:

16. *S. Miyashita.* La scène du banquet dans les ceintures urartéennes, BAOM, vol. 5, Tokyo, 1983, 299–300, ադ. 1: *C. Isik.* Tische und Tischdarstellung in der Urartäischen Kunst, TTKB, vol. 197, Ankara, 1986, էջ 413–445, նկ. 7, 8: *R. Merhav.* Secular and cultic Furniture, UMCFM, Jerusalem, 1991, էջ 252–253, նկ. 5/1:

17. *R. Barnett.* The excavations of the British Museum at Toprak-kale, near Van, «Iraq», vol. 12, part I, London, 1950, էջ 26–31, 40–43, ադ. 2–7, 11, 18–21: *R. Barnett.* The excavations of the British Museum at Toprak kale, near Van-Addenda, «Iraq», vol. 16, London, 1954, էջ 11–21, ադ. III: *B. Hrouda.* Die Kulturgeschichte des assyrischen Flashbildes, Bonn, 1965, ադ 13, 16: *C. A. Burney.* A first season of excavation at the Urartian Citadel of Kayhdere, AS, vol. 16, London, 1966, էջ 98–99, ադ. 21–23: *E. Akurgal* Urartäische und altiranische Kunstzentren, Ankara, 1968, էջ 37–38, 47–48, նկ. 55: *T. Özgüç.* Altin tepe II, Ankara, 1969, էջ 65–72, ադ. XIX–XXIV *Б. Б. Пиотровский.* Кармир Блур (альбом), Л , 1970, նկ. 72. 77 *R. Barnett.* More Addenda from Toprak-Kale, AS, vol. 22, London, 1972, էջ 171–175: *L. Vanden Berghe, L. De Meyer.* նշվ. աշխ., էջ 102, 181–186. նկ. 129–137: *Ս. Ս. Փիլիպոսյան,* Նորահայտ ուրարտական հուշարձաններ Երևանում, ՀՀԴԱՆԳՆ, ԶԹ, Ե., 1987 թ., էջ 35–37: *R. Merhav* նշվ աշխ էջ 246–261, լուսանկար 1–8:

18. *T. Özgüç.* նշվ. աշխ.. Ankara, 1961, էջ 283, նկ. 8: *C. A. Burney.* նշվ. աշխ., ադ. 21, նկ. 5, ադ. 23, նկ. 1, 2: *R. Merhav.* նշվ. աշխ., էջ 260–261 նկ. 7–9:

19. *G. Meyer.* Ein neuentdeckter urartäischer Brustschmuk, DA, Berlin 1955, էջ 210: *H.-J. Kellner.* Medalions and Pectorals, UMCFM, Jerusalem, 1991, էջ 166–167, նկ. 3: *R. Merhav.* նշվ. աշխ., էջ 247, նկ. 1–4

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՀԳ —«Լրաբեր հասարակական գիտությունների»

ՀՀԴԱՆԳՆ, ԶԹ—«Հայաստանի հանրապետությունում դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ»

ՊԲՀ—«Պատմա-բանասիրական հանդես»

БГМГ—«Вестник Государственного Музея Грузии»

СА—«Советская Археология»

AM—«Archaeologia Mundi»

AS—«Anatolian Studies»

BAOM—«Bulletin of the Ancient Orient Museum (Tokyo)

BAR —«British Archaeological Reports»

DA—«Das Altertum»

IA—«Iranica Antiqua»

SMEA—«Studi Micenei ed Egeo-Anatolici»

SRKK—«Studien zur Religion und Kultur Kleinasien»

TTKB —«Türk Tarih Kurumu Belleten»

UMCFM—Urartu. A Metalworking Center in the First Millennium B. C. E.

А. С. ПИЛИПОСЯН, Л. Е. ХАЧАТРЯН

ВАНТОСПСКОЕ ПЕЩЕРНОЕ ЗАХОРОНЕНИЕ ГЕХОВИТА

РЕЗЮМЕ

Осенью 1979 г., при строительстве дороги близ села Геховит Мартунийского района РА., у дороги, ведущей от озера Севан к Селимскому перевалу, неподалеку от холма Ал берд, было разрушено пещерное захоронение. Сохранившийся инвентарь этого богатого захоронения состоит из железных (акинак, копья) и бронзовых (удила, панцирная бляха) предметов вооружения и конского снаряжения, металлических частей боевой колесницы (дышло, крепления колес, массивный железный гвоздь), мебели (ножки, втулки, обивка стульев, табурет, тренога и. т. д.), бытовой посуды (фрагменты керамических сосудов, бронзового кувшина) и предметов украшения (бронзовые браслеты, стеклянные бусы, костяные подвески типа "домино").

Аналогичный материал из Эребуни (Арин берд), Тейшебаини (Кармир блур), Аргиштихинили (Армавир), Вана, Алтын-тепе, Бостан-кая, Каялидере, Адилджеваза (Арцке), Чавуш-тепе (Айкаберд) позволяет предположить, что в Геховитской пещере был захоронен представитель знати Ванского царства, и датировать захоронение концом 8-го–первой половиной 7-го веков до н. э.

A. S. PILIPOSIAN, L. E. KHATCHATRIAN

VANTOSPIAN ROCK-CUT TOMB AT GEKHOVIT

SUMMARY

In 1979, in Martouni region (Armenia), on the territory of the village Gekhovit (Sevan basin) at the slope of a hill named AI berd, by accident was discovered a rock-cut tomb.

In the tomb was found a very rich collection of archaeological objects: iron akinak and spears, bronze horse trappings, harness, fitting-disk examples, chariot accessories, parts of furniture, legs encasings, corner pieces, sheathings and foliate circlets of thrones, footrests, tables, chaires and tripod, stands, utensils, broken parts of clay and bronze jugs. The adornments were of bronze armlets, beads of glass and bone pendents of «domino» type.

Similar archaeological objects discovered in Erebouni (Arin berd), Teyshebainie (Karmir Blur), Argishtihinili (Armavir), Van, Altin tepe, Bostan-kaya, Kayalidere, Adildzevaz (Artske), Tchavoush-tepe (Haykaberd), provied the opportunity to claim that in the Gekhovit tomb was buried a high class person of great importance in Van's Kingdom. The rock-cut tomb of Gekhovit is dated by it's direct analogues mentioned above the end of the VIII and I half of the VII century B. C.

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Սպառազինության նմուշներ (Գեղիովիտ)
1. Դաշույն-ակինակ, 2-3. Նիզակներ, 4. Կապարճ, 5. Ճարմանդ
Աղյուսակ 2. Սպառազինության նմուշներ (Գեղիովիտ)
1-3. Ձիասանձերի մասեր
Աղյուսակ 3. Մարտակառքի մասեր (Գեղիովիտ)
1. Փականաձև հարմարանք, 2. Ձիու կիսարձան, 3. Անուրաձև կապ
Աղյուսակ 4. Մարտակառքի, կահույքի եւ սպառքի մասեր (Գեղիովիտ)
1, 3. Փոկերի բաժանարարներ, 2. Կահույքի ծայրապանակներ, 4. Կահույքի կիսագլանաձև մաս, 5. Թիկնակի կամ արմնկակալի ծայրապանակ, 6. Բրոնզե սափորի վերնամաս
Աղյուսակ 5. Վանտոսպյան և ատուրական մարտակառքերի պատկերներ
1. Նեմրութ, պալատի որմնանկար (*R. Merhav.* 1991, էջ 55), 2. Մարտակառքի անվի վիրակազմություն (*R. Merhav.* 1991, էջ 62), 3. Տեսարան Կարլսռուեում պահվող բրոնզե լանջապանակից (*P. Calmeyer, U. Seidl.* 1983, նկ. 1), 4. Մարտակառքի պատկեր (*R. Merhav.* 1991, էջ 78), 5. Հատված Ադանայի գավառական թանգարանում պահվող գոտու տեսարանից (*O. Tasyürek*, 1975, աղ. 32)
Աղյուսակ 6. Կահույքի ոտքերի երեսպատումներ (Գեղիովիտ)
Աղյուսակ 7. Կահույքի ոտքերի երեսպատումներ (Գեղիովիտ)
Աղյուսակ 8. Կահույքի մասեր (Գեղիովիտ)
1. Գահավորակի երեսպատումներ, 2-3. Հարդարանքի նմուշներ
Աղյուսակ 9. Գահավորակների, եռոտանիների, պատվանդանի պատկերներ և վերականգնումներ
1. Նեմրութ, պալատի որմնանկար (*B. Hrouda.* 1965, աղ. 16), 2. Վան (վերակազմություն) (*E. Akurgal.* 1968, նկ. 55), 3. Ալթին-թեփե (վիրակազմություն) (*T. Özgüç.* 1969, աղ. XIX), 4. Հատված Տոկիոյում պահվող գոտու տեսարանից (*S. Miyashita.* 1983, աղ. 1), 5. Ալթին-թեփե (*B. Piotrovsky.* 1967, նկ. 26), 6. Սոթքիի հատկանշական ցուցակում հրատարակված հայերու վրա արված պատկեր (Merhav R. 1991a, էջ 253), 7,9. Ա-դիլջևազ–Արծկե (վիրակազմություն) (*C. Isik.* 1986, նկ. 7,8), 8. Ճմին (Ալթին-թեփե) (դամբարան 3-րդ) (*R. Merhav.* 1991, էջ 252)
Աղյուսակ 10. Վանտոսպյան գահավորակների պատկերներ
1. Տոկիոյի գոտու վրա (*S. Miyashita.* 1983, աղ. 1), 2. Արծաթե կիսալուսնաձև կախիկի վրա (*H.-J. Kellner.* 1991, էջ 166, նկ. 2), 3. Վան, արծաթե կիսալուսնաձև կախիկի վրա (*Meyer G.* 1955, էջ 209), 4. Պատկեր գոտու վրա (*P. Calmeyer.* 1991, էջ 317, նկ. 4), 5. Արծաթե մեդալիոնի վրա (*H.-J. Kellner.* 1991, էջ 167, նկ. 3), 6. Բրոնզե թիթեղի վրա (*R. Barnett.* 1954, աղ. XI), 7,8. Բրոնզե թիթեղի վրա (Merhav R. 1991a, էջ 247, 249), 9. Վան-Թոփրակ-կալե (*G. Meyer.* 1955, էջ 210)
Աղյուսակ 11. Պերճանքի առարկաներ (նկ. 1–2), բրուտագործության նմուշներ (նկ. 3-4), մարտակառքի մաս (նկ. 5) (Գեղիովիտ)



ԱՂՅՈՒՍԱԿ I



ԱՂՅՈՒՍԱԿ 2





ԱՂԱՅՈՒՄԱԿ 3

1



2



3

ԱՂՅՈՒՍԱԿ 4



1. 2 3

4 5 6

ԱՂՅՈՒՍԱԿ 5



ԱՂՅՈՒՍԱԿ 6

ԱՂՅՈՒՍԱԿ 7



1

2

3

ԱՂՅՈՒՍԱԿ 8



1

2



3

ԱՂՅՈՒՍԱԿ 9



1



2



3



4

5

6



7

8



9

ԱՂՅՈՒՍԱԿ 10



1

2

3



5

4



6

7

8

9

ԱՂՅՈՒՍԱԿ II

Ա. Ս. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ, Լ. Ե. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԵՂՀՈՎՏԻ ՎԱՆՏՈՍՊՅԱՆ ՎԻՄԱՓՈՐ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Սևանա լճի հարավ-արևմտյան ափից մոտ 5 կմ հարավ, լճից դեպի Սելիմի լեռնանցքը տանող ճանապարհի աջ կողմում, ներկայիս Մարտունու շրջանի Գեղհովիտ գյուղի տարածքում, «Ալ բերդ» անունը կրող բլրի հյուսիսային ստորոտին, 1979 թ. աշնանը, նոր կամրջի շինարարության ժամանակ, պատահաբար բացվեց վանտոսպյան վիմափոր մի դամբարան: Նրա պարունակությունը կազմող հնագիտական նյութերի պահպանված մասը գյուղի բնակիչների և սույն հոդվածի հեղինակների կողմից հավաքվեց և տեղափոխվեց Հայաստանի պատմության պետական թանգարան (ՀՊՊԹ, հավաքածու 2695):

Տեղանքի ուսումնասիրությունից պարզվեց, որ դամբարանի համար հարմարեցվել և օգտագործվել է հողմահարման հետևանքով տեղ-տեղ մասամբ քայքայված ժայռի արևելյան լանջին բացված բնական խոռոչը, որը, ըստ գյուղի բնակիչների հաղորդման, ունեցել է մոտ 3,0 մ երկարություն, 1,5—2,0 մ լայնք, մոտ 2,0 մ բարձրություն, կողմնորոշված է եղել հյուսիսից հարավ և արևելյան կողմից ունեցել է կամարաձև մուտք: Նման բնական երեք խոռոչներ այժմ էլ պահպանվում են ավերված դամբարանից մի քանի մետր հեռավորության վրա: Ըստ որում դրանցից ամենախոշորի կամարաձև առաստաղի հարավային հատվածում և հյուսիսային պատի հիմնամասում փորված արհեստական բացվածքները վկայում են, որ ժամանակին անձավներն ըստ ամենայնի հաղորդակցման նեղ միջանցքներ են ունեցել:

Վիմափոր դամբարանները վանտոսպյան թաղման ծեսի կարևոր ատրիբուտներից են, հաճախ բաղկացած են եղել մի քանի սրահներից և մասնագետների կարծիքով ամփոփել են Վանի արքաների, ավնվատոհմիկների և բարձրաստիճան անձանց աճյունները: Նման դամբարաններ հայտնի են Վան, Ալիշար, Բոստան-կալա, Կալալի-դերե, Հայկաբերդ (Չավուշ-թեփե), Մանավկերտ, Սանգար, Արգիշթիխինիլի, Թեյշեբաինի (Կարմիր բլուր) հնավայրերից և վերաբերում են մ. թ. ա. 9—7-րդ դարերին[1]:

Գեղհովտի վիմափոր դամբարանից սերող հնագիտական իրերի հավաքածուն ըստ վերջիններիս կիրառական հատկանիշների պայմանականորեն կարելի է բաժանել 4 խմբի:

Առաջին խմբում առանձնանում են սպառազինության հետ առնչվող նյութերը, որոնցում հատկապես աչքի է ընկնում հորիզոնական ձողաձև վերնամասով, ուղիղ, կենտրոնում ակոսավոր բռնակով և սրտաձև խաչարդով երկաթե դաշույնը (շեղբը խիստ վատ է պահպանվել): Նրա նմանակները մասնագիտական գրականության մեջ հայտնի են «ակինակ» անվամբ (աղ. 1, նկ. 1): Նման դաշույններն ու սրերը լայն տարածում ունեն Կովկասի (Բրիլի, Թլի, Սուխում, Մախարո, Ծիծամորա, Ծոպի, Դվանի, Գուադիխու, Նիգվզիանի) և Հայկական լեռնաշխարհի (Կարմիր բլուր, Մուսիերի, Ստեփանակերտ, Գետաբեկ, Սամթավրո) համաժամանակյա հնագիտական հուշարձաններում, ըստ մասնագետների իրենց վրա կրում են սկյութական զինագործության առանձնահատկությունները և թվագրվում են մ. թ. ա. 7—5-րդ դարերով[2]: Դաստակի կառուցվածքով Գեղհովտի դաշույնը հատկապես մոտ է մ. թ. ա. 7-րդ դարի հնագիտական համալիրներից (Թեյշեբաինի, Բրիլի, Սամթավրո) հայտնաբերված օրինակներին:

Սպառազինության հաջորդ նմուշները 27-28 սմ երկարություն ունեցող, խողովակակոթառ երկաթե երկու նիզակներն են (աղ. 1, նկ. 2, 3): Դրանցից առաջինը ուռուցիկ կենտրոնական ողով օժտված տերևաձև լեզվակ ունի, իսկ երկրորդը հատույթում շեղանկյունաձև է: Նման նիզակները լավ հայտնի են Հայկական լեռնաշխարհի (Կարմիր բլուր, Երևանի Ավտոագրեգատ գործարանի դամբարան, Էրեբունի, Գյումրի, Խրտանոց, Կուրթան, Դեբեդ) և մասնավորապես Սևանի ավազանի (Նորատուս, Արծվաքար, Կարմիրգյուղ, Սարուխան) համաժամանակյա հնագիտական համալիրներից և թվագրվում են մ. թ. ա. 8—7-րդ դարերով[3]:

Սպառազինությանն են վերաբերում նաև Գեղհովտից հայտնաբերված բրոնզե կապարճի բեկորները (աղ. 1, նկ. 4): Դրանցից մեկը, ըստ ամենայնի, կապարճի վերին եզրի մասն է կազմել, դրվագված հորիզոնական երկու ողերով բաժանված է գոտիների և վերինի մակերեսին գագաթներով իրար ուղղված փորագիր եռանկյունների հորիզոնական շարքեր է կրում: Այս նախշը հանդիպում է նաև Կարմիր բլուրից հայտնաբերված կապարճների վրա և մեծ մասամբ երիզում է մարտակառք և կառամարտիկներ ներկայացնող փորագիր տեսարանը[4]: Նույն նախշն են կրում նաև Երևանի Ավտոագրեգատ գործարանի տարածքում պեղված վանտոսպյան դամբարանից հայտնաբերված, ինչպես նաև Ստամբուլի թանգարանում պահվող և Սարդուրի 2-րդի սեպագիր արձանագրությունը կրող գոտիների բեկորները[5]: Գեղհովտի վիմափոր դամբարանից հայտնաբերված սպառազինության օրինակների մեջ առավել մեծաքանակը ձիու ասպագենի և մարտակառքի տարբեր մասերի բրոնզե և երկաթե մնացորդներն են: Ասպագենի և հանդերձանքի մեջ առանձնանում են երեք տարբեր սանձերի մասերը (աղ. 2, նկ. 1—3): Դրանցից առաջինն օղակաձև վերջույթներ ունեցող երկաթե երկմաս

ներկայացվող տվյալներն ունեն տարածական սփռվածություն՝ Արգիշթիխինիլի (Այրարատ), Արտաշավան (Նիգ), Նորատուս, Գեղհովիտ (Գեղարքունիք), որոնց խմբավորման միակ հիմքը պատմամշակութային մեկ ամբողջության պատկանելու պարագան է (մ. թ. ա. 8—6-րդ դարերում տարածքը Վանի թագավորության մի մասն էր կազմում): Այդ պատճառով Ուրարտուին նախորդող վաղ երկաթի դարաշրջանի մ. թ. ա. 11—9-րդ դարերի նյութերի հետ համեմատական վերլուծությունները նպատակահարմար է իրագործել ոչ թե ըստ առանձին հուշարձանների (Ակունք, Արթիկ, Ցամաքաբերդ, Հոռոմ), այլ թվարկված հուշարձաններից հայտնաբերված գանգերի միջինացված ցուցանիշների տատանման տրամաչափի հետ՝ այն ընդունելով որպես ստանդարտ, որի հենքի վրա կարելի է դիտարկել ուրարտական դարաշրջանի գանգերի ձևաբանական տարբերությունները կամ ընդհանրությունները: Նշենք, որ համադրվող ցուցանիշները՝ որպես պատմական սկզբնաղբյուրներ, միանգամայն համարժեք են:

Աղյուսակ 1

N ըստ Մարտինի	կանայք			տղամարդիկ		
	min	Ուրարտու	max	min	Ուրարտու	max
1.	174,4	176,7	182,0	185,0	186,4	194,7
8.	134,5	135,4	137,1	138,4	139,3	144,2
8/1.	73,9	75,4	77,3	73,7	74,7	79,3
17.	126,0	130,0	130,0	134,7	133,6	139,7
9.	94,1	96,5	99,0	98,3	96,0	100,7
45.	122,8	117,1	127,3	130,1	129,4	137,2
48.	66,5	68,3	71,3	71,1	75,4	78,0
51.	41,3	40,0	43,0	41,5	41,8	45,3
52.	34,1	32,6	35,1	32,7	33,6	33,7
54.	23,5	23,7	24,5	23,3	23,8	25,3
55.	49,4	49,4	52,0	51,2	52,0	53,6
77.	136,3	137,9	139,2	132,5	141,5	137,9
<ZM.	117,6	118,1	122,0	116,3	125,1	122,6

Համեմատական վերլուծությամբ (աղ. 1) տղամարդկանց խմբերի համար ռանձնացվեցին ուրարտական հավաքածուի առավել նեղադիմությունը (45), դիմային կմախքի հորիզոնական անկյունների (77) փոփոխությունը, ճակատոսկրի (9) ու գանգասկավառակի (17) տրամագծերի ավելի փոքր չափերը: Նույն համեմատությունը կանանց խմբերի համար, բացի այտոսկրային տրամագծից (45), բացահայտեց այլ տարբերություններ: Միջինացված ցուցանիշների վերը նշված տարբերությունները չնչին են, և համեմատությունների այս մակարդակում խոսել որևէ էական շեղման մասին այնքան էլ ճիշտ չի լինի: Յուրաքանչյուր հատկանիշի, ըստ խմբերի կուգորդման, տվյալներն ունենալու համար (հաշվարկված է Պիրսոնի բանաձևով) ընտրված են ուրարտական դարաշրջանին անմիջականորեն նախորդող Հոռոմի և Նորատուսի վաղ երկաթեդարյան հավաքածուները (աղ. 2):

Ուրարտական դարաշրջանի գանգաբանական նյութն իր ընդհանուր ձևաբանական նկարագրով տարբերվում է Հոռոմի հավաքածուից՝ այտոսկրային

Աղյուսակ 2

N ըստ Մարտինի	Նորատուս 1		Նորատուս 2		Ուրարտու		Հոռոմ	
	X	n	X	n	X	n	X	n
	Տղամարդկանց խումբ							
1.	187,8	5	190,8	6	186,4	9	190,4	18
8.	141,0	6	141,4	7	139,3	10	140,8	17
8/1.	76,1	5	73,3	6	74,7	9	74,0	17
17.	133,6	5	136,4	5	133,6	8	136,9	11
9.	96,6	5	96,8	5	96,0	9	98,5	17
45.	130,5	4	136,5	6	129,4	7	134,4	15
48.	76,0	3	73,6	6	75,4	5	74,4	9
77.	142,0	5	138,0	5	141,1	9	137,9	18
<zm.	125,0	3	122,2	5	125,1	6	122,6	7
51.	41,7	3	41,9	6	41,8	6	41,5	9
52.	34,7	3	32,6	6	33,7	6	33,7	10
54.	24,5	2	25,0	6	25,2	5	23,8	11
55.	53,7	3	51,3	6	52,0	6	52,5	10
	Կանանց խումբ							
1.	176,7	3	186,2	8	179,1	9	182,0	15
8.	135,3	3	134,4	8	135,4	8	134,5	15
8/1.	75,2	3	72,2	8	75,4	7	73,9	13
17.	137,5	2	126,9	7	130,0	6	128,4	10
9.	99,7	3	95,5	8	96,5	10	94,1	14
45.	117,0	4	123,1	7	117,1	10	127,3	14
48.	65,3	3	68,9	7	68,3	7	70,4	7
77.	138,7	3	135,7	8	137,9	8	136,3	12
<zm.	121,0	1	121,6	5	118,1	4	117,6	7
51.	39,0	3	40,4	7	40,0	8	41,3	8
52.	32,3	3	33,6	7	32,6	8	34,1	9
54.	23,0	3	24,3	6	23,7	7	23,5	8
55.	46,8	3	49,9	7	49,4	7	51,1	8

տրամագծի (45), գանգատուվի երկարությունը (1) և բարձրությունը (17) բնորոշող հատկանիշների ավելի փոքր ցուցանիշներով, այսինքն՝ որոշակի նրբակազմությամբ: Միջինացված ցուցանիշների մեկ այլ վիճակագրական կուգորդում, որը հնարավորություն է տալիս գնահատելու յուրաքանչյուր հատկանիշի տարբերության չափը, տղամարդկանց և կանանց խմբերի համար բացահայտեց միևնույն՝ այտոսկրային տրամագծի (45) տարբերության հավաստիությունը (աղ.3):

Աղյուսակ 3

N ըստ Մարտինի	Նորատուս 1 / Նորատուս 2				Հոռոմ / Ուրարտու			
	տղամարդիկ		կանայք		տղամարդիկ		կանայք	
	t_i	t_{st}	t_i	t_{st}	t_i	t_{st}	t_i	t_{st}
1.	0,81	2,31	2,42	2,26	1,60	2,06	1,19	2,07
8.	0,04	2,20	0,28	2,26	0,75	2,06	0,68	2,08
17.	0,90	2,31	2,81	2,37	1,45	2,11	0,66	2,14
9.	0,07	2,31	1,44	2,26	0,08	2,06	1,35	2,07
45.	1,82	2,31	2,03	2,26	2,14	2,09	5,13	2,07
48.	1,17	2,37	1,37	2,31	0,43	2,18	1,03	2,18
51.	0,16	2,37	1,19	2,31	0,32	2,16	1,14	2,10
52.	1,56	2,37	0,53	2,31	0,00	2,14	1,62	2,13
54.	0,34	2,45	1,08	2,37	1,44	2,14	0,23	2,16
55.	1,36	2,37	1,66	2,31	0,39	2,14	1,22	2,16
77.	1,43	2,31	1,01	2,26	1,78	2,06	0,80	2,10
<zm.	0,71	2,45	0,10	2,78	0,83	2,20	0,15	2,26

Վերլուծությունների նման արդյունքներ ունենալով՝ կարելի է հաստատագրել, որ ուրարտական դարաշրջանի մարդկանց գանգերը բնութագրվում են ցայտուն նրբակազմությամբ, որով և առանձնանում են մինչուրարտականներից: Այս տարբերությունը մեկ անգամ ևս փաստվում է, երբ համեմատում ենք նույն

դամբանադաշտի երկու տարբեր՝ ուրարտական և մինչ-ուրարտական խմբային թաղումներից հայտնաբերված նյութերի համարժեք հավաքածուները: Խնդրո առարկա նյութերի ընդհանուր գանգվածից առանձնացրել ենք ուրարտական մեկ առանձին խմբային թաղման (Նորատուս 1) գտածոները՝ որպես դիտարկումների համեմատական միավոր: Նույն դամբանադաշտի մինչուրարտական մեկ խմբային թաղումից գտնված գանգերը (Նորատուս 2) ուսումնասիրել է Վ. Ալեքսանը[6]: Հարկ է նշել, որ վերջինս, հենվելով ամբողջ դամբանադաշտի համար Հ. Մարտիրոսյանի մշակած ժամանակագրության վրա, տվել է նյութի անորոշ թվագրություն՝ մ. թ. ա. 10—6-րդ դդ.: Հ. Մարտիրոսյանի ուսումնասիրած Նորատուսի դամբանային համալիրները թվագրված են վաղ երկաթի դարաշրջանով[7]: Նորատուսում հեղինակի պեղած նյութերում ուրարտական շրջանին բնորոշ գտածոներ չկան: Հետևաբար, կարող ենք վստահ լինել, որ հիշյալ հավաքածուն ուրարտական թաղումներից չի հայտնաբերվել: Նորատուս 1-ի գանգերը Նորատուս 2-ից տարբերվում են հատկանիշների ճիշտ այն համակարգով (1, 17, 45), որոնք առանձնացան Հոռոմի և ուրարտական դարաշրջանի գանգերի միջինացված ցուցանիշների առադրության ժամանակ (աղ. 3): Թեև այս տարբերությունները վիճակագրորեն չեն արժեքավորվում (երկու գանգաբանական խմբերն էլ փոքրաթիվ են, քանակը չի բավարարում նյութի ներկայացուցչականության պահանջներին, իսկ այն բանաձևը, որով առադրվում և ստորաբաժանվում են զուգորդվող տվյալները, պայմանավորված է դիտարկումների թվով), միջին ցուցանիշների սոսկ ակնադիտական համեմատությամբ անգամ ուրարտական դամբարանում թաղվածների նեղադիմությունը ակնհայտ է: Այսպիսով, նույն դամբանադաշտի ժամանակի առումով անմիջականորեն իրար հաջորդող երկու խմբային թաղումներից գտնված նյութերի առադրումը մեկ անգամ ևս հաստատում է ուրարտական դարաշրջանի հավաքածուի հարաբերական նրբակազմությունը: Միջինացված ցուցանիշների համեմատական վերլուծությունից զատ, առադրել ենք նաև հատկանիշների տատանման տրամաչափը՝ որպես համեմատական ֆոն օգտագործելով նույն Հոռոմի նյութերի տվյալները: Տղամարդկանց խմբերի անհատական ցուցանիշների համեմատության գրաֆիկական պատկերը պարզորոշ ցուցադրում է ուրարտական հավաքածուի գրեթե բոլոր հատկանիշների (անհատական տվյալների նվազագույն և առավելագույն արժեքների չափերի) համամասնությունը համեմատվող նյութերի նույնատիպ տատանման տրամաչափի որոշակի հատվածի հետ, բացի գանգատուփի և ճակատոսկրի լայնական տրամագծից (8,9), տանձաձև բացվածքի երկարությունից (55): Տարբերությունները չեն գերազանցում երեք միլիմետրը: Կանանց խմբերի համեմատության ժամանակ նվազագույն չափերը գերազանցող հատկանիշների թիվն ավելի մեծ է՝ դիմային կմախքի բոլոր հատկանիշները (45, 48, 51, 52, 54, 55): Ինչպես երևում է գրաֆիկական պատկերից, հատկապես այտոսկրային տրամագիծը (45) նվազագույն չափի տեսակետից շեղում է տալիս (նկ.1):

Այսպիսով միակ հավաստի տարբերությունը, որը հաջողվեց բացահայտել տարբեր մակարդակներում կատարված համեմատական վերլուծության ընթացքում, ուրարտական ժամանակաշրջանի գանգաբանական ընտրույթի նեղադիմությունն է, որով այն տարբերվում է անմիջականորեն նախորդող պատմահնագիտական փուլի (վաղ երկաթի դար) նմանօրինակ նյութերից: Այս գանգաբանական տրամաչափը (45) կարգաբանական (տաքսոնոմիական) բարձր արժեք ունի: Վերջինս կարևոր հատկանիշներից է (եթե ոչ ամենակարևորը), որի նվազման միտումը բնորոշում է նրբակազմության շրջափուլային ձևավոխությունը: Նշենք, որ ցանկացած շրջափուլային ձևավոխություն (գրացիլիզացում, բրախիկեֆալացում, աքսելերացում) պանէյկումենե գործընթաց է, ունի համամարդկային դրսևորում:Բնական է, որ կենսաբանական բնույթի այս հսկա գործընթացի լայն հունի մեջ էթնիկական տեղաշարժերի և պատմական այլ իրադարձությունների դերի բացահայտումը յուրաքանչյուր դեպքում կոնկրետ մոտեցում և հիմնավորում է պահանջում: Կարելի՞ է արդյոք տարածաշրջանում այս կարճ ժամանակահատվածում տեղի ունեցած ձևակազմական փոփոխությունը՝ դիմային կմախքի նեղացումը, մեկնաբանել այլ մարդկային խմբերի ներհոսքով՝ հատկապես նկատի առնելով այն հանգամանքը, որ, շեշտելով հատկանիշի տաքսոնոմիական բարձր կարգը, հաճախ մարդաբանական վերլուծությունների ժամանակ այն դիտարկել են որպես էթնոտարբերակիչ ցուցանիշ[8]: Դժբախտաբար Արևմտյան Հայաստանի տարածքից մ. թ. ա. 8—6-րդ դարերի հնամարդաբանական նյութեր գիտական շրջանառության մեջ չեն դրված, և անհրաժեշտ համեմատական տվյալներ չունենք: Ուստի վերլուծության տվյալների մեկնության համար առանձնահատուկ կարևորություն է ստանում խնդրո առարկա հնամարդաբանական հավաքածուներ պարունակող համալիրների մշակութաժամանակագրական պատկանելության հարցերի լուսաբանումը: Դամբանային կառույցների ու թաղման ձևերի համեմատական քննությունը հնարավորություն է տվել վաստակելու, որ Վանի թագավորության տարածքից հայտնի թաղումներն ունեին «սկզբունքային տարբերություններ, որոնք պայմանավորված էին, թերևս, տերության էթնիկական, հասարակական-տնտեսական և մշակութային անհամասեռությամբ»[9]:

Քննարկվող խմբային դիաթաղումներով համալիրները կառուցողական առանձնահատկություններով ոչ միայն ուրույն ձևաբանական միավորներ են, այլև ծագման ու տարածման որոշակի արեալներ ունեն: Ներկայացվող նյութին առնչվող հարցադրումներից ելնելով՝ կարելի է մասնավորել հետևյալը:

ա) Ուրարտական վերնախավի համար կանոնական են համարվում հատկապես վիմափոր անձավներում կատարված թաղումները, ինչպիսին է Գեղհովտի դամբարանը: Ցավոք այն կողոպտված էր, և դատողու-

թյուններ անել թաղվածների կարգավիճակի շուրջ, ըստ համալիրի նյութերի, հնարավոր չէ: Հարուստ և շքեղ գույքով նույնատիպ դամբարանի առկայությունը Գեղիովտում[10] վկայում է, որ Ալ բերդ ամրոցի շրջակայքում ուրարտական հրեելիներին վայել կարգով բնորոշ թաղումներ են կատարվել: Վիմափոր անձավներում թաղումների մանրամասն վերլուծությունը տրված է Մ. Մելքոնյանի ուսումնասիրության մեջ[11]: Հարկ է միայն նշել, որ թաղման վերոհիշյալ կարգը տարածաշրջանին հատուկ չէ և հանդես է գալիս մ. թ. ա. 8-րդ դարից, երբ այն ընդգրկվում է Վանի թագավորության կազմում:

բ) Հայաստանի տարածքում պեղված ամենավաղ կարասային թաղումները մինչ օրս փաստագրվել են միայն Արգիշթիխինիլիում: Հ. Մարտիրոսյանի կարծիքով, նրա արևմտյան թաղամասի շինությունների տակ ընկած այս թաղումները պատկանում են քաղաքը կառուցող գերիներին[12]: Վերջին տարիներին բավականին հարուստ գույքով կարասային թաղումներ են պեղվել, որը հիմք է տալիս ենթադրելու վերաբնակիչների առկայություն այս տարածքում՝ ոչ միայն գերու և կամ ստրուկի կարգավիճակով: Հարկ է նշել, որ մինչուրարտական հուշարձաններում կարասային թաղումներ հայտնի չեն և մ. թ. ա. 8-րդ դարից սրանց հանդես գալը հնարավոր է բացատրել բացառապես Վանի թագավորների՝ երկրի տարբեր հատվածներից կամ ռազմական արշավանքներից հետո բնակչության հոծ զանգվածներ վերաբնակեցնելու քաղաքականությամբ: Կարասային թաղումները մ. թ. ա. 3-րդ հազարամյակից լայնորեն տարածված են Միջագետքի, Ասորիքի, Փոքր Ասիայի արևմտյան և կենտրոնական շրջաններում[13]: Ակնհայտ է, որ Արգիշթիխինիլիում կարասներով թաղված մարդկանց մինչև վերաբնակեցվելը պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհին հարավ-արևմուտքից, և արևմուտքից սահմանակից տարածքներում: Այդ են վկայում նաև Արգիշթի 1-ինի՝ Խաթե և Ծուպա երկրներից մեծ քանակությամբ մարդկանց վերաբնակեցնելու հիշատակությունը, ինչպես և այն հանգամանքը, որ նրբակազմ մարդաբանական տիպերը գերազանցապես զբաղեցրել են Առաջավոր Ասիայի տարածքը, ընդհուպ մինչև Հայկական լեռնաշխարհ[14]:

գ) Նորատուսի և Արտաշավանի դամբանադաշտերում «ուրարտական» թաղումները կատարվել են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի քարաբկղային դամբարաններում: Ցուրաքանչյուր նոր թաղման դեպքում նախորդները չեն խաթարվել: Խմբային թաղումներ կատարելու համար նույն դամբանի բազմակի օգտագործումը (գույքը բնութագրում է տարածքի մշակութաժամանակագրական տարբեր փուլերը) այն հուշարձաններին բնորոշ երևույթ է[15]: Թաղման ավանդական կարգի շարունակական պահպանումն ուրարտական ժամանակաշրջանում թերևս պատահական չէ և կարող է բացատրվել միայն թաղման ծեսի նույնականությամբ:

Դամբանային համալիրների այս համառոտ վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ նշվածներում առանձնանում են՝

1) վանտոսպյան մշակույթին բնորոշ հուշարձանները (Գեղիովիտ), որոնք փաստում են այդ մշակույթի էլիտար լինելու պարագան,

2) վանտոսպյան մշակույթին բնորոշ՝ վերաբնակիչների թաղման ծեսի առանձնահատկությունները փաստող հուշարձանները (Արգիշթիխինիլի): Հնամարդաբանական տվյալները, սեպագիր հիշատակություններին և հնագիտական համեմատական զուգահեռներին աղերսվելով, մեկ անգամ ևս վկայում են լեռնաշխարհին արևմուտքից և հարավ-արևմուտքից սահմանակից տարածքներից մարդկանց հոծ խմբերի վերաբնակեցման հնարավորությունը,

3) տարածաշրջանին բնորոշ դամբանային հուշարձանները, որոնցում փաստվում է բիայնական և տեղական մշակույթների փոխներթափանցման պարագան:

Ուրարտական մշակույթի դրսևորման այս համայնապատկերն ունենալով՝ հարկ է նշել նաև, որ հուշարձաններից գտնված մարդաբանական նյութերի առանձնահատկությունը փաստվեց մեկ հատկանիշով (այտոսկրային տրամագիծ՝ 45): Մնացած բոլոր չափագրական տվյալների առաջադրման ամբողջական պատկերը խոսում է երկաթի դարի (ներառյալ Ուրարտուն) մ. թ. ա. 11—6-րդ դդ. մարդաբանական տիպի համասեռության մասին: Հատկապես ընդգծվում է Հայաստանի գանգաբանական հավաքածուներին բնորոշ (վաղ բրոնզի դարից մինչև մեր օրերը), ձևակազմական առումով գերակա հատկանիշի՝ երկարադիմության (դիմային կմախքի բարձրության՝ 48) անփոփոխ լինելը: Փաստ, որ հնարավորություն է տալիս տարածքի մ. թ. ա. 8—6-րդ դդ. մարդաբանական նյութերում նկատվող փոփոխությունները բացատրելու տեղական հիմնաշերտի մեջ մարդաբանական այլ՝ նրբակազմ տիպի ներթափանցմամբ:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ հնամարդաբանական նյութերի վերլուծությունը հնարավորություն է տալիս մ. թ. ա. 8—6-րդ դդ.-ում տարածաշրջանի համար փաստելու մարդաբանական նոր տիպի ներհոսքը և որպես արդյունք տեսնելու նրա սերտաճը տեղական հիմնաշերտի մեջ: Որոշ փոփոխություններով հանդերձ, գերակա է մնում հիմնաշերտը: Հնագիտական նյութերի վերլուծությունը հնարավորություն է տալիս մ. թ. ա. 8—6-րդ դդ.-ում տարածաշրջանի համար փաստելու կաղապարված ու կանոնիկ մշակույթի հզոր ներթափանցումը: Սկզբնական փուլում այն թերևս պարտադրվում է քաղաքներում կենտրոնացված վերաբնակիչներին: Հետագայում նկատվում է բիայնական և տեղական մշակույթների փոխներթափանցում:


№ ԸՍՏ ՄԱՐՏԻՆԻ
Min
Max
1
176 203
179 193
8
134 149
131 151
17
125 151
125 138
9
95 105
92 102
10
114 134
114 129
45
125 142
127 134
48
67 81
70 79
51
39 45
41 43
52
31 37
31 35
55
49 57
48 55
54
22 25
22 27
ԿՎԵՅՈՒՆՏ
1
173 190
170 192
8
129 141
130 141
17
119 138
121 141
9
88 102
90 102
10
105 124
110 125
45
123 131
104 130
48
65 78
63 72
51
40 43
38 44
52
32 35
31 35
55
49 54
47 51
54
21 26
20 30
ԺՅՈՂՈՎ
ՀՈՌՈՄ
ՈՒՐԻԼՐՏՈՒ

Նկ. 1

ՄԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Н. Р. Кочар, Р. А. Мкртчян, А. К. Паликян.* Краниологическая характеристика материалов урартских погребений с территории Армении (հոդվածը հանձնված է հրատարակության):

2. *С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян, А. Г. Канецян.* Биайнская гробница в Ереване, «Археологические памятники Армении», 15, вып. II, Е., 1991; *Ս. Գ. Հմայակյան,* Իշպուինե և Մինուա արքաների բարեփոխումների ծրագիրն ու բիայնական պետության և մշակույթի գոյացումը, «ՀՀ 1991–1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի թեզիսներ», Ե., 1994, էջ 18–22:

3. *С. А. Есаян* и др., նշվ. աշխ.:

4. *Н. Р. Кочар* и др., նշվ. աշխ.:

5. *В. П. Алексеев.* Происхождение народов Кавказа, М., 1974.

6. *В. П. Алексеев.* նշվ. աշխ., էջ 96:

7. *А. А. Мартиросян.* Армения в эпоху бронзы и раннего железа, Е., 1964, с. 193–196, 208–210.

8. *В. П. Алексеев.* նշվ. աշխ., М. Г. Абдушелишвили. Таксономическое значение скулового диаметра для антропологической классификации современного населения Кавказа, «Труды МОИП», Т–XIV, с. 190–207.

9. *С. А. Есаян* и др., նշվ. աշխ., էջ 31:

10. Տես սույն գիրքը՝ *Ս. Ս. Փիլիպոսյան, Լ. Ե. Խաչատրյան,* Գեղիովտի վանտոպյան վիմափոր դամբարանը:

11. Տես սույն գիրքը՝ *Ս. Մելքոնյան,* Ուրարտուի ժայռափոր դամբարանները:

12. *А. А. Мартиросян.* Аргиштихинили. Е., 1974, с. 50–53.

13 *Б. А. Куфтин.* Археологические раскопки в Триалети, т. I, Тб., 1941, с. 34; *О. Р. Герни.* Хетты. М., 1987, с. 146–150, *W. L. Wooley.* The Neo-Babylonian and Persian periods. Ur excavations,1962, vol. 11, p. 52–53.

14. *M. Cappieri.* The mediteranean racein asia before the iron age. Fild research project, ocasional paper, 8, Miomi, Florida, 1969.

15. *Ս. Ս. Փիլիպոսյան,* Պեղումներ Սևանի ավազանի կոլեկտորի Նորատուսի հատվածում, «ՀՀ 1989–1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքներին նվիրված գիտական նստաշրջանի թեզիսներ», Ե., 1991, էջ 29–31, *Ն. Գ. Ենգիբարյան,* Ուրարտական դամբարաններ Նորատուսից, նշվ. թեզիսների ժողովածու, էջ 66–69:

МКРТЧЯН Р. А., АВЕТИСЯН П. С.

ПАЛЕОАНТРОПОЛОГИЧЕСКИЕ МАТЕРИАЛЫ ИЗ УРАРТСКИХ ПОГРЕБЕНИЙ В ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКОМ КОНТЕКСТЕ 8—6 ВВ. ДО Н. Э.

РЕЗЮМЕ

Сравнительный анализ урартских и доурартских палеоантропологических материалов с территории Армении выявил относительную грациль-ность первых, проявляющуюся особенно в уменьшении скулового диаметра.

Эта специфика антропологических материалов региона, в сочетании со сведениями клинописных источников и археологической информацией, еще раз подчеркивает возможность перемещения населения из западных областей Армянского нагорья и приграничных территорий.

Необходимо отметить также, что вышеотмеченная специфика антропологического материала зафиксирована одним признаком (скуловой диаметр— 45).

Сопоставление всех остальных метрических данных говорит о гомогенности антропологического типа населения Армении эпохи железа (включая урартский период), т. е. на протяжении 11—6 вв. до н. э.

Особенно подчеркивается неизменность морфологической доминанты—высоколицести (верхняя высота лица—48), характерной для краниологических серий Армении от эпохи ранней бронзы до наших дней.

R. A. MKRTCHIAN, P. S. AVETISIAN

THE PALAEOANTHROPOLOGICAL MATERIALS FROM URARTIAN TOMBS IN THE HISTORICAL AND ARCHAEOLOGICAL CONTEXT FROM 8TH—6TH CENTURIES B. C.

SUMMARY

The comparative analysis of Urartian and pre-Urartian palaeoanthropological materials from Armenia reveal a relative gracility of the formers and is especially displayed in the decrease of bezigomatic bearth.

This specification of anthropological material of the region combined with the cuneiform inscriptions and archaeological facts, once again emphasize the possibility of migration from western districts of the Armenian Highland and the borders.

It is necessary also to note, that the specifics of anthropological materials mentioned above are fixed by a single feature (bezigomatic bearth).

The comparison of all the other metric facts confirm the homogenuity of the Armenian population's anthropological type in Iron Age (including the Urartian period), that is the 11th—6th centuries B. C.

The invariability of morphological dominant—high-face (the upper height 48) is characteristic for the craniological series of Armenia from Early Bronze Age until the present.

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

(Վերջաբանի փոխարեն)

Յուրաքանչյուր մասնավոր փաստի ուսումնասիրում, ինքնին ուշագրավ լինելուց զատ, մի ուղի է, որն ի վերջո տանում է դեպի հիմնադրույթային խնդիրների պարզաբանում: Կա և հակադարձ կապ. շատ հաճախ գոյություն ունեցող հիմնադրույթներով է պայմանավորվում փաստացի նյութի ուսումնասիրությունից բխող եզրակացությունների բովանդակությունը: Այդ իսկ նկատառումով այստեղ երկու խոսքով կցանկանայի անդրադառնալ Վանի թագավորության քաղաքական ու մշակութային զարգացման երկու կարևորագույն փուլերի քննությանը:

Այժմ կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ առնվազն մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջին Հայկական լեռնաշխարհում արդեն ձևավորվել էին մի շարք քաղաք-պետություններ[1], որոնցից Հայկական Տավրոսի լանջերին՝ Վանա ծովակից հարավ և հարավ-արևելք դեռևս 13-րդ դարում վկայված և Վանա լճի ավազանում ձևավորված քաղաք-պետությունները, ինչպես ենթադրվում է, ասուրական սպառնալիքը միահամուռ ուժերով վանելու համար միավորվեցին մեկ պետության կազմում: Այն ուներ ինքնանուն՝ Բիայնիլի: Մեռի դռան արձանագրության[2] տվյալների համաձայն, այդ իշխանություններից յոթի կենտրոնները՝ Արդինին (Մուծաձիր), Կումենուն (Հայկական Տավրոսում), Տուշպան (Վան), Արծունիուինին, Նիշիադուրունին (Բերկրիի դաշտ(՞)), Էրիդիան (Սիփան սարի վրա), Ուիշինին (Վանա լճի արևելյան ափ), ուրարտական վարչակազմում ունեին հատուկ, այլ բնակավայրերից տարբեր կարգավիճակ[3]: Այս իշխանություններից մի մասի բնակչությունը խուռիական էր (օրինակ՝ Կումենուինը), մյուսներինը՝ հնդեվրոպական, մասնավորապես՝ հայկական (օրինակ՝ Էրիդիաինը): Բիայնիլիի մշակույթում այս էթնիկական անհամասեռությունը արտացոլված է չափազանց վառ. երկրի պետական լեզուն պատկանում էր խուռի-ուրարտական լեզվաընտանիքին, մինչդեռ դիցաբանի կառուցվածքն[4] ու ծիսական շատ մանրամասեր (խոսքը նախ և առաջ դիակիզմամբ թաղման ծեսի մասին է) ունեն հնդեվրոպական բնութագիր: Ընդ որում, ուրարտական շատ դիցանուններ ստուգաբանվում են հայերենով[5]:

Այսպիսով, ակնհայտ է, որ առաջարկվում է Բիայնիլի անվանել իշխանությունների այս միությունը՝ ձևավորված մ. թ. ա. 9-րդ դարում: Սրանից բխող ու Հայաստանի հնագետների կողմից առաջարկված «բիայնական[6] կամ վանտոսպյան[7] մշակույթ» հասկացության բովանդակության ձևակերպման խնդիրը ավելի բարդ է և անմիանշանակ: Վանտոսպյան մշակույթ հասկացության առայժմ միայն զուտ աշխատանքային ձևակերպումը կարող է լինել հետևյալը. ուրույն, էլիտար, պետական մշակույթ՝ ձևավորված Իշպուինի և Մինուա արքաների բարեփոխումների ծրագրի[8] իրագործմանը զուգահեռ, մ. թ. ա. 9-րդ դարի վերջին քառորդին, Վանա լճի ավազանում:

Վանտոսպյան մշակույթի տարածման սահմանները մեծանում էին երկրի սահմանների ընդլայնմանը համընթաց: Եվ քանի որ սա պետական մշակույթ էր, ապա նրա ավարտն էլ կապված է Վանի թագավորության վերացման հետ:

Վանտոսպյան մշակույթի տարածմանը համընթաց՝ լեռնաշխարհում սկսեց ձևավորվել մեկ այլ կենսաձև, որը հակված ենք անվանելու «ուրարտական մշակույթ»: Ուրարտական մշակույթի գոյացումն արդյունք էր «տեղական» անվանված և վանտոսպյան մշակույթների փոխներթափանցումների և ուրարտական տերության կազմավորման ու գոյատևման ընթացքում լեռնաշխարհում առաջացած անտիպ էթնիկական ու քաղաքական իրադրությամբ պայմանավորված այդ մշակույթների ադապտացիայի: Սա ավելի երկար գոյատևեց, և ըստ էության այն անհրաժեշտ է դիտել որպես հայկական մշակույթի զարգացման փուլերից մեկը:

Համապատասխանաբար, առաջարկվում է «Ուրարտու» ասելով նկատի ունենալ մ. թ. ա. 8-րդ դարում արդեն ձևավորված այս տերությունը, որի սահմաններում էր ընդգրկված գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Ըստ էության պայմանական, սակայն նաև պատմականորեն օտար աղբյուրներում վկայված այս անունով նշվող երկրի գոյատևման ժամանակագրական սահմանը մ. թ. ա. 6-րդ դարի առաջին քառորդն է:

Հաճախ Ուրարտու տերության քաղաքական ու տնտեսական հաջողությունների գագաթնակետ են համարվում Վանի հրկու արքաների՝ Արգիշթի 1-ինի (մ. թ. ա. 786—764 թթ.) և Սարդուրի 2-րդի (մ. թ. ա. 764—735 թթ.) գահակալության տարիները: Սակայն ստուգապես գիտենք միայն, որ այս արքաները իսկապես չափազանց շատ են պատերազմել և անչափ շատ եռանդ են դրսևորել իրենց նվաճումները պահպանելու համար: Բայց, ինչպես վկայում են հետագա իրադարձությունները, սույն պատկերացումը միայն մասամբ է ստուգ, քանի որ մ. թ. ա. 735 թվականին ուրարտական տերությունը կազմալուծվում է[9]: Չի կազմալուծվում, սակայն, իշխանությունների նախկին միությունը՝ Բիայնիլին, որի ուժերով էլ հենց, ամենայն հավանականությամբ Ռուսա 1-ինին (մ. թ. ա.

735—714 թթ.), հաջողվում է վերամիավորել երկիրը[10]: Այս ընթացքում էլ տերությունը գոյատևում է հիմնականում Վանի արքաների երբեմն անսպառ թվացող ռազմական ուժի շնորհիվ: Ռուսայի գահակալության վերջին տարում, սկզբում երկրի հյուսիսային, ապա և արևելյան սահմաններին հայտնվում է մի նոր ախոյան՝ կիմերները: Օգտվելով կիմերական արշավանքներին ընդդիմացող ուրարտական պետության ծանր վիճակից՝ հարավից դեպի Ուրարտու են արշավում ասորեստանցիները: Այս պատերազմում Ռուսան պարտվում է և ինքնասպան է լինում: Քիչ ավելի ուշ սկսվում են սկյութական արշավանքները[11]: Եվ զարմանալին այն է, որ հենց այս թոհուբոհում հանկարծ ուսումնասիրողի աչքի առջև հառնում է իր ուրույն մշակութային թարմաշունչ կյանքով ապրող Ուրարտուն. կրկին հկոր են Վանի արքաները, հաջողությամբ են պսակվում նրանց ռազմական գործողությունները, հիմնվում են նոր քաղաքներ, փորվում են ջրանցքներ, կառուցվում են ջրամբարտակներ, մշակվում է ամուլ հողը, ծաղկում են արհեստները ու առևտուրը[12]:

Սովորաբար ուրարտական պետության կործանումը կապվում է քոչվորների՝ հիմնականում սկյութների արշավանքների հետ: Սակայն վերը հիշատակված իրադարձությունների հակիրճ թվարկումն իսկ վկայում է դեպքերի այլ ընթացքի մասին: Ըստ երևույթին, ինչպես մ. թ. ա. 13—9-րդ դդ. շարունակվող ասուրական արշավանքները նպաստեցին Բիայնիլիի ձևավորմանը, այնպես էլ կիմերասկյութական ճնշմանը միասնաբար դիմադրելու անհրաժեշտությունը նպաստեց լեռնաշխարհի (մասնավորապես՝ էթիունիի) իշխանությունների հավանաբար կամավոր միավորմանը Վանի արքաների շուրջ: Ստեղծված ներքաղաքական բարենպաստ իրավիճակով էին պայմանավորված ինչպես Ուրարտուի հետագա հաջողություններն արտաքին քաղաքականության ասպարեզում, այնպես էլ մշակութային կյանքի առաջընթացը: Մասնավորապես, թուլանում է մ. թ. ա. 9—8-րդ դդ. դիտվող մշակութային հակամարտությունը[13], և թվում է, թե հենց մ. թ. ա. 7-րդ դարի առաջին յոթանասունամյակն է ուրարտական տերության ներքաղաքական ու մշակութային ամենաներդաշնակ զարգացման ժամանակաշրջանը: Քաղաքական ու մշակութային հակամարտության այս մեղմացումը ուղեկցվում էր էթնիկական հանդուրժողականությամբ: Ստեղծված իրադրությունը բնականաբար նպաստեց և լեռնաշխարհի տարէթնիկ բնակչության էլ ավելի մերձեցմանը, որի արդյունքը հայտնի է. մ. թ. ա. 2-րդ դարում, ինչպես վկայում է Ստրաբոնը, Մեծ Հայքի բնակչությունն արդեն խոսում էր մեկ ընդհանուր լեզվով[14]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *Р. М. Торосян, Л. А. Петросян.* Этапы развития материальной культуры Ширакаванского поселения, «Культурный прогресс в эпоху бронзы и раннего железа» (тезисы докладов), Е., 1982, с. 147– 148; *И. М. Дьяконов.* Урарту, Фригия, Лидия, «История древнего мира», М., 1989, с. 52–54.

2. *Г. А. Меликишвили.* Урартские клинообразные надписи, М., 1960, N 27.

3. *Ս. Գ. Հմայակյան,* Հայկ Նահապետի մասին առասպելն ու Կիրշա քաղաքը Նիբուրի լեռներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, հ. 1, էջ 128–131: *Simon Himayakian.* Urartu-Vermächtnisse einer Hochkultur. Wietcrentdecung einer alten Kulturlandschaft, Bochum, 1995, S. 49–54.

4. *Ս. Պետրոսյան,* Լեռնաբանական և առասպելաբանական տրվյալներն Ուրարտուի տիրապետող տարրի էթնոգենեզի վերաբերյալ, «Հայ ժողովրդի մշակույթի հետազոտման հարցեր (մշակույթ և լեզու)», ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 7-րդ կոնֆերանս, Ե., 1988, էջ 57–60:

5. *Գ. Բ. Ջահուկյան,* Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Ե., 1987, էջ 427–445, *Գ. Բ. Ջահուկյան,* Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, հ. 1, էջ 43–58: .

6. *С. А. Есаян, Л. Н. Биягов, С. Г. Амаякян, А. Г. Канецян.* Биайнская гробница в Ереване, Е., 1991, с. 26.

7. Անվան «վանտոսպյան» տարբերակը առավել ընդունելի է թվում մի քանի տեսակետներից. նախ՝ «Վանը» «Բիայնիլի» անվան հայերեն տարբերակն է, երկրորդ՝ Տուշպա (Տոսպ) էր անվանվում երկրի մշակութային խոշորագույն կենտրոնն ու մայրաքաղաքը, և, վերջապես, միջնադարում երբեմն Վանտոսպ էին կոչվում Վան (Տուշպա) քաղաքը և այն եզերող գավառը (տես *Թովմա Արծրունի* և *Անանուն,* Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 102, 104, 206, 234, 338 և այլուր), որի սահմաններում էին գտնվում Բիայնիլիի առաջին պեղված և նկարագրված հուշարձանները՝ Վանի ժայռի քարայրերն ու արձանագրությունները և Թոփրակ-կալեն (Ռուսախինիլի):

8. *Ս. Գ. Հմայակյան,* Իշպուինի և Մինուա արքաների բարեվտխումների ծրագիրն ու բիայնական պետության և մշակույթի գոյացումը, «Հայաստանի հանրապետությունում 1991–1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան՝ ձոնված Գ. Ա. Տիրայանի հիշատակին», Ե., 1994, էջ 18–22:

9. *Б. Б. Пиотровский.* Ванское царство, М., 1959, с. 83.

10. Նույն տեղում, էջ 87–92:

11. *Ս. Տ. Երեմյան,* Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, հ. 2, էջ 89–115: *Б. Б. Пиотровский.* նշվ. աշխ., էջ 99–103, 232–256: *А. И. Иванчик.* Киммерийцы и Урарту накануне восьмого похода Саргона II, «Вестник древней истории», 1990, N 3, с. 3–19.

12. УКН, NN 276, 278, 280, 281, 288, 296 և այլն: *К. Ф. Аеман-Хаупт.* Вступительная лекция по истории и культуре халдов, «Труды Тбилисского гос. университета», 1938, N 6, с. 265; *Б. Б. Пиотровский.* Кармир-блур I, Е., 1950, с. 7–85.

13. Էթիունիում այս ժամանակ դիտվող մշակութային անհանդուրժողականության առանձին դրսևորումների մասին տես *Գ. Ս. Տիրայան, Գ. Ե. Արեջյան,* Հնագիտությունը և Ուրարտու—Հայաստան պրոբլեմը, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, հ. 3, էջ 72: Ընդ որում, էթնիկական ու մշակութային անջրպետը հաղթահարելու առաջին փորձը կատարեց Արգիշթի I-ինը՝ Էրեբունիում տաճար ձոնելով իր համար օտար և ոչ բիայնական Իվարշա աստծուն (տես *Н. В. Арутюнян.* Новые урартские надписи Кармир-блура, Е., 1966, с. 94):

14. Strabo, XI, 14, 5.

ՍԻՄՈՆ ՀՄԱՑԱԿՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մոնթե Մելքոնյան, Ուրարտական ժայռափոր դամբարանները. նկարագրություն և վերլուծություն 5
Մոնթե Մելքոնյան 7
Ինստիտուտի կողմից 9
Երկու խոսք 11
Ներածություն 11
Գլուխ առաջին. Ուրարտական ժայռափոր դամբարանների համառոտ նկարագրություն 14
Գլուխ երկրորդ. Ուրարտական ժայռափոր դամբարանների և այլ կառույցների փոխառնչությունների շուրջ 20
Գլուխ երրորդ. Կառուցման համակարգը. տնտեսական և քաղաքական տեսանկյուններ 22
Գլուխ չորրորդ. Դամբարանների բաղկացուցիչ մասերը, դրանց գործառական և պաշտամունքային նշանակությունը 25
Գլուխ հինգերորդ. Ծագումը և ազդեցությունը 30
Եզրակացություններ 35
Ս. Ա. Եսայան, Լ. Ն. Բիյագով, Ս. Գ. Համայակյան, Ա. Գ. Կանեկյան, Երևանի բիայնական դամբարանը 55
Ա. Ս. Փիլիպոսյան, Լ. Ե. Խաչատրյան, Գեղիովտի վիմափոր դամբարանը 80
Ռ. Ա. Մկրտչյան, Պ. Ս. Ավետիսյան, Ուրարտական դամբարանների հնամարդաբանական նյութերը մ. թ. ա. 8—6-րդ դդ. պատմահնագիտական կոնտեքստում 98
Ուրարտական պետության և մշակույթի ձևավորման խնդրի շուրջ (վերջաբանի փոխարեն) 105

[650դ]

Հրատարակիչ՝ «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես:
Հրատարակչական խումբ. քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր *Հ. Ս. Քոթանջյան* (ղեկավար),
Վ. Խ. Բաղդասարյան (խմբագիր), *Դ. Ս. Չիլինգարյան* (խմբագիր),
Ռ. Խ. Գևորգյան (տեխնիկական և գեղարվեստական խմբագիր),
Ս. Հ. Նարազյան (ձևավորող նկարիչ):

Համակարգչային աշխատակազմ. *Ս. Հ. Աթոյան* (համակարգչային գեղարվեստական ձևավորում),
Մ. Հ. Թադևոսյան, Ռ. Ե. Ղարիբյան,
Բ. Զ. Ասատրյան, Մ. Ս. Բահրիկյան, Ս. Ս. Կյուրեղյան, Է. Ս. Մարգարյան:

Издатель: военно-научный журнал "Айкакан банак".
Издательская группа: доктор политических наук, профессор Г. *С. Котанджян*
(руководитель),
В. Х. Багдасарян (редактор), *Д. С. Чилингарян* (редактор),
Р. Х. Геворгян (технический и художественный редактор),
С. О. Наразян (художник-оформитель)

Компьютерный персонал: *С. О. Атоян* (компьютерное художественное оформление),
М. А. Тадевосян, Р. Е. Гарибян,
К. З. Асатрян, М. С. Байрикян, С. С. Кюрегян и Э. С, Маргарян

Հանձնվել է շարվածքի 5.06.1995: Ստորագրվել է տպագրության 29.06.1995: Թուղթը՝ օֆսեթային:
Ֆորմատը՝ 60x90 1/8: Հրատարակչական 13,0 մամուլ (7,5-ը՝ տեքստ, 5,5-ը՝ նկարներ), պայմանական տպագրական 13,5 մամուլ:
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 300: Գինը՝ պայմանագրային:
Շարվածքը կատարվել է ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ հաշվողական կենտրոնում:
Տպագրվել է Մխիթար Սեբաստացու անվան կրթական համալիրի տպարանում:

Сдано в набор 5.06.1995. Подписано к печати 29.06.1995. Бумага офсетная.
Формат 60×90 1/8. Издательских 13,0 листов (7,5 текста, 5,5 рисунков). Условно-печатных 13,5 листов.
Шрифт "Таймс" и "Балтика". Печать офсетная. Тираж 300. Цена договорная.
Набор осуществлен в ВЦ ГШ ВС РА.
Напечатано в типографии образовательного комплекса им. Мхитара Себастаци.

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0078056